

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ



ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ - ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ.

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՈՒՄ

№ 16-17

2016

ԵՐԵՎԱՆ 2016

Գլխավոր խմբագիր՝ Գագիկ ՄԵԼԻՔՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ՝ Համլետ ԴԱՎԹՅԱՆ

Խմբագրական խորհուրդ՝

Լևոն ՄԿՐՏՉՅԱՆ - ԿԳ նախարար
Մանուկ ՍԿՐՏՉՅԱՆ - ԿԳ փոխնախարար
Արմեն ՓԱՇԱՅԱՆ - ԳԹԿ փոխտնօրեն
Արսեն ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ - ԳԹԿ փոխտնօրեն
Ալեքսան ԵՍԱՅԱՆ - ԳԹԿ թեստաբանության բաժնի պետ
Կարո ՆԱՍԻԲՅԱՆ - ԳԹԿ քննությունների կազմակերպման բաժնի պետ
Էդվարդ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ - ԳԹԿ իրավաբանական բաժնի պետ
Համլետ ԴԱՎԹՅԱՆ - ԳԹԿ հրատարակչական բաժնի պետ
Աշոտ ԴԱԶԱՐՈՍՅԱՆ - ԳԹԿ հրատարակչական բաժնի գլխավոր
մասնագետ

Խմբագրական կազմ՝

Լուիզա ՍԱԹՎՈՍՅԱՆ
Սիբայել ԽՈՍՐՈՎՅԱՆ

Խմբագրության հասցեն՝

Երևան, Այգեստան 9/4
Հեռ. (+374 10) 55-32-65
E-mail: gtk2005@web.am
www.atc.am

Հանրակրթության որակի գնահատման ազգային համակարգի ձևավորման Հայաստանի փորձը*

1. Ներածություն

1991 թվականին Հայաստանում կատարվեցին կրթության որակի գնահատման (ԿՈԳ) ոլորտում բարեփոխումների իրականացման առաջին քայլերը: Մասնավորապես, ներբուհական ընդունելության քննությունների համակարգից անցում կատարվեց կենտրոնացված արտաքին քննությունների՝ Հայաստանի պետական բուհեր ընդունվելու համար: Թեև ներկայիս չափանիշներով այն տարիների կենտրոնացված քննությունները, ամենայն հավանականությամբ, թեստաբանական իմաստով ոչ բավարար չափով էին հուսալի և բոլորովին հավաստի չէին (տե՛ս, օրինակ, [25]), սակայն դա օբյեկտիվ և որակյալ ԿՈԳ համակարգի կայացմանն ուղղված էական քայլ էր:

Հանրակրթության որակի գնատարման ազգային համակարգի (ՀՈԳԱՀ) կայացման նոր փուլը 2001-2005 թվականներն էր: Հենց այդ ժամանակաշրջանում պլանավորվեցին (տե՛ս [5]) կիրառվող ԿՈԳ համակարգի էական փոփոխությունները և դրվեցին նախատեսված ծրագրերի իրականացման հիմքերը: Մշակվեց գնահատման նոր համակարգի հայեցակարգը (տե՛ս [12]) և պլանավորվեցին նոր ՀՈԳԱՀ-ի հետևողական ներդրման ժամկետները: Գնահատման նոր համակարգի ներդրման առաջին

* Հոդվածը գրվել է ՌԴ կառավարության <<Ազգային հետազոտական համալսարան - Տնտեսագիտության բարձրագույն դպրոց>> բարձրագույն մասնագիտական կրթության դաշնային պետական ինքնավար կրթական հաստատության պատվերով:

քայլերից մեկը Հայաստանի մասնակցությունն էր 4-րդ և 8-րդ դասարանների աշակերտների համար մաթեմատիկայից և բնագիտական առարկաներից TIMSS (Trends in Mathematics and Science Study) 2003 միջազգային հետազոտությանը (տե՛ս [26, 27]):

Բարեփոխումների իրականացման ուղղությամբ էական արդյունք կարելի է համարել 2004-2005 թվականներին Գնահատման և թեստավորման կենտրոնի (ԳԹԿ) ստեղծումը (տե՛ս [13]), որը երկու տարվա ընթացքում կազմակերպեց և 2007 թվականին իրականացրեց (տե՛ս [15]) առաջին միասնական քննությունը գնահատման նոր համակարգով՝ համատեղելով ավարտական և ընդունելության նպատակները:

Դրան զուգահեռ աշխատանքներ սկսվեցին միջնակարգ դպրոցի վերակառուցման ուղղությամբ: 2006-2007 ուստարում Հայաստանում սկսվեց 10-ամյա կրթության համակարգից 12-ամյա կրթության անցումը (տե՛ս [11, 22, 23]): Արդյունքում սահմանվեցին դպրոցական կրթության 3 աստիճաններ՝

- ա) տարրական դպրոց՝ 4 տարի (1-4-րդ դասարաններ),
- բ) միջին դպրոց՝ 5 տարի (5-9-րդ դասարաններ),
- գ) ավագ դպրոց՝ 3 տարի (10-12-րդ դասարաններ):

Տարրական դպրոցի նպատակը (տե՛ս [11, 22]) աշակերտների մտավոր, հոգևոր և ֆիզիկական կարողությունների, տրամաբանական մտածողության, գրագիտության և սկզբնական մասնագիտական ունակությունների հիմքերի ձևավորումն է: Միջին դպրոցում ուսուցման հիմնական նպատակը մարդու, բնության և հասարակության մասին գիտելիքների յուրացումն է այնպիսի մակարդակով, որը հնարավորություն կտա կիրառելու ստացված գիտելիքներն առօրյա կյանքում, շարունակելու կրթությունը ավագ դպրոցում կամ մասնագիտական ուսումնական հաստատություններում, կամ էլ զբաղվելու այդ տարիքային խմբին համապատասխանող մասնագիտական գործունեությամբ: Ավագ դպրոցի հիմնական նպատակը սովորողներին մասնագիտական կրթություն, գիտելիքներ տալն է, նրանց մեջ ինքնուրույն կյանքի համար անհրաժեշտ կարողություններ և հմտություններ ձևավորելը:

Ամփոփիչ ստուգումն ու կրթական մի աստիճանից մյուսին անցումը կատարվում է ավարտական քննությունների միջոցով (տե՛ս 4.1): Պետական ավարտական քննությունների կանոններն ու ժամկետները սահմանվում են ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով (տե՛ս [14, 20]):

Գնահատման գործիքներն ու իրականացման քայլերը մշակվում են ՀՀ կառավարության աշխատակազմի Գնահատման և թեստավորման կենտրոնի մասնագետների կողմից:

Հայաստանում գործում են 1437 հանրակրթական ուսումնական հաստատություններ: Նրանց բաշխվածությունն ըստ մարզերի (տարածաշրջանների) ներկայացված է հետևյալ աղյուսակում:

Աղյուսակ 1. Հայաստանում հանրակրթական հաստատությունների թիվը 2014-2015 ուստարում:

Մարզը (տարածաշրջանը)	Հիմնական հանրակրթական ծրագրերով ուսումնական հաստատություններ								
	Ընդհանուր		Մասնագիտական		Հատուկ		Ընդամենը		
	պեո.	ոչ պեո.	պեո.	ոչ պեո.	պեո.	ոչ պեո.	պեո.	ոչ պեո.	ընդամենը
Երևան	201	35	6	2	13	0	220	37	257
Արագածոտն	121	0	0	0	1	0	122	0	122
Արարատ	112	0	0	0	0	0	112	0	112
Արմավիր	118	2	1	0	2	0	121	2	123
Գեղարքունիք	125	0	0	0	1	0	126	0	126
Լոռի	162	1	2	0	3	0	167	1	168
Կոտայք	100	1	3	0	1	0	104	1	105
Շիրակ	163	4	2	0	2	0	167	4	171
Սյունիք	117	0	0	0	4	0	121	0	121
Վայոց Ձոր	50	0	0	0	0	0	50	0	50
Տավուշ	81	1	0	0	0	0	81	1	82
Ընդամենը	1350	44	14	2	27	0	1391	46	1437

Աղբյուրը՝ ՀՀ ԿԳՆ պաշտոնական կայք

Այս դպրոցներում սովորում է 11 4402 աշակերտ: Հետևյալ աղյուսակում ներկայացված է նրանց բաշխվածությունը ըստ Հայաստանի մարզերի և ըստ սեռերի:

Աղյուսակ 2. Հայաստանի հանրակրթական հաստատությունների սովորողների թիվը 2014-2015 ուստարում:

Մարզը (տարածաշրջանը)	Սովորողների թիվը					
	Պետ. դպրոցներ		Ոչ պետ. դպրոցներ		Ընդամենը	
	աղջիկներ	ընդամենը	աղջիկներ	ընդամենը	աղջիկներ	ընդամենը
Երևան	51879	107968	2908	6434	54787	114402
Արագածոտն	8104	17483	0	0	8104	17483
Արարատ	15358	32017	0	0	15358	32017
Արմավիր	15376	33050	193	396	15569	33446
Գեղարքունիք	13587	29301	0	0	13587	29301
Լոռի	14342	29698	20	62	14362	29760
Կոտայք	16061	33573	55	130	16116	33703
Շիրակ	14361	30205	194	413	14555	30618
Սյունիք	8083	16451	0	0	8083	16451
Վայոց Ձոր	2994	6518	0	0	2994	6518
Տավուշ	7806	15765	50	95	7856	15860
Ընդամենը	167951	352029	3420	7530	171371	359559

Աղբյուրը՝ ՀՀ ԿԳՆ պաշտոնական կայք

2. Դպրոցական կրթության որակի գնահատման համակարգի ընդհանուր բնութագիրը

2001 թվականին ընդունվեց 2001-2005 թթ. Կրթության զարգացման պետական ծրագրի հաստատման մասին ՀՀ օրենքը (տե՛ս [5]): Կրթության մասին խնդիրների թվում նախատեսվում էին էական միջոցառումներ ԿՈԳ նոր համակարգի կայացման ուղղությամբ: Հետևյալ աղյուսակը վերցված է այդ ծրագրից:

Աղյուսակ 3. 2001-2005 թթ. ՀՈԳԱՀ-ի բարեփոխման միջոցառումներ:

Միջոցառման անվանումը	Կատարման ժամկետը
Գիտելիքների գնահատման ժամանակակից համակարգի ներդրում	2001-2005 թթ.
ա) գիտելիքների գնահատման կենտրոնի ստեղծում	2001 թ.
բ) գնահատման համակարգի մշակում և ներդրում	2002 թ.
գ) գիտելիքների գնահատման ազգային հետազոտության անցկացում	2003 թ.
դ) գիտելիքների համազգային մշտադիտարկման անցկացում	2004 թ.
ե) մասնակցություն միջազգային հետազոտություններին	2004-2005թթ.

Աղբյուրը՝ ՀՀ խորհրդարանի տվյալները

Նախատեսված միջոցառումներն իրականացնելու համար ՀՀ ԿԳՆ-ում ստեղծվեց Կրթական ծրագրերի կենտրոնը (տե՛ս [5]), որը իրականացնում էր (իրականացնում է մինչ այժմ) ՀՈԳԱՀ-ի կայացման կոնկրետ ուղղությունների հետ կապված ֆինանսա-կազմակերպչական գործառույթներ:

Աղյուսակ 3-ում ներկայացված նպատակները առավել ենթադրում են երկարատև գործընթացներ, քան կոնկրետ միջոցառումներ: Այդուհանդերձ, Աղյուսակ 3-ի բոլոր նպատակները (ժամկետների որոշ փոփոխությամբ), այս կամ այն աստիճանի ավարտունությամբ, իրականացվեցին. նոր ՀՈԳԱՀ, ընդհանուր առմամբ, ներդրվեց, ստեղծվեց Գնահատման և թեստավորման կենտրոնը, սկսվեցին ազգային հետազոտությունների գործիքակազմերի մշակման նախնական աշխատանքները, Հայաստանը մասնակցեց TIMSS ծրագրի 2003 թվականի միջազգային հետազոտությանը:

Դեռևս 2004 թվականին ՀՈԳԱՀ-ի բարեփոխումները ներառվեցին ՀՀ կառավարության *առաջնային խնդիրների* ցանկում (տե՛ս [10]): Դրավկայությունն է ՀՀ խորհրդարանի կողմից ԿՈԳ կրթական ծրագրերի երկրորդ ծրագրի ֆինանսավորման հաստատումը (տե՛ս [17]) և ԳԹԿ-ի ամենամյա բյուջետային ծախսերի հաստատումը ՀՀ պետական ծախսերի միջնաժամկետ ծրագրերի շրջանակում (տե՛ս, օրինակ, [24]): Եվ վերջապես, ՀՈԳԱՀ-ի կայացման կարևորությունը արձանագրված է կրթության զարգացման պետական ծրագրերի հաստատման մասին ՀՀ օրենքներում (տե՛ս [5,6]):

ՀՈԳԱՀ-ի հիմնական նպատակներն ու խնդիրները տեղ էին գտել ՀՀ կառավարության կողմից հաստատված սովորողների գիտելիքների

գնահատման հայեցակարգում (տե՛ս [12]): Դրանց թվում կարելի է առանձնացնել հետևյալները. հանրակրթական դպրոցների աշակերտների առաջադիմության ներդասարանական ընթացիկ գնահատմանն ուղղված միջոցառումների կազմակերպումն ու իրականացումը, պետական ավարտական և միասնական քննությունների կազմակերպումն ու իրականացումը, տարբեր հանրակրթական առարկաներից ազգային մշտադիտարկային հետազոտությունների իրականացումը, տարբեր միջազգային հետազոտությունների մասնակցությունը և այլն:

2.1 Նորմատիվա-իրավական կարգավորումը

Հայաստանում ՀՈԳԱՀ-ի համակարգի կայացման հիմնական փուլերը և բարեփոխումների իրականացման կոնկրետ քայլերն արտացոլված են հետևյալ նորմատիվա-իրավական փաստաթղթերում:

ՀՀ Սահմանադրություն (տե՛ս [1])՝ ՀՀ հիմնական օրենք: Ըստ ՀՀ Սահմանադրության 39-րդ հոդվածի՝ ՀՀ յուրաքանչյուր քաղաքացի ունի կրթության իրավունք: Այդ թվում նաև անվճար միջնակարգ կրթության և բարձրագույն կրթության՝ *մրցույթի հիման վրա*: Այսպիսով, ընդունելության քննությունների հիմնական սկզբունքը՝ մրցակցականությունը, սկզբից ևեթ առկա է ՀՀ Սահմանադրության մեջ, իսկ հետագա քայլերի նպատակը այդ սկզբունքի որակյալ և արդարացի իրականացումն է:

ՀՀ օրենքները (տե՛ս [2-6])՝ ընդունված ՀՀ խորհրդարանի կողմից.

ա. Կրթության մասին: Այս օրենքը կարգավորում է պետական քաղաքականության սկզբունքները և կրթական համակարգի կազմակերպա-իրավական ու ֆինանսական խնդիրները: 15-րդ հոդվածը նվիրված է ուսուցման հաջորդ աստիճան ընդունելության հարցերին:

բ. Հանրակրթության մասին: Այս օրենքը կարգավորում է հանրակրթության համակարգի սկզբունքներն ու հարաբերությունները: Հոդված 6-ը նվիրված է պետական չափորոշիչներին, Հոդված 7-ը՝ հանրակրթական ծրագրերին և ուսուցման աստիճաններին: Հոդված 18-ը կարգավորում է ընթացիկ առաջադիմության գնահատման, ուսուցման որոշակի աստիճանի ավարտման սկզբունքները:

գ. Բարձրագույն և հաջորդող մասնագիտական կրթության մասին: Այս օրենքը կարգավորում է բարձրագույն կրթության համակարգի և հաջորդող մասնագիտական կրթության կազմակերպչական, իրավական և ֆինանսական հարաբերությունները: Հոդված 14-ը կարգավորում է պետական և ոչ պետական բուհեր ընդունելության հարցերը:

դ. 2001-2005 թթ. կրթության զարգացման պետական ծրագրի հաստատման մասին: Ծրագրի 6-րդ բաժնում, նախատեսված միջոցառումների

շարքում, թվարկված են նոր ՀՈԳԱՀ-ի ներդրման միջոցառումները (տե՛ս աղյուսակ 3):

ե. 2001-2005 թթ. կրթության զարգացման պետական ծրագրի հաստատման մասին: 2-րդ և 4-րդ բաժիններում նշվում է TIMSS ծրագրի միջազգային հետազոտություններին Հայաստանի մասնակցության, իսկ 7-րդ բաժնում՝ պետական ավարտական և միասնական քննությունների անցկացման որակի բարձրացման կարևորությունը:

ՀՀ կառավարության որոշումները (տե՛ս [10, 11, 13, 18])՝ ստորագրված ՀՀ վարչապետի կողմից:

ա. 2005 թվականին ՀՀ կառավարության միջոցառումների, գործառույթների, ծրագրերի և առաջնային խնդիրների հաստատման մասին: Առաջնային թվում նշվել է ՀՈԳԱՀ-ի արդիականացման հիմնախնդիրը:

բ. Միջնակարգ կրթության պետական չափորոշիչի հաստատման մասին: Հաստատվում են կրթության պետական չափորոշիչները և կրթության տարբեր աստիճաններում (տարրական դպրոց, միջին դպրոց, ավագ դպրոց) սովորողներին ներկայացվող պահանջները:

գ. «Գնահատման և թեստավորման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության ստեղծման և դրա օրենսդրության հաստատման մասին: Հաստատվում է ԳԹԿ-ի և դրա օրենսդրության ստեղծման որոշումը՝ պետական ավարտական և միասնական քննությունների անցկացման նոր սկզբունքների և մեթոդների իրականացման, ազգային մշտադիտարկային հետազոտությունների կազմակերպման և իրականացման, միջազգային հետազոտությունների մասնակցելու համար:

դ. Պետական և ոչ պետական ուսումնական հաստատություններ ընդունելության կանոնների հաստատման մասին: Հաստատվում են պետական միասնական քննությունների կազմակերպման և անցկացման կանոնները:

ՀՀ ԿԳ նախարարի հրամանները (տե՛ս [14, 16,])՝ ստորագրված ՀՀ կրթության և գիտության նախարարի կողմից: Դրանցում հաստատվում են փոխադրական, ավարտական և միասնական քննությունների կազմակերպման և իրականացման կանոններն ու ընթացակարգերը:

ա. Հանրակրթական ուսումնական հաստատություններում փոխադրական և ավարտական քննությունների կազմակերպման կանոնների հաստատման մասին:

բ. 2007 թվականին «Հայոց լեզու և հայ գրականություն»-ից առաջին միասնական քննության անցկացման մասին:

գ. 2009 թվականի պետական միասնական քննությունների կազմակերպման և անցկացման ընթացակարգերի մասին:

2.2 Ներգրավված ներուժը

Հայաստանում ՀՈԳԱՀ-ի նպատակների իրականացմանը մասնակցում են հետևյալ հիմնական կազմակերպություններն ու կառույցները.

ՀՀ կրթության և գիտության նախարարություն

Կազմակերպա-իրավական կարգավիճակը՝ ՀՀ կառավարության նախարարություն:

Հիմնական գործառույթները՝ գիտության և կրթության բնագավառում ՀՀ կառավարության քաղաքականության իրագործում:

Կոնտակտային տվյալներ՝

կայքի հասցեն՝ www.edu.am

Էլեկտրոնային փոստի հասցեն՝ info@edu.am

հեռախոսահամար՝ (+374) 54 70 21

ՀՀ կառավարության աշխատակազմի Գնահատման և թեստավորման կենտրոն

Կազմակերպա-իրավական կարգավիճակը՝ պետական ոչ առևտրային կազմակերպություն:

Հիմնական գործառույթները՝ ՀՀ բուհեր ընդունելության համար պետական միասնական քննությունների կազմակերպում և անցկացում, ՀՀ հանրակրթական դպրոցների ընթացիկ, փոխադրական և ավարտական քննությունների հայեցակարգի մշակում և իրականացում, մասնակցություն միջազգային մշտադիտարկային հետազոտություններին և ազգային հետազոտական նախագծերի իրագործում:

Կոնտակտային տվյալներ՝

կայքի հասցեն՝ www.atc.am

Էլեկտրոնային փոստի հասցեն՝ info@atc.am

հեռախոսահամար՝ (+374) 57 63 37

ՀՀ ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտ

Կազմակերպա-իրավական կարգավիճակը՝ փակ բաժնետիրական ընկերություն:

Հիմնական գործառույթները՝ կրթության ոլորտում կառավարման ռազմավարության, բարեփոխումների իրականացման մեթոդիկաների, հանրակրթական դպրոցի կրթական չափորոշիչների, ուսումնական ծրագրերի, ընդհանուր և հատուկ պետական ծրագրերի մշակում: Աշխատանքներ դասագրքերի, ուսումնամեթոդական ձեռնարկների և այլ ուսումնական նյութերի ստեղծման ուղղությամբ, ուսումնական ուղեցույցների և պիլոտային դասագրքերի հրատարակում և բաշխում:

Կոնտակտային տվյալներ՝
կայքի հասցեն՝ www.aniedu.am
Էլեկտրոնային փոստի հասցեն՝ aniedu@arminco.com
հեռախոսահամար՝ (+374) 57 21 00

ՀՀ ԿԳՆ կրթական ծրագրերի կենտրոն (ծրագրերի իրականացման գրասենյակ)

Կազմակերպա-իրավական կարգավիճակը՝ ՀՀ ԿԳՆ առանձին կառույց:
Հիմնական գործառույթները՝ կրթության որակի, համապատասխանության, մատչելիության ու արդյունավետության բարելավմանն ուղղված բարենորոգչական ծրագրերի իրականացում:

Կոնտակտային տվյալներ՝
կայքի հասցեն՝ www.sfep.am
Էլեկտրոնային փոստի հասցեն՝ cfep@arminco.com
հեռախոսահամար՝ (+374) 57 56 90

ՀՀ ԿԳՆ կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն

Կազմակերպա-իրավական կարգավիճակը՝ պետական ոչ առևտրային կազմակերպություն:

Հիմնական գործառույթները՝ ՀՀ հանրակրթական դպրոցներում տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների ներդրում և դրա շարունակականության ապահովում:

Կոնտակտային տվյալներ՝
կայքի հասցեն՝ www.ktak.am
Էլեկտրոնային փոստի հասցեն՝ ktak@arminco.com
հեռախոսահամար՝ (+374) 57 84 53

ՀՀ ԿԳՆ կրթության պետական տեսչություն

Կազմակերպա-իրավական կարգավիճակը՝ ՀՀ ԿԳՆ աշխատակազմի առանձին կառույց:

Հիմնական գործառույթները՝ ՀՀ հանրակրթական և հատուկ դպրոցների գործունեության ստուգում և տեսչական հսկողության իրականացում:

Կոնտակտային տվյալներ՝
կայքի հասցեն՝ www.kpt.am
Էլեկտրոնային փոստի հասցեն՝ info@kpt.am
հեռախոսահամար՝ (+374) 20 30 27

2.3 Կադրային ներուժը

ՀՈԳԱՀ-ում աշխատող հիմնական կադրային ներուժը կազմում են ՀՀ ԿԳՆ-ի, ԳԹԿ-ի, ԿԱԻ-ի, ԿԾԿ-ի, ԿՏԱԿ-ի, ԵՊՀ-ի, ԵՊՄՀ-ի, ԵՊԼՀ-ի հաստիքային աշխատողները, հանրակրթական դպրոցների ուսուցիչներ ու ղեկավարներ և պետական կազմակերպությունների այլ մասնագետներ, ովքեր ունեն ԿՈԳ-ի համակարգում աշխատանքի փորձ:

Սակայն մասշտաբային միջոցառումներ իրականացնելիս հարկ է լինում ՀՈԳԱՀ-ի մեջ պայմանագրային հիմունքներով ներգրավել անհրաժեշտ փորձ և որակավորում ունեցող մասնագետների:

Հիմնականում դա վերաբերում է հետևյալ մասնագետներին.

- տարբեր առարկաների թեստեր կազմողներ և առարկայական մասնագետներ (ազգային հետազոտություններ, պետական միասնական քննություններ և այլն),
- թեստաբանական միջոցառումների կազմակերպիչներ (միջազգային և ազգային հետազոտություններ, պետական միասնական քննություններ և այլն),
- քննական կենտրոնների ղեկավարներ (պետական միասնական քննությունների ժամանակ),
- պետական միասնական քննությունների կազմակերպիչներ,
- պետական միասնական քննությունների օպերատորներ,
- ԳԹԿ ներկայացուցիչներ (պետական միասնական քննությունների ժամանակ),
- բաց պատասխանով առաջադրանքների ստուգողներ (միջազգային և ազգային հետազոտություններ և այլն),
- գործիքների դիզայնով զբաղվող համակարգչային մասնագետներ (միջազգային և ազգային հետազոտություններ, ավարտական քննություններ, արտաքին ընթացիկ գնահատումներ, պետական միասնական քննություններ և այլն),
- համակարգչային տեխնոլոգիաների մասնագետներ՝ տվյալների բազաների ներբեռնման, մշակման և ստեղծման համար (միջազգային և ազգային հետազոտություններ, պետական միասնական քննություններ և այլն),
- հավանականության տեսության մասնագետներ (փսիխոմետրիկներ, մաթեմատիկոսներ),
- թեստաբանական, առարկայական և լեզվական խմբագիրներ (միջազգային և ազգային հետազոտություններ և այլն),
- թարգմանիչներ (միջազգային և ազգային հետազոտություններ և այլն):

Մենք ներկայացրեցինք ՀՈԳԱՀ-ում ներգրավված մասնագետների ոչ ամբողջական ցանկը: ԳԹԿ-ն բոլոր պայմանագրային մասնագետների համար, մասնավորապես, կազմակերպում է ուսուցման և ԿՈԳ-ին ուղղված կոնկրետ միջոցառումների անցկացման ժամանակ կոնկրետ գործառնությունների պարզաբանմանն ուղղված վարժանքներ: Իրականում, մասնավորապես պետական միասնական քննությունների ժամանակ, աշխատում են նաև այլ մասնագետներ, որոնք կատարում են ԿՈԳ-ի հետ անմիջական կապ չունեցող մասնագիտությունների գործառնություններ (ինկլասացիա, տեղափոխումներ, անվտանգություն, պահպանություն, տպագրություն, փաթեթավորում և այլն): Պարզ է, որ ոչ մի կազմակերպության հաստիքներ չեն բավարարի այդ բոլոր գործառնություններն իրականացնելու համար:

Սակայն թեստաբանության և պսիխոմետրիկայի մասնագետների հատկապես երիտասարդ մասնագետների) պակասը Հայաստանում ամբողջ ՀՈԳԱՀ-ի համար էական հիմնախնդիր է (տե՛ս <<Հիմնախնդիրները>> 6-րդ կետում): Հանրապետությունում գործում են վերապատրաստման տարբեր ծրագրեր, անցկացվում են վարժանքներ, սեմինարներ, համաժողովներ, կազմակերպվում են հայտնի մասնագետների դասախոսություններ: Սակայն, ցավոք, մեզ հայտնի չեն բուհեր, որոնք մանկավարժական չափումների բնագավառի համար մասնագետներ պատրաստեն:

3. Մշտադիտարկային հետազոտությունները

Անցյալ դարի կեսերից աշխարհի շատ երկրներում կրթության որակի գնահատման բնագավառում անցկացվում են մասշտաբային մանկավարժական հետազոտություններ: Այդպիսի հետազոտությունների անհրաժեշտությունը ակներև է. իրականացնելով սեփական կրթական ծրագրերը և գնահատելով դրանց արդյունավետությունը՝ երկիրը բախվում է իր ձեռքբերումները համաշխարհային ուսումնասիրված փորձի և այլ երկրների ձեռքբերումների հետ համեմատելու անհրաժեշտության հետ: Միջազգային հետազոտությունների բացակայությունը կարող էր հանգեցնել մի իրավիճակի, երբ անհնար է վստահ լինել, որ կրթական համակարգի զարգացումն ընթանում է ճիշտ ուղղությամբ և անհրաժեշտ արագությամբ: Երկրում մշտադիտարկային հետազոտությունների հաջորդականության և անընդհատականության անհրաժեշտությունը հանգեցնում է այն բանին, որ անհրաժեշտություն է առաջանում միջազգային մշտադիտարկային հետազոտությունների հետ կազմա-

կերպելու և անցկացնելու ազգային մշտադիտարկային նախագծեր՝ հաշվի առնելով կրթության ոլորտում առկա ազգային առանձնահատկությունները, ձևավորված մանկավարժական ավանդույթները և դասավանդման առաջնայնությունները (տե՛ս [28]):

3.1 Կրթության որակի միջազգային համեմատական հետազոտություններ

Աշխարհում առավել հայտնի միջազգային համեմատական հետազոտություններից մեկը, որ անցկացվում է կրթության որակի գնահատման բնագավառում, TIMSS հետազոտությունն է, որը 4 տարին մեկ անցկացնում է IEA (International Association for the Evaluation of Educational Achievement) միջազգային ասոցիացիան: Հայաստանը մասնակցել է TIMSS-ի 5 հետազոտությունների՝ TIMSS 2003, TIMSS 2007, TIMSS Advanced 2008, TIMSS 2011, TIMSS 2015: 1999 թվականից Հայաստանի ներկայացուցիչները մասնակցել են TIMSS-ի համաժողովներին: Իսկ 2002 թվականին ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով [8] սկսվեցին Հայաստանում TIMSS 2003 հետազոտության կազմակերպման և անցկացման աշխատանքները: Հետագայում միջազգային համեմատական հետազոտություններին Հայաստանի մասնակցությունը ամրագրվեց ՀՀ կառավարության որոշմամբ [10] (նաև օրենքով [6]):

Հայաստանում TIMSS առաջին հետազոտություններն անցկացվեցին պայմանագրային հիմունքներով ՀՀ տարբեր կազմակերպություններից (ԿԳՆ, ԵՊՀ, ՀՊՄՀ, ԿԱԻ և այլն) ներգրավված մասնագետների ուժերով: 2008 թվականից TIMSS հետազոտությունները կազմակերպում և անցկացնում է ԳԹԿ-ն: Գնահատելով Հայաստանում TIMSS միջազգային հետազոտության փորձը՝ 2007 թվականին IEA-ի գլխավոր ասամբլեայում ՀՀ ԿԳՆ-ն ընտրվեց IEA-ի անդամ:

Յուրաքանչյուր TIMSS հետազոտությունից հետո IEA ասոցիացիան թողարկում է ինչպես մասնակից երկրների աշակերտների առաջադիմության մակարդակի համակողմանի մասշտաբային համեմատական վերլուծություն, այնպես էլ մանրամասն վերլուծություն այն գործոնների, որոնցով ձևավորվում են առաջադիմության ստացված ցուցանիշները (տե՛ս [26, 29,30]): Ստորև ներկայացնում ենք մաթեմատիկայից և բնական գիտություններից երկու տարիքային խմբի հայ աշակերտների առաջադիմության ցուցանիշները (4-րդ դասարան, 8-րդ դասարան), որոնք ստացվել են TIMSS վերջին երեք հետազոտությունների միջոցով:

Աղյուսակ 4. Մաթեմատիկայից և բնական գիտություններից առաջադիմության ցուցանիշները:

տարին / առարկան	Մաթեմատիկա 4-րդ դասարան	Մաթեմատիկա 8-րդ դասարան	Բնագիտություն 4-րդ դասարան	Բնագիտություն 8-րդ դասարան
TIMSS 2003	456	478	437	461
TIMSS 2007	500	499	484	488
TIMSS 2011	452	467	416	437

Աղբյուրը՝ IEA-ի տվյալները

Հայաստանում TIMSS հետազոտությունների արդյունքների դինամիկան, մեր կարծիքով, մեծապես բնորոշվում է հետևյալ երեք հիմնական գործոններով.

1. *Թեստավորման մեթոդի նորույթ լինելը և արտասովորությունը:* Եթե հաշվի առնենք, որ մինչև 2003 թվականի TIMSS հետազոտությունը Հայաստանի դպրոցներում անգամ ուսուցիչներն էին անձանոթ թեստավորմանը, որպես առաջադիմության ցուցանիշների գնահատման մեթոդի, ապա պարզ է դառնում, թե այս գործոնը մինչև այժմ էլ մեծ ազդեցություն ունի: Հայ աշակերտների համար ոչ միայն TIMSS հետազոտությունների անցկացման մեթոդներն են նոր (ընտրությամբ առաջադրանքների կատարում, բաց պատասխանով առաջադրանքներ կատարելիս կարծիքների արտահայտում, հարցաթերթիկների լրացում և այլն), այլև գնահատման միջոցի ծրագրային նյութը, ձևակերպումը և ձևավորումը:
2. *Միասնական քննությունների ներդրումը:* Հայ աշակերտների արդյունքների վրա մեծ ազդեցություն ունեցավ միջնակարգ դպրոցն ավարտելու և Հայաստանի բուհեր ընդունվելու համար պետական միասնական քննություններին անցումը: Այդ քննություններին պատրաստվելիս լայն հասարակական քննարկումներ եղան մասնագիտական կազմակերպություններում և ՋԼՄ-ներում: Դպրոցներում, միասնական քննություններին նախապատրաստվելու շրջանակներում, թեստավորմանը վերաբերող տարբեր միջոցառումներ անցկացվեցին: Հայաստանում առաջին միասնական քննությունն անցկացվեց 2007 թվականին (հայոց լեզվից և հայ գրականությունից): Կարծում ենք, որ այդ փաստը մեծ ազդեցություն ունեցավ 2007 թվականի TIMSS հետազոտության արդյունքների վրա:

3. *Հետազոտությունների նկատմամբ վերաբերմունքը և մոտիվացիան:*

Այս գործոնի ազդեցությունը աշակերտների արդյունքների վրա (ոչ միայն Հայաստանի) բավական ակնհայտ է: Պատահական չէ, որ TIMSS հետազոտությունների արդյունքներով առաջին տեղերը հիմնականում զբաղեցնում են մոտիվացիայի բարձր մակարդակ և մանկավարժական հետազոտությունների նկատմամբ (և ոչ միայն) լուրջ և պատասխանատու վերաբերմունք ունեցող ասիական երկրները: Հայաստանում, ցավոք, այս գործոնն ունի մեծ (բացասական) ազդեցություն: Դրա վկայությունն են TIMSS 2011 հետազոտության ժամանակ մեծ թվով չլրացված գրքույկների ու բաց թողնված առաջադրանքների (դիագնոստիկ կոդ 99) մեծ տոկոսը: Դա է վկայում նաև 79 դիագնոստիկ կոդով (անհամազոր պատասխան) առաջադրանքների մեծ տոկոսը:

TIMSS հետազոտությունների արդյունքները վեր հանեցին ՀՀ հանրակրթական հաստատություններում աշակերտների հետ տարվող աշխատանքներում մի շարք հիմնախնդիրներ:

- Միջազգային հետազոտություններում մեծ տոկոս են կազմում առաջադրանքներն այն բաժիններից, որոնց մեր ծրագրերում ուշադրություն չէր դարձվում (հավանականության տեսության և մաթեմատիկական վիճակագրության տարրեր, տվյալների ներկայացում ու մեկնաբանում և այլն):
- Գնահատման գործիքի ընտրության, ձևակերպման և ձևավորման տարբերությունները: Մեր աշակերտներն ավելի շատ սովոր են առաջադրանքների չոր և հստակ ձևակերպումների (<<Լուծել հավասարումը>>, <<Պարզեցնել արտահայտությունը>>), իսկ միջազգային հետազոտությունների առաջադրանքների մեծ մասը վերաբերում են առօրյա կյանքին շատ մոտ իրավիճակներին, և հաճախ պահանջվում է ոչ թե բարդ հաշվարկներ կատարել, այլ արտահայտել սեփական կարծիքը:
- Բավականին մեծ են դասավանդման մեթոդների և գնահատման ձևերի տարբերությունները: Հաճախ ուսուցիչները շարունակում են դասավանդել անցած տարիների մեթոդիկաներով, նյութերով և ծրագրերով, այն դեպքում, որ աշակերտները թեստեր են լուծում (ոչ միայն միջազգային հետազոտությունների, այլև միասնական քննությունների և թեստավորման այլ միջոցառումների ժամանակ), որի համար պահանջվում են այլ կարողություններ և հմտություններ:
- Առարկայական ծրագրերը, դասագրքերը, ուսումնական ձեռնարկները, խնդիրների (թեստերի) ժողովածուները և այլ

ուսումնական նյութերն անհրաժեշտ է վերամշակել և համապատասխանեցնել նոր պահանջներին ու չափորոշիչներին:

- Թեստավորման վերաբերյալ միջոցառումների պակաս է նկատվում: Պետք է թեստավորման մեթոդով տարբեր առարկաներից, ուսուցման տարբեր աստիճաններում, տարբեր նպատակներով կրթության որակի գնահատման բազմազան միջոցառումներ իրականացնել: Ստացված արդյունքները վերլուծել ինչպես գնահատման գործիքների որակի բարելավման, այնպես էլ կոնկրետ բնագավառներում թերությունների բացահայտման նպատակով:
- Բավականին լուրջ հիմնախնդիրներ են նկատվում բնագիտական առարկաների դասավանդման գործում: Այն հիմնականում իրականացվում է նյութը ներկայացնելու և հիշելու պահանջով: Մեծ ուշադրություն է դարձվում չոր տեսական փաստերին՝ առանց ստացված գիտելիքները առօրեական իրավիճակներում բավարար ձևով կիրառման: Այս փաստն արտացոլված է նաև [6]-ում, հիմնախնդիրների թվում: Աշակերտները թույլ կարողություններ են ցուցաբերում գիտափորձեր կազմակերպելիս և իրականացնելիս:
- Ինչպես մաթեմատիկայից, այնպես էլ բնագիտական առարկաներից, աշակերտները հաճախ խորամուխ չեն լինում բաց պատասխանով առաջադրանքների էության մեջ: Այդպիսի առաջադրանքներ կատարելու համար հաճախ աշակերտը, առաջադրանքը կատարելուց առաջ, պետք է կարդա ինչ-որ մի սցենար և հետո, խորամուխ լինելով դրա էության մեջ, կատարի այն: Շատ դեպքերում մեր աշակերտը, ունենալով այդ առաջադրանքը կատարելու գիտելիքներ և կարողություններ, այն մինչև վերջ չի կարողում մոտիվացիայի անբավարարության, իրավիճակի արտասովորության կամ կարդալու և կարդացածը հասկանալու ունակությունների անբավարարության պատճառով:

Մեկ նախադասությամբ թվարկված հիմնախնդիրների հիմնական մասը կարելի է ընդհանրացնել այսպես. *դասավանդման առաջնայնությունը, ցավոք, սերտելն է, ոչ թե ուսումնասիրվող նյութի էության մեջ խորամուխ լինելը, դրա կիրառումը, ստացված արդյունքների գիտակցումն ու մեկնաբանությունը և եզրակացությունների ձևակերպումը:*

Հաշվի առնելով այն, որ TIMSS հետազոտությունները Հայաստանում կրթության որակի գնահատմանն ուղղված մշտադիտարկային միջոցառումներում թեստավորման մեթոդի կիրառման առաջին քայլերն էին՝ ստացված փորձը և արված եզրակացությունները մեծապես օժանդակեցին Հայաստանում իրականացվող բարեփոխումներին և դպրոցական

կրթության գնահատման որակի համակարգի կայացմանը: Վերը նշված հիմնախնդիրների վերաբերյալ կոնկրետ եզրակացություններ արվեցին և իրավիճակի շտկման ուղղությամբ կոնկրետ քայլեր արվեցին: Հաշվի առնելով TIMSS հետազոտություններին Հայաստանի մասնակցության փորձը՝ ճշգրտվեցին ուսումնական չափորոշիչները և հանրակրթական առարկաների ծրագրերը, լրամշակվեցին և հրատարակվեցին դասագրքերն ու ուսումնական ձեռնարկները, անցկացվեցին մասնագիտական և հասարակական լայն քննարկումներ թեստավորման մեթոդի ներդրման և ՀՈԳԱՀ-ի բարեփոխման վերաբերյալ: Արդյունքում 2004 թվականին ՀՀ կառավարությունը ընդունեց որոշում (տե՛ս [10]) ընթացիկ, ավարտական և ընդունելության քննությունների նոր համակարգի ստեղծման մասին և որոշում (տե՛ս [13]) համապատասխան նախագծերի և միջոցառումների իրականացման համար հատուկ կազմակերպության (ԳԹԿ) ստեղծման մասին: TIMSS միջազգային մշտադիտարկային հետազոտությունների մեթոդով և ազդեցությամբ ԳԹԿ-ն սկսեց իրականացնել տարբեր թեստաբանական միջոցառումներ, ընթացիկ արտաքին գնահատում, միասնական քննություններ, վերապատրաստման ծրագրեր, սեմինարներ և համաժողովներ:

3.2 Ուսումնական ձեռքբերումների ազգային մշտադիտարկային հետազոտություններ

Կրթության որակի գնահատման բնագավառում միջազգային հետազոտությունների հետ անհրաժեշտություն է առաջանում մշակութային և պատմական առանձնահատկություններ ընդհանրություններ ունեցող ավելի նեղ նպատակային խմբում հետազոտության անցկացման, որտեղ չկան էական տարբերություններ ուսումնական ծրագրերում, ավանդույթներում և հետազոտության առարկայի և եղանակի նկատմամբ վերաբերմունքում: Ինչպես նշվեց վերևում, TIMSS միջազգային հետազոտություններին Հայաստանի մասնակցությունը խթան հանդիսացավ ազգային համատեքստում այդպիսի հետազոտությունների կազմակերպման և իրականացման համար:

ԳԹԿ կանոնադրության համաձայն [13], պետական ծախսերի միջնաժամկետ ծրագրերի [24] հիման վրա, ամեն տարի սեպտեմբերից մինչև մայիս (մայիսին սկսվում են պետական քննությունների կազմակերպման ինտենսիվ միջոցառումները, և ազգային հետազոտությունները մղվում են երկրորդ պլան) ԳԹԿ-ն աշխատանքներ է կատարում ազգային մշտադիտարկային հետազոտությունների իրականացման ուղղությամբ: Այսպիսով, ԳԹԿ-ն ամեն տարի ստանում է ազգային հետազոտություններ իրականացնելու պետական պատվեր: Հետազո-

տույթյան թեմատիկան, մասնակիցները, ընտրանքը, մշակողները, կանոնները, աշխատակարգը, աշխատանքների տեսակներն ու ժամկետները ընտրում է ԳԹԿ-ն և իրականացնում է առավելապես իր մասնագետների ուժերով, ինչպես նաև պայմանագրային հիմունքներով ներգրավված մասնագետների օգնությամբ:

2010 թվականին ԳԹԿ-ն աշխատանքներ սկսեց հայրենագիտական առարկաներից (հայոց լեզու, հայ գրականություն, հայոց պատմություն) առաջին ազգային հետազոտության (HAAS) անցկացման ուղղությամբ՝ 8-րդ դասարանի աշակերտների շրջանում: Հետագայում՝ 2011-2014 թվականներին, անցկացվեցին ազգային հետազոտություններ բնագիտական առարկաներից՝ BAAS (ֆիզիկա, քիմիա), BAAS (կենսաբանություն, աշխարհագրություն), և օտար լեզուներից՝ OLAS (ռուսաց լեզու, անգլերեն): 2011-2014 թվականներին յուրաքանչյուր տարի անցկացվեցին նշված առարկաներից մեկական հետազոտություններ:

HAAS, BAAS և OLAS ազգային միջոցները մշակվել են TIMSS հետազոտությունների մեթոդով: Ինչպես TIMSS հետազոտություններում, գնահատվել են երեք ճանաչողական ոլորտ՝ հայտնի փաստերի *իմացություն* (knowledge), տարբեր իրավիճակներում գիտելիքների *կիրառում* (application), տվյալ իրավիճակի, մեթոդի ընտրության և լուծման քայլերի արժևորում (evaluation): Հիշեցնենք, որ TIMSS հետազոտություններում նշված ճանաչողական ոլորտներով գնահատումը կատարվում է մաթեմատիկայից և բնագիտական առարկաներից:

Կարծիքներ և կասկածներ կային, որ TIMSS-ի մեթոդը նախատեսված է հենց այդ առարկաների համար և հարմար չէ կիրառելու հումանիտար առարկաների դեպքում: Հումանիտար ոլորտում կիրառելու համար կա ընթերցանության PIRLS (Progress in International Reading Literacy Study) հետազոտությունը (տե՛ս [31]), բայց այն մշակված է այլ մեթոդով և այլ նպատակներ է հետապնդում: PIRLS-ը 2 մասի է բաժանված, և այդ երկու մասերով տարբեր դիրքերից գնահատվում են կարդալու հմտությունները և կարդացածը հասկանալու մակարդակը (գեղարվեստական տեքստ և գիտահանրամատչելի ակնարկ): Իսկ HAAS-ի գործիքը հնարավորություն է տալիս երևան հանելու ճանաչողական առանձնահատկությունները երկու (անգամ երեք) հումանիտար առարկաներից (լեզու, գրականություն, պատմություն)՝ ի մի բերված մեկ տեքստում:

Մշակվեցին առաջադիմության գրքույկներ (Achievement Booklets) և հարցաթերթեր աշակերտների համար (Student Questionnaire): Ընդ որում, ինչպես TIMSS հետազոտությունների գրքույկներում, մեր մշակած առաջադիմության գրքույկներն էլ էին բաղկացած երկու առարկայական մասերից, սակայն աշակերտի համար հարցաթերթիկը համատեղվել էր

առաջադիմության գրքույկի հետ (տպագրելիս միջոցներ խնայելու համար)՝ որպես երրորդ մաս:

Աշակերտի հարցաթերթիկը (գրքույկի երրորդ մասը) բաղկացած է 30 հարցից, որոնք ներառված են 6 խմբում՝ «Քո մասին», «Քո դպրոցի մասին», «Դասերից հետո», «Հայոց լեզուն ձեր դպրոցում», «Հայոց պատմությունը ձեր դպրոցում» և «Քո նախասիրությունները»:

Հարցաթերթիկի բոլոր հարցերի վերաբերյալ կատարվել է վիճակագրական վերլուծություն (տե՛ս հավելվածը):

Առաջադրանքների ոչ ստանդարտ ձևակերպումները, թեստավորումն իրականացնողների վկայությամբ, մեծ հետաքրքրություն էր առաջացրել աշակերտների շրջանում, գործընթացը լարված ու ձանձրալի չի եղել:

Թեստերի կառուցվածքը, առաջադրանքների քանակը և դրանց կատարման համար հատկացվող ժամանակը, ընդհանուր առմամբ, համաձայնեցվել են TIMSS հետազոտությունների համապատասխան բնութագրերի հետ. երկու մաս (երկու առարկա) և աշակերտի հարցաթերթիկ, յուրաքանչյուր մասում (յուրաքանչյուր առարկայից) 26 առաջադրանք, 45-ական րոպե յուրաքանչյուր մասի կատարման համար:

Ստորև ներկայացնում ենք HAAS, BAAS, OLAS հետազոտությունների գրքերի ձևավորումը, ինչն արտացոլում է դրանց կառուցվածքը:


Նկար 1. HAAS հետազոտության գրքույկի ձևավորումը



Նկար 2. BAAS հետազոտության գրքույկի ձևավորումը



Նկար 3. OLAS հետազոտության գրքույկի ձևավորումը



TIMSS-ի մեթոդի կիրառումը ենթադրում է ոչ միայն գնահատման միջոցի ճանաչողական բնութագրերի, գնահատման փուլերի և կանոնների օգտագործում, այլև կոնկրետ գնահատման նպատակների ձևակերպում, հարաբերակցային առանձնահատկությունների և միջառարկայական կապերի, առաջադիմության արդյունքները ձևավորող գործոնների (այդ թվում կրթական և սոցիալ-տնտեսական) բացահայտում, վիճակագրական (պսիխոմետրիկ) վերլուծության մեթոդների կիրառում, արդյունքների ներկայացման մեթոդների և ստացված տվյալների օգտագործման ոլորտների ճշգրտում:

Քանի որ թվարկվածները, տասնամյակների ընթացքում, բավականին բարձր մակարդակով մշակվել են IEA-ի մասնագետների կողմից, ներկայացվել և հաջողությամբ կիրառվել են TIMSS-ի միջազգային համեմատական հետազոտությունների ժամանակ, ապա իրականացնելով ազգային համեմատական հետազոտություններ՝ պետք էր համապատասխան մեթոդները, սկզբունքներն ու գործընթացները հարմարեցնել կոնկրետ առարկայական միջոցներին: Դա անելիս տարբեր երկրների դերը այս դեպքում կատարում են Հայաստանի մարզերը:

Ազգային հետազոտությունների թվարկված միջոցների կիրառման աշխատանքները (գործիքակազմի մշակում, փորձարկում, համակարգչային ձևավորում, կողմավորում, տվյալների ներմուծում, վիճակագրական վերլուծություն, հաշվետվության պատրաստում) կատարվել էին ԳԹԿ-ի և պայմանագրով հրավիրված մասնագետների կողմից ԳԹԿ-ի ամենամյա բյուջետային ֆինանսավորման հիման վրա (տե՛ս [13]): Յուրաքանչյուր հետազոտության ժամանակ թեստավորվել է Հայաստանի մարզերից ընտրված դպրոցների 8-րդ դասարանցի մոտավորապես 3000 աշակերտ: Հետազոտությունների արդյունքների հիման վրա կազմվեցին մանրամասն հաշվետվություններ, որոնք վերաբերում էին, հիմնականում, թեստերի և թեստային առաջադրանքների (նաև աշակերտների հարցաթերթիկների) փսիխոմետրիկ բնութագրերին և նպատակաուղղված էին ազգային գործիքների որակի բարելավմանը (տե՛ս, օրինակ, աղյուսակ 11-ը):

Բնականաբար, այս փուլում դեռ վաղ է աշակերտների պատրաստման գործում նվաճումների և ուժեղ կողմերի, հիմնահարցերի և թերությունների մասին խոսելը: Դեռ վաղ է հիմնավորված եզրակացություններ անել հետազոտությունների վերաբերյալ (կրկնական հետազոտություններ չեն կատարվել), որոնք կարող էին հիմք հանդիսանալ հետագա կառավարչական որոշումների համար: Բայց TIMSS հետազոտությունների որոշ օրինաչափություններ ի հայտ են գալիս նաև այստեղ. *դասավանդման առաջնայնությունը մնում է հայտնի փաստերի սերտումը*, աշակերտները խուսափում են ինքնուրույն մեկնաբանություններ անելուց՝ ավելի հարմար է հանրահայտ փաստերը վերարտադրելը: Երևան են գալիս դասավանդման և գնահատման մեթոդների էական տարբերությունները:

HAAS, BAAS և OLAS ազգային հետազոտությունների նախնական արդյունքները բազմիցս ներկայացվել են տարբեր համաժողովներում, քննարկվել ԳԹԿ մասնագետների մասնակցությամբ և ԳԹԿ-ի կազմակերպած սեմինարների և վարժանքների ժամանակ: Որոշ այլ ազգային հետազոտությունների տարբեր փուլեր անցկացվել են դրամաշնորհների հիման վրա: ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի ֆինանսական աջակցությամբ (մրցույթի հիման վրա) մշակվեց <<Ի՞նչ գիտենք մեր մասին>> գործիքը և հետազոտություն անցկացվեց (PIRLS մեթոդով) 4-րդ դասարանի աշակերտների ընթերցանության վերաբերյալ (տե՛ս [31-34]): CISED (The Center for International Cooperation in Education Development) ռուսաստանյան կենտրոնի աջակցությամբ (<<Փոքր դրամաշնորհներ>> ծրագրի շրջանակներում) հետազոտություն անցկացվեց ռուսաց լեզվից (տե՛ս [33]): READ (Russian Education Aid for Development) ծրագրի շրջանակներում նախնական աշխատանքներ կատարվեցին TASS (Trend in Arnenistic Subjects Study) գործիքի մշակման ուղղությամբ (հայոց լեզու և հայոց պատմություն) և պայմանավորվածություն ձեռք բերվեց SAM (Students Achievement Monitoring) հետազոտության անցկացման համար (մաթեմատիկայից):

Չնայած Հայաստանում ազգային հետազոտությունների մասին վերը ասվածին, պետք է նշել, որ այս ամենը դեռևս կայացման փուլում է: Բոլոր թվարկված ազգային հետազոտություններն ունեն նախնական բնույթ, եղած միջոցները պետք է լրամշակվեն լիարժեք և մասշտաբային կիրառման համար:

Սակայն Հայաստանում մեկ հետազոտություն անցկացվել է բոլոր փուլերով (սկսած գործիքի տեղայնացումից մինչև մասշտաբային կիրառում) և հասցվել է մինչև լիարժեք կիրառման: Խոսքը հիմնական դպրոցի շրջանավարտների տեղեկատվական և հաղորդակցային գրագիտության վերաբերյալ ICT (Information Kommunikation Technology) հետազոտությ-


յան մասին է, որը Հայաստանում անցկացվեց READ ծրագրի իրականացման շրջանակներում: Գործիքի տեղայնացման աշխատանքները սկսվել են 2011 թվականին, իսկ հետազոտության հիմնական փուլը իրականացվել է 2014 թվականին: Համակարգչային թեստավորում է անցկացվել Հայաստանի բոլոր տարածաշրջաններից 2500 իններորդեցիների մասնակցությամբ: Աշխատանքները կատարվեցին Ռուսաստանի Դաշնության կադրերի պատրաստման ազգային հիմնադրամի մեր գործընկերների հետ համագործակցությամբ: Հետազոտության ավարտին կատարվեց ստացված արդյունքների (հիմնական թեստավորման և անկետավորման) մանրամասն վերլուծություն, կազմվեցին համապատասխան հաշվետվություններ և հանձնարարականներ: Անցկացվեցին քննարկումներ և սեմինարներ՝ նվիրված ICT գրագիտության տարբեր ասպեկտներին և փուլերին, միջոցի հետագա կատարելագործմանը և ICT գրագիտության վերաբերյալ հետազոտություններին Հայաստանի հետագա մասնակցության հնարավորությանը:

Հետազոտության արդյունքները լուսաբանվեցին Երևանում READ ծրագրի շրջանակներում Համաշխարհային բանկի կողմից կազմակերպված համաժողովում: Դրանց հանդեպ հետաքրքրություն ցուցաբերեց ՔՊԱ «Новости» լրատվական գործակալությունը:

ICT գործիքը կիրառման ընթացքում աշակերտների արդյունքներն ընդհանրացվում են հինգ մակարդակներով՝ *զարգացող, միջինից ցածր, միջին, միջինից բարձր, առաջատար*:

ICT հետազոտության ընթացքում դպրոցականների ցուցաբերած առաջադիմության հիմնական արդյունքների բաշխումը ներկայացված է հետևյալ նկարում:

Նկար 4. ICT գրագիտության թեստավորման ցուցանիշների տոկոսների բաշխումը



Տվյալները՝ ՌԴ ԿՊԱՀ-ի

3.3 Մշտադիտարկային հետազոտությունների զարգացման բանավիճային հարցեր

Ինչպես մեծ թվով մասնակիցներով յուրաքանչյուր մասշտաբային միջոցառում, կրթության որակի գնահատման բնագավառում կատարվող միջազգային հետազոտությունները պետք է անցկացվեն հետազոտության բոլոր մասնակիցների համար ընդունելի մեթոդներով: Պետք է լինի հետազոտության լավ մշակված գործիք, որը, ընդհանուր առմամբ, ընդունելի լինի յուրաքանչյուր երկրում: Հաշվի առնելով այն, որ մասնակից երկրների (ուսուցման տարբեր ծրագրերով և դասավանդման ավանդույթներով) թիվը յուրաքանչյուր տարի ավելանում է, յուրաքանչյուր միջազգային հետազոտության հիմքում, այս կամ այն չափով, դրվում է ինչ-որ մի փոխզիջում, որը մի կողմից ապահովում է միջոցների և մեթոդների *ընդունելիությունը* յուրաքանչյուր մասնակից երկրի համար, մյուս կողմից, այնուամենայնիվ, չի վերացնում որոշ *սխալանքի* հնարավորությունը կոնկրետ երկրի իրավիճակը նկարագրելիս: Այդպիսի սխալանքի կարող է հանգեցնել, օրինակ, ծրագրերի ոչ լրիվ անհամապատասխանությունը: Օրինակ, մաթեմատիկայից միջազգային հետազոտություններում մեծ տոկոս են կազմում այն բաժիններից առաջադրանքները, որոնց մինչև վերջերս մեր ծրագրերում ուշադրություն չէր դարձվում (հավանականության տեսության և մաթեմատիկական վիճակագրության տարրեր, տվյալների ներկայացում և մեկնաբանում և այլն): Մյուս կողմից, ավանդաբար մեր ուշադրության դաշտում գտնվող բաժինները (քառակուսի հավասարումներ, հավասարումների համակարգեր, եռանկյունաչափություն և այլն) գրեթե տեղ չեն գտել միջազգային հետազոտությունների առաջադրանքներում:

Մյուս պատճառը, որը կարող են միջազգային հետազոտությունների արդյունքներում սխալանքի հանգեցնել, կարող են լինել տարբեր երկրներում դասավանդման և գնահատման բազմամյա ավանդույթներով ձևավորված գնահատման գործիքի ընտրության, ձևակերպումների, ձևավորման տարբերությունները:

Հաճախ առաջադրանքը կատարելու համար (հատկապես բնագիտական առարկաներից առաջադրանքները) պահանջվում է շարադրել սեփական կարծիքը կամ նկարագրել առաջարկված հիմնախնդրի լուծման ինչ-որ մի եղանակ: Այդպիսի առաջադրանքների պահանջները ձևակերպվում են այսպիսի բառակապակցություններով. <<Քո կարծիքով... Քեզ ի՞նչ է թվում... Դու ի՞նչ կառաջարկելիր... Ի՞նչ խորհուրդ կտայիր>>: Իսկ մեր աշակերտները սովոր են կատարել բազմաքայլ հաշվարկներ, օգտագործելով մի քանի բանաձևեր՝ գտնել անհայտ փոփոխականի արժեքը և

գրել այն որպես պատասխան դրա համար հատկացված տեղում: Դրա հետևանքով, հաճախ, մեր աշակերտը, որը յուրացրել է տեսական նյութը և խնդիրները լուծելիս կարողանում է տեսական բանաձևերի օգնությամբ կատարել համապատասխան հաշվարկները, չի պատասխանում <<Դու ի՞նչ կանեիր, որպեսզի չվարակվեիր գրիպով հիվանդ քո համադասարանցուց>>:

Բերված փաստարկները միջազգային հետազոտությունների քննադատություն չեն (միջազգային հետազոտությունների ընթացքում արված եզրակացությունների հիման վրա, ի վերջո, ճշգրտվում են ուսումնական ծրագրերը, դասավանդման մեթոդները, կատարելագործվում են ուսումնական նյութերը և այլն), սակայն դրանք համոզում են, որ (տե՛ս [28]) *կրթության որակի գնահատման բնագավառում միջազգային հետազոտությունների հետ մեկտեղ անհրաժեշտ է հետազոտություններ կատարել ավելի նեղ նպատակային խմբում՝ կապված մշակութային և պատմական բավարար ընդհանրություններով, որտեղ չկան զգալի տարբերություններ ուսուցման ծրագրերում, հետազոտության առարկայի և եղանակի նկատմամբ ավանդույթներում ու առաջնայնություններում:*

Ընդհանուր առմամբ, հայաստանում միջազգային և ազգային հետազոտությունների հետ կապված իրավիժակը լավատեսության հիմք է տալիս: Հանրապետությունում արդեն TIMSS հետազոտություններին մասնակցության բավարար փորձ է կուտակվել, տարբեր առարկաներից և տարբեր նպատակային խմբերում բազմաթիվ ազգային հետազոտությունների համար միջոցներ են մշակվել (տե՛ս [32]): Սակայն այս հանգամանքը, մեր կարծիքով, բանավեճի տեղիք է տալիս:

Մենք անցել ենք շատ առարկաներից բազմաթիվ գործիքների մշակելու ուղիով: Բայց կա տեսակետ, որ դրա փոխարեն պետք էր կենտրոնանալ մեկ կամ երկու գործիքների վրա, հղկել դրանք և լիարժեքորեն կիրառել, ստանալ բովանդակալից եզրակացություններ և հետամուտ լինել դրանց զարգացմանը կրկնակի հետազոտությունների միջոցով: Իսկ հիմա մենք ունենք բազմաթիվ միջոցներ, բայց տարբեր պատճառներով (ֆինանսական պատճառներ, ժամանակի և ռեսուրսների պակաս և այլն) դրանք դեռ չեն հասել պտուղները քաղելու փուլին, այլ գտնվում են լրամշակման փուլում: Մի օր այս բոլոր միջոցներով կհաջողվի իրականացնել լիարժեք հետազոտություն, սակայն ժամանակն անցնում է և առաջանում է գործիքի հնանալու (փոխվում են առաջնայնությունները, ծրագրերը, չափորոշիչները և այլն) և արդիականության կորստի վտանգ:

Հակառակ պատկերն է միջազգային հետազոտությունների դեպքում: Հայաստանը մասնակցել է 5 TIMSS հետազոտությունների և չի մասնակցել այնպիսի հայտնի և հետաքրքիր հետազոտությունների, ինչպիսիք են PIRLS, PISA (Program for International Student Assessment), TEDS (Teacher

Education and Development Study) ICILS (International Computer and Information Literacy Study) և այլ միջազգային հետազոտությունները: Հիմնական պատճառը, իհարկե, ռեսուրսների (ֆինանսական, ժամանակային, մարդկային) անբավարարությունն է, սակայն հանրապետությունում ավելի ու ավելի են կարևորում կրթության որակի գնահատման մասշտաբային մշտադիտարկային հետազոտությունները, և հույս կա, որ այդ նախագծերից շատերը Հայաստանում ապագայում կիրագործվեն:

Այսպես թե այնպես, չի կարելի չնկատել, որ 15 տարվա ընթացքում շատ բան է արվել, և եթե պահպանվեն կատարված աշխատանքների ինտենսիվությունն ու արդյունավետությունը, ապա արդյունքներ անկասկած կլինեն:

4. Քննությունները

Մինչև 1991 թվականը Հայաստանում (ինչպես ամբողջ ԽՍՀՄ-ում) 5 միավորանոց համակարգը կիրառվում էր բուհի ընդունելության քննությունների (յուրաքանչյուր բուհ իրականացնում էր իր ընդունելությունը), միջնակարգ դպրոցի պետական ավարտական (գրավոր) քննությունների և ընթացիկ ներդասարանական (առավելապես ստուգողական աշխատանքի և բանավոր հարցման) գնահատման ժամանակ:

Ինչպես նշվեց վերևում, 1991 թվականին Հայաստանում ԿՈԳ ոլորտում իրականացվեց առաջին բարեփոխումը, որի արդյունքը բոլոր պետական բուհեր ընդունվելու համար արտաքին կենտրոնացված քննություններն էին: Անկախ իրենց ընտրած բուհից և ընտրած մասնագիտությունից, դիմորդները գալիս էին Երևան և կենտրոնացված քննություններ հանձնում բոլոր առարկաներից: Ստեղծվում էին ստուգողների միասնական հանձնաժողովներ, որոնք գնահատում էին դիմորդների աշխատանքները (բաց պատասխանով առաջադրանքներ) 20 միավորանոց սանդղակով: Թեև դա բուհերի ընդունելության գոյություն ունեցող համակարգի ակնհայտ և լուրջ բարելավում էր (քննությունների կենտրոնացում, ընդունելության միասնական մրցույթի իրականացում, առաջադրանքների ստանդարտացում, ստուգողների անկախ հանձնաժողովներ, իրականացման թափանցիկ գործընթաց), սակայն այդ համակարգն էլ ուներ թերություններ:

Քանի որ Հայաստանի բոլոր դիմորդները քննությունները հանձնում էին Երևանի մի քանի քննական կենտրոններում, ապա տվյալ առարկայի քննությունները ամիսներ էին տևում: Պարզ է, որ քննական տարբերակները օր օրի փոխվում էին, չէր պահպանվում առաջադրանքների

համարժեքությունը: Հիմնական խնդիրներից մեկն էլ հանձնաժողովների ստուգողների սուբյեկտիվությունն էր: Նույն աշխատանքը տարբեր մասնագետներ կարող էին տարբեր ձևերով ստուգել (կախված ստուգողի որակավորումից, մեկնաբանությունից, տրամադրությունից և անգամ դիմորդի ձեռագրից): Առաջադրանքի կատարման նույն թերությունը մի մասնագետը կարող էր պատահականություն համարել, մյուսը՝ մեծ, սկզբունքային սխալ: Դրա հետևանքով կարող էր միավորների զգալի տարբերություն առաջանալ:

Բարեփոխումների երկրորդ ալիքը հանգեցրեց 2005 թվականին ԳԹԿ-ի ստեղծմանը, որը երկու տարվա ընթացքում՝ 2007 թվականին նախապատրաստեց, կազմակերպեց և անցկացրեց առաջին միասնական քննությունը (տե՛ս [15]) թեստավորման մեթոդով (հայոց լեզվից և գրականությունից), իսկ հետո՝ բոլոր հանրակրթական առարկաներից:

4.1 Դպրոցի ավարտական քննություններ

Պետական ավարտական քննությունները կարգավորվում են սովորողների կողմից հանրակրթական ծրագրերի յուրացման մասին, ամփոփիչ գնահատման և ուսուցման հաջորդ աստիճան փոխադրելու մասին կանոնակարգերով՝ հաստատված ՀՀ ԿԳ նախարարի հրամանով (տե՛ս [14]): Պետական ավարտական քննությունների անցկացման կարգն ու ժամկետները (հունիսի 1-22-ը) կարգավորվում են ՀՀ ԿԳ նախարարի հրամանում կատարված լրացումներով (տե՛ս [20]):

4-րդ դասարանում թեստավորման միջոցով անցկացվում են տարրական դպրոցի ավարտական քննությունները «Մայրենի լեզու» և «Մաթեմատիկա» առարկաներից: Ռուսաց լեզվով ուսուցմամբ դասարանները քննություն են հանձնում «Русский язык» առարկայից: Քննական թեստերը կազմվում են ուսումնական հաստատություն մեթոդական միավորումների կողմից՝ հիմնվելով ԳԹԿ-ի մասնագետների մշակած նմուշային թեստերի վրա: Նմուշային թեստերն ստեղծվում են պետական կրթական չափորոշիչների հիման վրա [11] և ուսուցման տվյալ աստիճանի համար ձևակերպված նպատակներով (տե՛ս «Ներածություն»): «Մայրենի լեզու» առարկայի թեստերը բաղկացած են երկու մասից: Առաջին մասում տրվում է ինչ-որ մի տեքստ, և տրվում են հարցեր այդ տեքստի բովանդակության վերաբերյալ, ինչի միջոցով ստուգվում են աշակերտի կարդալու և հասկանալու ունակությունները, թեստերի երկրորդ մասով տրվում են տեսական բնույթի (ուղղագրություն, բառակազմություն, խոսքի մասեր և այլն) առաջադրանքներ: Այդ թեստերը, ինչպես նաև մաթեմատիկայի թեստը, բաղկացած են

պատասխանի ընտրությամբ առաջադրանքներից և բաց պատասխանով առաջադրանքներից, որոնք կազմել են տարրական դպրոցի ծրագրերին նպատակներին և չափորոշիչներին համապատասխան:

Քննությունների անցկացումն ու արդյունքների ստուգումն իրականացվում է քննական հանձնաժողովների կողմից, որոնք կազմվում են ուսումնական հաստատության տնօրենի կողմից ընտրված ուսուցիչներից: Թեստի առաջադրանքների կատարման համար հատկացվում է 90 րոպե, իսկ արդյունքներն ընդհանրացվում են 10 միավորանոց սանդղակով (տե՛ս [21]): Ավարտական քննությունների արդյունքների հիման վրա կատարվում է անցում հաջորդ աստիճանին (միջին դպրոց), պարզվում են աշակերտների հակումներն ու նախասիրությունները, ուժեղ և թույլ կողմերը: Ուսուցիչները արժեքավոր տեղեկություններ են ստանում յուրաքանչյուր աշակերտի մասին, ինչը կարևոր է միջին դպրոցում ուսուցման գործընթացը կազմակերպելու համար:

9-րդ և 12-րդ դասարանների ավարտական քննություններն անցկացնում են ԳԹԿ-ի մասնագետների կողմից ստեղծված ստանդարտացված թեստերով: Թեստերում օգտագործվում են միայն տեխնոլոգիական առաջադրանքներ (առաջադրանքներ, որոնք ստուգվում են ձևաթղթերի սքանավորման միջոցով), գնահատելիս օգտագործվում է գնահատականների 20 միավորանոց սանդղակը:

ԳԹԿ կայքում ավարտական քննություններ հանձնող աշակերտների համար տեղադրվում են ուղեցույցներ (թեստերի կառուցվածքը, առաջադրանքների օրինակներ, ծրագրային նյութեր, միավորների սանդղակը, գնահատման չափանիշները, ձևաթղթերի լրացման կարգը):

9-րդ և 12-րդ դասարաններում աշակերտները ավարտական քննություններ են հանձնում հետևյալ առարկաներից.

- 1) <<Հայոց լեզու և հայ գրականություն>>, կատարման համար հատկացվում է 120 րոպե,
- 2) <<Բնագիտություն>> (ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, աշխարհագրություն՝ աշակերտի ընտրությամբ), կատարման համար հատկացվում է 120 րոպե,
- 3) <<Մաթեմատիկա>>, կատարման համար հատկացվում է 120 րոպե,
- 4) <<Օտար լեզու>> (ռուսերեն, անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն և այլ լեզուներ՝ աշակերտի ընտրությամբ), կատարման համար հատկացվում է 90 րոպե,
- 5) <<Հայոց պատմություն>>, կատարման համար հատկացվում է 120 րոպե,

- 6) Ռուսաց լեզվով ուսուցմամբ դասարանները 9-րդ դասարանում քննություն են հանձնում «Русский язык» առարկայից, իսկ 12-րդ դասարանում՝ բանավոր քննություն «Русская литература» առարկայից:

Ավարտական քննությունները տեղի են ունենում քննական կենտրոններում: Քննական կենտրոն է դառնում ուսումնական հաստատությունը, իսկ դրա տնօրենը (կամ նրան փոխարինող անձը) նշանակվում է քննական կենտրոնի ղեկավար: Քննության կազմակերպման և անցկացման համար ղեկավարը նշանակում է քննության կազմակերպիչներ: Աշխատանքների ստուգումը սկսվում է քննության օրը և իրականացվում կենտրոնի ղեկավարի կողմից հաստատված հանձնաժողովի կողմից՝ աշակերտների ձևաթղթերի պատասխանները առաջադրանքների «բանալիների» հետ համեմատելու միջոցով: Դրանք քննության ավարտից հետո դրվում են ԳԹԿ-ի կայքում:

Ստուգման արդյունքները հայտարարվում են հաջորդ օրը, մինչև ժամը 14.00-ն: Թույլատրվում են բողոքարկման (քննության կարգի խախտման մասին, քննության արդյունքի հետ համաձայն չլինելու մասին, թեստի բովանդակության մասին) և քննությունը չհանձնաձևների համար կրկին թեստավորման գործընթացները:

9-րդ դասարանի ավարտական քննությունների արդյունքները հաշվի են առնվում ուսուցման հաջորդ աստիճան (ավագ դպրոց) փոխադրման ժամանակ: Քանի որ ավագ դպրոցում ուսուցումն իրականացվում է հոսքերով (հանրակրթական, ֆիզմաթ, հումանիտար և այլն), ապա 9-րդ դասարանի ավարտական քննությունների արդյունքները հաշվի են առնվում նաև ավագ դպրոցի ուսուցման կոնկրետ հոսքի ընտրության ժամանակ: 12-րդ դասարանի քննության արդյունքների հիման վրա տրվում է ուսումնական հաստատությունն ավարտելու մասին ատեստատ: Բոլոր աստիճանների ավարտական քննությունները թույլատրվում է վերահանձնել:

4.2 Բուհի ընդունելության քննություններ

2007 թվականից Հայաստանում գործում է պետական միասնական քննությունների համակարգ երկրի բուհեր ընդունվողների համար: Ինչպես նշվեց, 2004 թվականին, ՀՀ կառավարության որոշմամբ, գնահատման նոր համակարգի իրականացման համար ստեղծվեց «Գնահատման և թեստավորման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (տե՛ս [13]), իսկ 2005 թվականին ՀՀ կառավարության նիստում հավանության արժանացավ սովորողների գնահատման նոր հայեցակարգը (տե՛ս [12]): Առաջին միասնական

քննությունն անցկացվեց «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայից (տե՛ս [15]), 2008 թվականին միասնական քննություններ անցկացվեցին երկու առարկաներից՝ «Հայոց լեզու և հայ գրականություն» և «Մաթեմատիկա»։ 2009 թվականից միասնական քննություններ են անցկացվում բոլոր հանրակրթական առարկաներից։ Միասնական քննությունների իրականացման կանոնակարգը, անցկացման սկզբունքներն ու գործընթացները, ժամկետներն ու կանոնները կարգավորվում են Հայաստանի պետական և ոչ պետական բուհեր ընդունելության ՀՀ կառավարության որոշմամբ (տե՛ս [13])։ Միասնական քննությունները կազմակերպվում և անցկացվում են Գնահատման և թեստավորման կենտրոնի կողմից՝ գրավոր թեստավորման միջոցով։ Միասնական քննություններն անցկացվում են երկու փուլով՝ հիմնական (հունիսին) և լրացուցիչ (հուլիսին)։

Թեստային նյութերը: Մովորողների գնահատման հայեցակարգում [12] նշված է, որ միասնական քննությունների թեստերը պետք է բաղկացած լինեն երկու մասից՝ Ա և Բ։ Ա մասը համարժեք է պետական ավարտական քննությունների թեստին, և դրա արդյունքներն օգտագործվում են ուսումնական հաստատությունն ավարտելու մասին ատեստատ տալու համար։ Բ մասն օգտագործվում է միայն բուհերի դիմորդների համար (պետական ավարտական քննությունների թեստերում այդ մասը չկա)։ Ա և Բ մասերի ընդհանուր գնահատականով (Ա+Բ) ձևավորվում է տվյալ առարկայից մրցութային գնահատականը, որն օգտագործվում է բուհերի ընդունելության մրցույթի իրականացման համար։

Թեստերը բաղկացած են միայն տեխնոլոգիական առաջադրանքներից, որոնց ստուգումն իրականացվում է ձևաթղթերի սքանավորման միջոցով։ Օգտագործվում է «հում»՝ անմշակ միավորների 80 միավորանոց սանդղակը, որը հետո վերափոխվում է 20 բալանոց սանդղակի։

Քննական թեստերը կազմվում են համապատասխան առարկայական հանձնաժողովների կողմից, որոնք աշխատում են ԳԹԿ-ի հետ պայմանագրով։ Յուրաքանչյուր առարկայից կազմվում են թեստերի չորս համարժեք տարբերակներ։ Թեստային առաջադրանքներն ընտրվում են թեստային առաջադրանքների շտեմարաններից, որոնք նախապես կազմվում, հրատարակվում և լինում են ազատ վաճառքում, իսկ հիմա արդեն դրվում են նաև ԳԹԿ պաշտոնական կայքում։

Թեև միասնական քննության Ա մասը համարժեք է պետական ավարտական քննությունների թեստին, սակայն ամբողջ թեստը (Ա+Բ) նպատակաուղղված է ընտրությանը և կոչված է առաջին հերթին ապահովել բուհերում ընտրությունը։ Բնական է, որ Բ մասի համար

ընտրվում են տարբերակման մեծ հնարավորություն ընձեռող առաջադրանքներ: Այլ բան է, որ շտեմարանի առաջադրանքների մեծ մասը չի փորձարկվել (բացառությամբ այն առաջադրանքների, որոնք անցած տարիներին օգտագործվել են միասնական քննությունների ժամանակ), և նրանց փսիխոմետրիկ բնութագրերը (բարդությունը, տարբերակումը) (տե՛ս [25]) կազմողները հաճախ սահմանում են բնագրաբար՝ ելնելով իրենց որակավորումից և փորձից: Այնուամենայնիվ պետք է նշել, որ թեստերի բնութագրերը բավական լավն են. հուսալիությունը ձեռք է բերվում առաջադրանքների տեխնոլոգիական բնույթով, իսկ հավաստիությունը ապահովվում է թեստերի առարկայական բովանդակության և հաստատված ծրագրային նյութի ու չափորոշիչների [11]) համապատասխանությամբ: Գնահատվող գիտելիքները, ունակությունները և ծրագրային նյութը (առարկայական ոլորտներ) նախապես քննարկվում են մասնագետների կողմից և տեղ են գտնում դիմորդների համար ուղեցույցներում:

Դիմորդների համար ուղեցույցներ կազմվում են յուրաքանչյուր առարկայից (նմուշային թեստեր, առարկայական նյութեր, ձևաթղթի լրացման կարգը և այլն): Մինչև վերջերս դրանք տպագրվում և անվճար բաժանվում էին դիմորդներին, սակայն այժմ, միասնական քննությունների փորձ ձեռք բերելուց հետո (բոլորն այժմ գիտեն ձևաթղթի լրացման կարգը և ունեն շտեմարաններ), դրանց արդիականությունը նվազել է: Հիմա դրանք դրվում են ԳԹԿ-ի կայքում:

Թեստերի գրքույկները տպագրվում են Լոնդոնում, դրվում հերմետիկ փակվող ծրարներում, ուղարկվում են Հայաստան, այնուհետև դրանք բաշխվում և պահպանվում են քննական կենտրոններին մոտ գտնվող բանկերի մասնաճյուղերում:

Հայտագրումը: Փետրվարի 1-ից մարտի 15-ը դիմորդները լրացնում են հայտագրեր այն առարկաների համար, որոնցից նրանք պատրաստվում են միասնական քննություններ հանձնել: Յուրաքանչյուր միասնական քննության հանձման իրավունք ստանալու համար դիմորդը վճարում է 1500 դրամ (մոտավորապես 3 ԱՄՆ դոլար), որոնք օգտագործվում են ԳԹԿ-ի կողմից միասնական քննությունների կազմակերպման և անցկացման համար: Ծախսերի մյուս մասը կատարվում է ԳԹԿ-ի պետական տարեկան բյուջեի հաշվին (տե՛ս [24]): Մյուս ավարտական առարկաներից (տե՛ս 4.1) դիմորդները հանձնում են պետական ավարտական քննություններ: Հայտերը փոխանցվում են ԳԹԿ, դրանց հիման վրա կազմվում են տվյալ առարկայից միասնական քննություն հանձնող դիմորդների ցուցակները, կատարվում է դիմորդների բաշխում

ըստ քննական կենտրոնների և պատվիրվում են համապատասխան քանակությամբ թեստային գրքույկներ:

Հայտագրված առարկաների ցանկի հիման վրա դիմորդը իրավունք է ստանում մասնակցելու ընդունելության մրցույթին: Նա կարող է ցանկություն հայտնել մասնակցելու տարբեր բուհերի և այդ բուհերի տարբեր մասնագիտությունների երկու անվճար և ութ վճարովի տեղերի համար մրցույթին:

Քննությունների կազմակերպումը: Միասնական քննություններն անցկացվում են քննական կենտրոններում (2015 թվականին կազմակերպվել է 35 ՔԿ): Քննական կենտրոններն ընտրվում են այն հանրակրթական դպրոցներից ու բուհերից, որոնք ունեն համապատասխան շինություն և պայմաններ: ՔԿ-ներում կիրառվում են բջջային հեռախոսների խլացուցիչներ և հսկողության տեսախցիկներ, որոնցից պատկերները փոխանցվում են հատուկ շինություններում տեղադրված էկրաններին: Այդտեղ թույլատրվում է մտնել դիմորդների ծնողներին՝ հետևելու համար քննությունների ընթացքին:

Քննական կենտրոնների ցանկը նախապես հաստատվում է ԳԹԿ-ի ղեկավարության կողմից և դրվում է ԳԹԿ-ի պաշտոնական կայքում: Յուրաքանչյուր ՔԿ-ի համար ԳԹԿ ղեկավարությունն ընտրում ու հաստատում է կենտրոնի թիմը՝ կենտրոնի ղեկավար, քննությունների կազմակերպիչներ, օպերատորներ, ԳԹԿ ներկայացուցիչներ: Յուրաքանչյուր քննության ժամանակ ՔԿ մասնագետների թիմերը պարտադիր փոփոխվում են: ՔԿ թիմերի տարբեր մասնագետների համար ԳԹԿ-ն կազմակերպում է վերապատրաստման և վարժանքի դասընթացներ: ՔԿ թիմերի մասնակիցներն ընտրվում են ԳԹԿ մասնագետներից, դպրոցների ուսուցիչներից, ԿԳՆ համակարգի աշխատողներից և այլն:

Քննության օրը, վաղ առավոտյան, ՔԿ-ի թիմը բանկի բաժանունքից ստանում է քննական նյութերը (թեստերի գրքույկները, ձևաթղթերը, դիմորդների ցուցակները), համոզվում է, որ ՔԿ-ն պատրաստ է քննության անցկացման համար և ժամը 9:30-ին սկսում քննությունը:

Քննության անցկացումը: Քննության օրը յուրաքանչյուր դիմորդ ՔԿ-ի նախասրահում գրանցվում է օպերատորի կողմից և ստանում իր քննասենյակի համարը: Քննասենյակի մուտքի մոտ դիմորդը ընտրում է (պատահական ընտրությամբ) իր նստարանի համարը, որով էլ որոշվում է թեստի գրքույկի տարբերակը: Քննասենյակում բոլոր դիմորդներին տեղավորելուց հետո, կազմակերպիչները կարդում են քննության անցկացման և ձևաթղթի լրացման կարգը: Այնուհետև բաժանվում են ձևաթղթերը, և դիմորդները լրացնում են դրանց վերին մասը (ԱԱՀ,

տարբերակի համարը, դիմորդի անձնական համարը): Ստուգման ժամանակ ձևաթղթի անանունությունն ապահովելու համար կազմակերպչները քննությունն սկսելուց առաջ կտրում են ձևաթղթերի վերնամասերը և դրանք պահում հատուկ ծրարներում:

Ծնողների ներկայացուցիչների ներկայությամբ բացվում են թեստերի գրքույկների փաթեթները և թեստերը բաժանվում են դիմորդներին: Քննությունը տևում է 2,5-3 ժամ՝ կախված առարկայից: Քննության ընթացքում կարող են լինել դիմորդի հեռացման (քննության կարգը խախտելու համար), առողջության պատճառով քննությունն ընդհատելու (բուժաշխատողի գնումից հետո, որը կա յուրաքանչյուր ՔԿ-ում), անցկացման պայմաններից դիմորդի բողոքի դեպքեր:

Յուրաքանչյուր նման դեպքում ՔԿ-ի ղեկավարը լրացնում է համապատասխան բլանկը՝ լիազորված անձանց (ՔԿ-ի ղեկավար, ԳԹԿ ներկայացուցիչ, դիմորդ, բուժաշխատող) ստորագրությամբ:

Քննության ժամանակի ավարտին դիմորդները հանձնում են ձևաթղթերն ու թեստերի գրքույկները: Օպերատորները պատճենահանում են ձևաթղթերն ու պատճենները տալիս դիմորդներին քննասենյակից դուրս գալուց առաջ: Քննական բոլոր նյութերը հավաքելուց հետո, ՔԿ-ի ղեկավարը դրանք դնում է հերմետիկ կերպով փակվող փաթեթների մեջ և հասցնում ԳԹԿ:

Ստուգումը և արդյունքների հայտարարումը: ՔԿ-ի ղեկավարի կողմից ԳԹԿ-ի տեխնիկական բաժին փաթեթների հանձնումից հետո կատարվում է անանուն (վերնամասերը կտրված) ձևաթղթերի սքանավորում: Ճիշտ պատասխանների <<բանալիների>> հետ համեմատության միջոցով յուրաքանչյուր ձևաթղթի տրվում է անմշակ միավոր 80 միավորանոց համակարգով և դրվում 20 միավորանոց գնահատական: Թեստերի գրքույկները չեն ստուգվում: Այնուհետև, նրբագծային կողերի (շտրիխկոդ) համեմատության միջոցով համապատասխանեցվում են ձևաթուղթն ու դրա վերնամասը, որտեղ գրված են դիմորդի տվյալները: Համապատասխան գնահատական է տրվում դիմորդին և մտցվում տվյալների բազայի մեջ: Այս գործողությունները կատարելու համար տրվում է մի քանի օր, իսկ տվյալ քննության վերջնական արդյունքները հրապարակվում են քննության ավարտից 5 օր հետո: Բայց դիմորդն ինքն էլ հնարավորություն ունի որոշելու իր միավորը (իր գնահատականը) քննության օրը: Բանն այն է, որ բոլոր ՔԿ-ներում քննության ավարտից 2 ժամ հետո Ճիշտ պատասխանների <<բանալիները>> դրվում են ԳԹԿ կայքում, և դիմորդը, ունենալով իր ձևաթղթի պատճենը, կարող է համեմատել դրանք <<բանալիների>> հետ և որոշել իր միավորը:

Արդյունքների պաշտոնական հրապարակումից հետո դիմորդը իրավունք ունի բողոքարկելու (թեստավորման արդյունքը, թեստի բովանդակությունը): Քանի որ ստուգման բնույթը տեխնոլոգիական է, ապա դիմորդի անհամաձայնությունը կարող է լինել որոշ առաջադրանքների պատասխանները սքաների կողմից չճանաչվելու պատճառով: Բոլոր այդ դեպքերում կատարվում է բնագիր ձևաթղթի և պատճենի համեմատություն և կայացվում է վերջնական որոշում: Թեստերի առաջադրանքներում սխալների (վրիպակների) հայտնաբերման դեպքում որոշումը կայացվում է հոգուտ դիմորդի:

Միասնական քննությունների առավելությունները: Միասնական քննությունների համակարգը, մեր կարծիքով, ունի ակնհայտ առավելություններ կենտրոնացված քննությունների հախորդ համակարգերի համեմատությամբ: Թվարկենք դրանցից մի քանիսը:

- Մեկ առարկա-մեկ քննություն: Պետական ավարտական և ընդունելության քննությունների համատեղումը միասնական քննությունների ընթացակարգի շրջանակներում:
- Մեկ առարկա-մեկ օր: Բոլոր դիմորդները տվյալ առարկայից քննությունը հանձնում են նույն օրը (նախկինում մեկ առարկայից քննությունը կարող էր շարունակվել մեկ ամիս):
- Միասնական թեստ բոլորի համար: Բոլոր դիմորդները հանձնում են, ըստ էության, մեկ թեստ (4 համարժեք տարբերակ), այն դեպքում, որ նախկինում քննական տարբերակների բովանդակությունները մեկ ամսվա ընթացքում փոխվում էր օր օրի և արմատապես տարբերվում էին միմյանցից:
- Քննական կենտրոնների մոտ լինելը բնակության վայրին: Նախկինում բոլոր դիմորդները գալիս էին Երևան և ստիպված էին բնակվել տնից հեռու ամբողջ ամառվա ընթացքում:
- Անցկացման թափանցիկ գործընթաց: Ծնողները հնարավորություն ունեն հատուկ սենյակներում հետևելու քննությունների ընթացքին:
- Տեխնոլոգիական ստուգումը: Չկան ստուգող հանձնաժողովներ, ստուգելիս բացառվում են սուբյեկտիվ մեկնաբանությունները:
- Մքանավորման գործընթացում անանունության պահպանումը:
- Գնահատականը հայտնի է մի քանի ժամ հետո՝ ձևաթղթի պատճենի և ճիշտ պատասխանների <<բանալիների>> համեմատության միջոցով: Նախկինում դիմորդը ստիպված էր լարված և անհամբերությամբ սպասել իր գնահատականի պաշտոնական հրապարակմանը մոտ մեկ շաբաթ:

- Ըստ էության, բողոքարկումների բացակայությունը: Գոյություն ունեցող բողոքարկումը տեխնիկական գործողություն է և իրականում չունի անհատական բնույթ: Բացառվում է ստուգման ժամանակ պատասխանների մեկնաբանությունների և սուբյեկտիվ գործոնի մյուս դրսևորումների ազդեցությունը:
- Միասնական մոտեցում բոլոր փուլերում: Ամբողջ գործընթացը թափանցիկ է, դիմորդները գտնվում են հավասար պայմաններում:

4.3 Ազգային քննությունների զարգացման բանավիճային հարցեր

4.2-ում թվարկված առավելությունները հնարավորություն տվեցին ընդունելության քննությունների հետ կապված շատ հարցեր համակարգային ձևով լուծելու: Մասնավորապես, թափանցիկությունը, օբյեկտիվությունը և համակարգչային տեխնոլոգիաների կիրառումը թեստերի մշակման, քննությունների նախապատրաստման և անցկացման, ձևաթղթերի սքանավորման միջոցով աշխատանքների ստուգման, արդյունքների հրապարակման և ընդունելության մրցույթի անցկացման փուլերում հնարավորություն տվեցին հասնելու, հավանաբար, ամենակարևոր արդյունքին՝ *հասարակության մեջ բարձրացել է քննությունների արդյունքների նկատմամբ վստահության մակարդակը և նվազել է քննությունների հետ կապված լարվածությունը:*

Միասնական քննությունների իրականացման տարբեր փուլերում համակարգային շատ լուծումներ հաջող դուրս եկան: Մասնավորապես, քննական առաջադրանքների հրատարակումը (մոտ 5000 առաջադրանք քննական գրեթե բոլոր առարկաներից) հանգեցրեց թեստերի որակի բարձրացմանը: Քննություններից շատ առաջ ունենալով շտեմարաններ՝ մասնագետներն ու հասարակությունը հնարավորություն են ստանում քննարկելու առաջադրանքների որակը, դրանց համապատասխանությունը ուսումնական ծրագրերին, գտնելու թեստաբանական սխալներ, տարբեր թերություններ և վրիպակներ: Թեստեր կազմողները, նման դեպքերում, օգտագործելով արված դիտողություններն ու ճշգրտումները, ավելի հեշտ են կազմում թեստերը՝ խուսափելով անսպասելի սխալներից և թերություններից: Կանխատեսելիությունն ու <<անակնկալներով>> առաջադրանքների բացակայությունը իրավիճակը դարձնում են թափանցիկ ու հասկանալի:

Դրան զուգահեռ բանավիճային հարցեր են առաջանում իրավիճակի հետագա բարելավման վերաբերյալ: Այսպես, շտեմարանների ստեղծումը կարող է հանգեցնել այն բանին, որ կավելանա հրատարակված շտեմարաններն օգտագործող կրկուսույցների թիվը: Դպրոցական պարապմունքները և դասագրքերը այս դեպքում կարող են բանի պետք

չլինել: Բացի այդ, շտեմարանների հրատարակումը (անգամ մասնակի) կարող է հանգեցնել քննությունների հանձնման տարբեր տիպի անագնիվ միջոցների ստեղծման (պատասխանների ծածկաթերթիկներ, պատասխանների ֆոտոպատճեններ, բջջային հեռախոսների օգտագործում տեղեկություններ հաղորդելու համար):

Դրա հետ կապված՝ լավ լուծում կարող է լինել ոչ թե շտեմարանի հրատարակումը՝ իր պատասխաններով, այլ մոդելային առաջադրանքների շտեմարանների, որոնք կարող են «կլոնավորվել»: Այդ դեպքում պատասխաններով ծածկաթերթիկները կորցնում են իրենց իմաստը, անիմաստ է դառնում պատասխանները արհեստականորեն անգիր անելը՝ առանց առաջադրանքի էության մեջ խորանալու (այդպիսի դեպքերի փորձեր նույնպես եղել են): Թեստեր կազմողները ստանում են որոշ ազատություն (բացասական իմաստով) թեստեր ստեղծելիս (մեծանում է սխալներ թույլ տալու հավանականությունը), բայց ձեռք են բերվում ակնհայտ առավելություններ (ծածկաթերթիկներն ու անգիր անելը չեն փրկում՝ պարապել է պետք):

Մյուս բանավիճային հարցը, մեր կարծիքով, բոլոր քննությունների արդյունքներով վերջնական մրցութային գնահատականի ձևավորումն է: Այսօր Հայաստանում բոլոր մրցութային առարկաների գնահատականները պարզապես միագումարվում են (այդպես է արվում նաև աշխարհի շատ երկրներում) և ստացած վերջնական գնահատականով դիմորդը մասնակցում է ընդունելության մրցույթին: Այսինքն, մրցութային առարկաները վերջնական մրցութային գնահատականի ձևավորմանը մասնակցում են միևնույն «կշիռներով»: Մեր կարծիքով, կոնկրետ առարկայի «կշիռը» պետք է կախված լինի այն բուհից և մասնագիտությունից, որի համար տեղի է ունենում մրցույթը: Այսպես, «Հայոց լեզու» առարկան հումանիտար և տեխնիկական մասնագիտությունների համար պետք է ունենա տարբեր «կշիռներ»: Նույն ձևով, «Օտար լեզու» առարկան «միջազգայնագետների» և «տնտեսագետների» համար պետք է ունենա տարբեր «կշիռներ»: «Կշիռների» մասին դրույթն արձանագրված է ՀՀ կառավարության կողմից հաստատված «Սովորողների գնահատման հայեցակարգում» (տե՛ս [12]): Սակայն իրականում այս սկզբունքը չի կիրառվում: Այս հարցի մասին մանրամասն շարադրված է [36, 37]-ում:

Վերջնական մրցութային գնահատականի ձևավորման վերաբերյալ մյուս բանավիճային հարցը վերաբերում է բոլոր առարկաներից գնահատականների գումարման սկզբունքին: Պարզության համար քննարկենք երկու մրցութային առարկաների դեպքը: Ենթադրենք դիմորդը x և y առարկաներից ստացել է X և Y գնահատականները: Այդ դեպքում նրա վերջնական գնահատականը $X+Y$ -ն է: Եթե պատկերացնենք x և y

առանցքներով կոորդինատային հարթություն, իսկ որպես դիմորդ $(X:Y)$ կետը այդ հարթության վրա, ապա $X+Y$ թիվը բնութագրում է այդ կետի կոորդինատների (պրոյեկցիաները x և y առանցքների վրա) գումարը: Մեր կարծիքով, ուշադրության արժանի է այն մոտեցումը, որով որպես վերջնական մրցութային գնահատական դիտարկվում է ոչ թե $X+Y$ մեծությունը, այլ $\sqrt{X^2+Y^2}$ (կլորացված մինչև ամբողջը): Այս թիվը բնորոշում է $(X:Y)$ կետի հեռավորությունը կոորդինատների սկզբնակետից:

Երկրաչափական մեկնաբանությամբ՝ $X+Y$ թիվը արտահայտում է դիմորդի $((X:Y)$ կետի) անցած ճանապարհը ընդունելության քննությունների ընթացքում (կոորդինատային առանցքների երկայնքով), երբ շարժումը սկսվում է կոորդինատների սկզբնակետից՝ $(0:0)$ կետից: Իսկ $\sqrt{X^2+Y^2}$ թիվը բնութագրում է այն, թե կոորդինատների սկզբնակետից (մեկնարկային դիրքից) որքան հեռու է քննությունների արդյունքում հայտվել դիմորդը:

Դժվար չէ համոզվելը (համարատասխան օրինակներ բերելը), որ մրցույթների արդյունքները $X+Y$ և $\sqrt{X^2+Y^2}$ վերջնական գնահատականներով հաշվարկելիս կարող են էական տարբերություններ տալ: Պարզ է, որ ի տարբերություն $X+Y$ -ի, $\sqrt{X^2+Y^2}$ մեծությունը կարող է ամբողջ թիվ չլինել (հարմար չէ օգտագործելը), սակայն հարց է ծագում՝ մենք ճիշտ (արդարացի) ենք վարվում, երբ <<սկզբնական դիրքից իրական հեռավորությունների>> փոխարեն համեմատում ենք <<անցած ճանապարհները>>:

Մյուս բանավիճային հարցերը, կապված դիմորդներին բուհեր ընդունելու գործընթացի հետ, առաջանում են միասնական քննությունների ցուցանիշների հետ նաև դիմորդի դպրոցական առաջադիմության ցուցանիշների օգտագործման գաղափարի կապակցությամբ: Այս հարցի քննարկումներն արտացոլված են [36, 37]-ում:

Վերջերս Հայաստանում բավականին հաճախ է քննարկվում միասնական քննությունների իրականացման ձևի փոփոխման հարցը: Քննարկվում է այսօր իրականացվող թղթե գրքույկների և ձևաթղթերի լրացման փոխարեն համակարգչային միջոցների կիրառմամբ թեստավորում անցկացնելու հնարավորությունը: Մեր կարծիքով, ապագայում համակարգչային թեստավորման անցումն անխուսափելի է: Մակայն բացի այդ մեթոդի ներդրման անհրաժեշտ ռեսուրսների, պլյուսների և մինուսների հաշարկումից, պետք է վստահ լինել, որ համակարգչային տեխնոլոգիաներից օգտվելու կարողությունները չեն ազդում առարկայական գիտելիքների վրա: Այլապես կարող է այնպիսի

իրադրություն ստեղծվել, որ համակարգչին ավելի լավ տիրապետող դիմորդը կստանա ավելի բարձր գնահատական, օրինակ՝ ֆիզիկայից, քան տաղանդավոր ֆիզիկոսը, որը չի տիրապետում (կամ վատ է տիրապետում) համակարգչին:

5. Գնահատման ներդպրոցական համակարգը

Պետք է հիշել, որ թեստավորման մեթոդը բոլոր դժբախտությունների դեմ համադարման չէ: Ինչպես ամեն մի գիտականորեն հիմնավորված մեթոդ, այն ունի իր կիրառման սահմաններն ու պայմանները (տե՛ս [25]): Այն հատկապես արդյունավետ է, երբ պահանջվում է կարճ ժամանակահատվածում հնարավորինս ամբողջական տեղեկություններ ստանալ բավականին շատ հարցվողների մասին:

Իհարկե, թեստավորման մեթոդի կիրառմամբ հնարավոր չէ պարզել յուրաքանչյուր հարցվողի խորքային դրսևորումները, իմանալ յուրաքանչյուր փորձարկվողի բացառիկ առանձնահատկություններն ու ներուժը: Բայց բանն այն է, որ այդպիսի նպատակ չի էլ դրվում (մասնավորապես, մասշտաբային մշտադիտարկային միջոցառումների ժամանակ), և այդ տիպի սպասումներն անհիմն են և ոչ գիտական: Այս հանգամանքի հիշեցումը հաճախ հանգեցնում է անհիմն քննադատության և թեստավորման մեթոդից հիասթափության:

Այս հանգամանքը հատկապես կարևոր է հաշվի առնել ներդպրոցական (ներդասարանական) ընթացիկ գնահատման ժամանակ: Այստեղ ուսուցիչը հնարավորություն ունի երկար ժամանակի ընթացքում (քառորդի, կիսամյակի, տարվա) լիարժեք և համակողմանի կարծիք կազմելու ոչ միայն աշակերտի արդեն ձեռք բերած գիտելիքների և կարողությունների, այլև յուրաքանչյուր աշակերտի ներուժի, ուժեղ և թույլ կողմերի մասին, զարգացնելու ուսումնական գործընթացի ժամանակ նրա դրսևորած հակումները, ուղղելու և օգնելու աշակերտին այն հարցերում, որոնցում, պարզվում է, նա թույլ է կամ հետ է մնում: Պարզ է, որ այդ նպատակներին հասնելու համար թեստավորման մեթոդը բավական չէ:

Շատ ավելի արդյունավետ կլինի ուսուցչի ամենօրյա (ամենշաբաթյա) շփումը աշակերտի հետ և տարբեր (գրավոր և բանավոր) գնահատման ձևերի կիրառումը: Մակայն այս դեպքում ևս թեստավորման մեթոդը կարող է իր դրական դերը խաղալ, եթե այն նպատակային կիրառվի:

Տասնամյակներ շարունակ ընթացիկ ներդպրոցական գնահատումը մեր դպրոցներում իրականացվում է հիմնականում բանավոր հարցումների և ստուգողական գրավոր աշխատանքների միջոցով: Կարծում ենք, որ

գնահատելիս նման մոտեցումը աշակերտի առաջադիմության ամբողջական պատկերը ստանալու հնարավորություն չի տալիս: Գնահատվում էին միայն աշակերտի կոնկրետ գիտելիքները, իսկ նրա շատ կարողություններ և ունակություններ մնում էին ստվերում: Բացի այդ գնահատման (գրավոր և բանավոր) հաճախակիությունը շատ բանով կախված էր ուսուցչի սուբյեկտիվ նպատակներից: Դրա հետևանքով ձևավորվում էր քառորդային (կամ տարեկան) գնահատականը, որը շատ դեպքերում բնավ էլ չէր արտացոլում սովորողի գիտելիքների, կարողությունների և ունակությունների ամբողջ սպեկտրը:

Սովորողների առաջադիմության ներդասարանային գնահատման նոր մեթոդներ ու սկզբունքներ են առաջարկվել գնահատման հայեցակարգում [12] և ներդպրոցական գնահատման կարգում [38] (տե՛ս նաև [36, 37]):

ՀՀ ԿԳՆ մեթոդական ցուցումներ համաձայն (տե՛ս [21]), ՀՀ դպրոցներում ներդպրոցական (ներդասարանական) ընթացիկ գնահատում անցկացվում է հետևյալ մեթոդների գուգակցման հիման վրա.

- համառոտ թեստ (5-10 րոպե) անցած թեմայի յուրացման մակարդակը արագ պարզելու համար,
- բանավոր հարցում,
- լիարժեք թեմատիկ աշխատանք/թեստ (45 րոպե) առարկայի հաջորդ բաժին անցնելուց առաջ իրավիճակը պարզելու համար,
- գործնական աշխատանք,
- ամփոփիչ ստուգում/թեստ (90 րոպե) ուսուցման որոշակի շրջանի (քառորդային, կիսամյակային, տարեկան) ավարտից հետո:

Գնահատման մեթոդների ցանկը կարող է ճշգրտվել և լրացվել (ինքնուրույն հետազոտություն, տնային հանձնարարություն, խմբային աշխատանք և այլն)՝ կախված առարկայից և գնահատման նպատակից:

Տվյալ ժամանակահատվածում սովորողի առաջադիմության վերջնական գնահատականում պետք է հաշվի առնվեն գնահատման բոլոր ձևերի ցուցանիշները: Այդպիսով ստացված վերջնական գնահատականը ավելի ճշգրիտ կարտացոլի տվյալ ժամանակահատվածում սովորողի ցուցաբերած կարողությունների, գիտելիքների և ունակությունների ամբողջ սպեկտրը:

Գնահատման թվարկված բոլոր մեթոդներով ու եղանակներով բոլոր գնահատումները կատարվում են 10 միավորանոց սանդղակով, որից հետո միագումարվում են (այստեղ ևս, մեր կարծիքով, տեղին է <<կշռային>> մոտեցումը) [36-38]:

ՀՀ ԿԳՆ մեթոդական ցուցումներում [21] առաջարկվում է առավել սովորական 5 միավորանոց գնահատականներից 10 միավորանոցներին անցնելու հետևյալ աղյուսակը.

Աղյուսակ 5

Անցումը 5 միավորանոց գնահատականներից 10 միավորանոցներին

5 միավորանոց գնահատական	0	1	2	2+	3-	3	3+,4-	4	4+,5-	5	5+
10 միավորանոց գնահատական	0	1	2	3	4	5	6	7	8	9	10

Աղբյուրը՝ ԿԱԻ-ի պաշտոնական կայքը

Ներդպրոցական գնահատման թվարկված միջոցառումները հաջողությամբ իրականացնելու համար պետք է ունենալ որակյալ (ոչ միայն առարկայական գիտելիքների և դասավանդման մանկավարժական մեթոդների, այլև թեստաբանության հիմքերի իմացության իմաստով) մանկավարժներ: Այսօր Հայաստանում մանկավարժներ հիմնականում պատրաստում են մանկավարժական բուհերը՝ Հայկական պետական մանկավարժական համալսարանը և Երևանի պետական լեզվա-հասարակագիտական համալսարանը (ԵՊԼՀ), ինչպես նաև Երևանի պետական համալսարանն ու մանկավարժական քոլեջները: ՀՀ ԿԳՆ-ն, մասնավորապես, Կրթական ծրագրերի կենտրոնի «Որակ և համապատասխանություն» (տե՛ս [17]) ծրագրի միջոցով իրականացնում են ուսուցիչների որակավորման բարձրացման տարատեսակ դասընթացներ: READ ծրագրի շրջանակներում միջազգային մասնագետների մասնակցությամբ անցկացվել են սեմինարներ և վարժանքներ: ԿԱԻ-ին կանոնավոր կերպով կազմակերպում է ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ՝ կապված դասավանդվող հանրակրթական առարկաների ծրագրերում կատարված փոփոխությունների և դասավանդման նոր մեթոդների ներդրման հետ: Գնահատման նոր մեթոդների ներդրման հետ կապված՝ մանկավարժների համար միջոցառումներ (դասախոսություններ, սեմինարներ, վարժանքներ) է իրականացնում ԳԹԿ-ն:

Մեզ հայտնի են նշված հինախնդիրը լուծելու նաև այլ կոնկրետ փորձեր և քայլեր, մասնավորապես, ԵՊԼՀ-ում ջանքեր են գործադրվել կրթության որակի գնահատման մագիստրային ծրագրի ստեղծման ուղղությամբ, բայց արդյունքների մասին խոսելը վաղ է:

Կարծում ենք, որ այս ուղղությամբ հիմնական քայլ կարող է դառնալ Հայաստանի մասնակցությունը հանրակրթական դպրոցների ուսուցիչների համար TEDS միջազգային հետազոտությանը (տե՛ս [39]) կամ գոնե այդ թեմայով ազգային հետազոտությանը: Հայտնաբերված որևէ հիմնահարց արդյունավետ լուծելու համար, նախևառաջ, *պետք է ունենալ*

հավաստի տվյալներ դրա դրսևորումների, տարածման մասշտաբների և դրա լուծման միջազգային փորձի վերաբերյալ:

6. ՀՈԳԱՀ-ի զարգացման հիմնական դասերն ու հեռանկարները

Մոտ 15 տարի Հայաստանում աշխատանքներ են կատարվում ՀՈԳԱՀ-ում բարեփոխումներ իրականացնելու ուղղությամբ: Գոյություն ունեցող ԿՈԳ համակարգի փոփոխման անհրաժեշտությունը առաջին անգամ զգացվեց՝ կապված ընդունելության քննությունների հետ: 1991 թվականից գործող արտաքին կենտրոնացված քննությունների համակարգը, չնայած բավականին հաջող (հատկապես ներդրման առաջին տարիներին) կիրառմանը 10 տարիների ընթացքում, սկսել էր վատ աշխատել: Միջնակարգ դպրոցը (հատկապես ավարտական դասարանները) կորցնում էր իր գործառույթները, քանի որ հրապարակվել էին քննական առաջադրանքների շտեմարանները, որոնցով կրկուսույցները <<սովորեցնում>> էին դիմորդներին, իսկ դպրոցի պարապմունքները միայն <<խանգարում>> էին և շեղում ընդունելության քննություններին նախապատրաստվելուց: Ամբողջ ամառվա ընթացքում անցկացվող կենտրոնացված քննությունները մեծ լարվածություն էին առաջացնում հասարակության մեջ: Հիմա առավել ևս կարևոր է նշելը այդ հանգամանքը, քանի որ այսօր *ակնհայտ է հասարակության անհանգստության նվազումը*: Միասնական քննություններն անցնում են հանգիստ պայմաններում, սովորական արդեն աշխատանքային ռեժիմով:

Անհնար է չնկատել իրավիճակի էական փոփոխությունը, եթե հաշվի առնենք, մասնավորապես, որ լարված, սուբյեկտիվության և անվստահության պայմաններում ամիսներ շարունակ ընթացող, դիմորդներին ու նրանց ծնողներին հալումաշ անող քննական գործընթացի (մեկ կոնկրետ առարկայից) փոխարեն այսօր առկա է երեքժամյա (կամ ավելի քիչ) թեստավորման գործընթաց, բնակավայրին մոտ, որի արդյունքները հայտնի են դառնում քննությունից արդեն երկու ժամ հետո:

ԿՈԳ նոր համակարգի ներդրման ուղղությամբ առաջին կոնկրետ քայլերն արվեցին TIMSS 2003 միջազգային համեմատական հետազոտությանը Հայաստանի մասնակցության ժամանակ: Հիշելով այդ ժամանակները պետք է նկատել, որ TIMSS 2003 հետազոտության իրականացման յուրաքանչյուր փուլում շատ բաներ նորույթ էին, երբեմն անհասկանալի (հաճախ նաև անընդունելի): Անգամ շատ ուսուցիչներ և դպրոցի տնօրեններ, էլ չասենք աշակերտների մասին, չէին իմանում, թե ինչպես պետք է լրացնել պարզ հարցաթերթիկները, գործընթացին մասնակցում

Էին թերահավատությամբ ու անվստահությամբ, դա ընդունում էին որպես արտաքին մշտադիտարկման միջոցառում կոնկրետ իրենց դպրոցում, որին անխուսափելիորեն պետք է հաջորդեն ինչ-որ պատժամիջոցներ: Հիմա հիմնական դասն անցել ենք, ու թեև դեռ շուտ է արդյունքներն ամփոփելը և, առավել ևս, հավաստելը, որ բոլոր հիմնախնդիրները հաջողությամբ լուծվել են, բայց ակնհայտ է զարգացման ուղղությունը և տեսանելի են հետագա քայլերի հեռանկարները ԿՈԳԱՀ-ի լիակատար կայացման ճանապարհին:

Հիմնախնդիրները

Հայաստանում ԿՈԳ-ի ոլորտում հիմնական խնդիրը, մեր կարծիքով, որակյալ կադրերի՝ մանկավարժական մշտադիտարկային հետազոտությունների բնագավառում մասնագիտացած թեստաբանների, սոցիոլոգների, մաթեմատիկոսների, փսիխոմետրիկայի և համակարգչային տեխնոլոգիաների մասնագետների պակասն է:

Չնայած բավարար թվով բարձրորակ ուսուցիչների, ուսումնական առարկաների մասնագետների ու գիտնականների առկայությանը՝ նրանց մեծ մասը չունի գնահատման տեսության վերաբերյալ համապատասխան գիտելիքներ (տե՛ս [25]) և փորձ ԿՈԳ-ի բնագավառում:

Զարմանալի է այն փաստը, որ դեռևս 25 տարի առաջ թեստաբանությունը որպես գիտության ճյուղ ԽՍՀՄ-ում հայտնի չէր: Առավել ևս տարօրինակ է սա, եթե նկատի ունենանք, որ, չնայած ԽՍՀՄ-ում առկա բոլոր թերություններին (քաղաքական, տնտեսական), հիմնարար գիտությունները միշտ հարգանքի էին արժանանում, իսկ շատ ուղղություններում աշխարհում առաջատար դիրքեր էին զբաղեցնում: Բնականաբար, ԿՈԳ-ի ոլորտում ոչ մի մասշտաբային հետազոտությունների մասին այն ժամանակ չէր էլ խոսվում: Այդպիսի հետազոտությունների արդիականության ըմբռնումն ավելանում է, բայց Հայաստանի բուհերը ինչպես չէին պատրաստում, այնպես էլ շարունակում են չպատրաստել ԿՈԳ-ի ոլորտի մասնագետներ: Հայաստանի բուհերի (այդ թվում նաև մանկավարժական) շրջանավարտները լիարժեք գիտելիքներ չեն ստանում ԿՈԳ-ի ոլորտի վերաբերյալ, իսկ ուսուցիչների վերապատրաստման ծրագրերը, հիմնականում, վերաբերում են մանկավարժությանը և ուսումնական առարկաների ոլորտներին:

Հատկապես ցավալի է երիտասարդ կադրերի պակասը: Փոքրաթիվ երիտասարդ գիտնականների համար, ովքեր վերաորակավորվել են այլ մասնագիտություններից (մանկավարժություն, մաթեմատիկա, սոցիոլոգիա և այլն), դժվար է գիտությամբ զբաղվելը՝ կապված *թեստաբանության և փսիխոմետրիկայի վերաբերյալ հայերեն գրականության, ԿՈԳ-ի ոլորտի վերաբերյալ մասնագիտական հանդեսների պակասի և ՀՀ ԲՈՀ-*

ում համապատասխան մասնագիտության բացակայության հետ, որով հնարավոր լինելը թեկնածուական թեզեր պաշտպանել և ստանալ գիտական աստիճան:

Սակայն վերջին տարիներին քիչ բան չի արվել իրավիճակը շտկելու համար, այդ թվում նաև այդ ուղղությամբ: Անցկացվում են սեմինարներ, համաժողովներ, դասախոսություններ կարդալու համար հրավիրվում են հայտնի մասնագետներ, անցկացվում են դասընթացներ, վերապատրաստումներ: TIMSS միջազգային հետազոտություններին Հայաստանի մասնակցության, հանրապետությունում անցկացվող ազգային հետազոտությունների, միասնական քննությունների համակարգի ներդրման և ԿՈԳ-ի վերաբերյալ այլ միջոցառումների շնորհիվ, աստիճանաբար անհրաժեշտ փորձը ձեռք է բերվում, ներգրավվում են նոր կադրեր, բարձրանում է այդ գործում ներգրավված մասնագետների որակավորումը:

Նվաճումները

3.2-ում և 4.2-ում արդեն նշել ենք Հայաստանում մշտադիտարկային հետազոտությունների և պետական միասնական քննությունների բնագավառում մի քանի նվաճումների և զարգացման հեռանկարների մասին:

Վերջին 15 տարիների ընթացքում մեզ հաջողվեց դառնալ TIMSS միջազգային հետազոտությունների լիիրավ մասնակից, ստեղծել և անհրաժեշտ սարքավորումներով ապահովել ԳԹԿ-ն, մշակել գնահատման բազմաթիվ ազգային գործիքներ, իրականացնել մի քանի ազգային նախագծեր և վերապատրաստման ծրագրեր, նախապատրաստել, կազմակերպել և իրականացնել պետական ավարտական քննությաններին, միասնական քննությունների, ավագ դպրոցում արտաքին գնահատման միջոցառումների համակարգը և կատարել Հայաստանում ՀՈԳԱՀ-ի կայացմանն ու զարգացմանն ուղղված այլ քայլեր:

Մեզ հաջողվեց անցկացնել TIMSS 5 հետազոտություն, և չնայած սովորողների առաջադիմության ցուցանիշները հեռու էին իդեալական լինելուց, բայց այդ հետազոտությունների Հայաստանում անցկացման որակը բարձր էր (դա նշեց նաև IEA-ի ղեկավարությունը 2007 թվականին՝ առաջարկելով ՀՀ ԿԳՆ-ին իր թեկնածությունը դնելու IEA-ի անդամ դառնալու համար):

Վերջին 5 տարում մենք կարևոր քայլեր արեցիք ազգային հետազոտությունների ինստիտուտի կայացման ու լիարժեք գործելու ուղղությամբ: 10 տարվա ընթացքում կատարվեց լիակատար անցում կենտրոնացված ընդունելության քննությունների համակարգից միասնական քննությունների համակարգին: Դրա շնորհիվ վերջին տարիներին զգալիորեն

բարձրացել է միասնական քննությունների արդյունքների նկատմամբ հասարակության վստահության մակարդակը:

Մենք կարևոր նվաճում ենք համարում նաև մեր գործունեությունը EAOKO (Կրթության որակի գնահատման եվրասիական ասոցիացիա) ասոցիացիայի հետ համագործակցության ասպարեզում: READ ծրագրի շրջանակներում, մասնավորապես, ներդրման բոլոր փուլերն անցնելուց հետո, ICT գրագիտության մասշտաբային հետազոտություն անցկացվեց, ինչը դարձավ Հայաստանում համակարգչային թեստավորման առաջին միջոցառումը և հնարավոր է դառնա համակարգչային միասնական քննություններին անցնելու առաջին քայլը:

Իհարկե, դեռ կան թերություններ, հիմնահարցեր ու խնդիրներ: Բայց պետք է հաշվի առնել, որ որոշ երկրներում թեստավորման մեթոդը սկսել են կիրառել դեռևս 19-րդ դարում, իսկ մենք՝ ընդամենը 15 տարի առաջ:

Հետագա զարգացման ուղիները

ՀՈԳԱՀ-ի գործունեության բոլոր դրսևորումներում մենք տեսնում ենք հետագա զարգացման ուղղությունները: Հուսով ենք, որ մասշտաբային *միջազգային հետազոտությունների* ոլորտում, TIMSS հետազոտություններից բացի, Հայաստանը մի օր կմասնակցի նաև այլ միջազգային հետազոտությունների՝ PIRLS, PISA, TEDS, ICILS և այլն: Դրա անհրաժեշտությունը ակնհայտ է, և մենք հույս ունենք, որ Հայաստանը ժամանակի ընթացքում կգտնի անհրաժեշտով ռեսուրսները (ոչ միայն ֆինանսական):

Ազգային հետազոտությունների բնագավառում մենք ստեղծել ենք բավական ներուժ, ինչը մեզ լավատեսության առիթ է տալիս: Անկասկած, ԳԹԿ-ն կշարունակի բարելավել ազգային հետազոտությունների գործիքները (տե՛ս 3.1) և կանցկացնի մասշտաբային մշտադիտարկային հետազոտություններ դրանց կիրառմամբ:

Միջազգային և ազգային հետազոտությունների իրականացման հսկայական ներուժ ունի EAOKO-ն: Հայաստանը բավական ակտիորեն մասնակցել է (և կշարունակի մասնակցել) EAOKO -ի գործունեությանը, որի շրջանակներում կարող են հաջողությամբ իրականացվել տարբեր ծրագրեր: Մասնավորապես, մենք հուսով ենք, որ Հայաստանում իր գործունեությունը կվերակսի READ ծրագիրը, ինչը հնարավորություն կտա անցկացնելու ICT գրագիտության հետազոտություն, գործիքի որակը հասցնելու միջազգային մակարդակի և մասնակցելու արդեն ICT գրագիտության միջազգային համեմատական հետազոտությանը EAOKO -ի շրջանակներում: Բացի այդ, մենք հույս ունենք սկսելու և հաջողությամբ իրականացնելու TASS, SAM և այլ ծրագրեր:

EAOKO ասոցիացիայի գործունեության շրջանակներում զարգացման մյուս խիստ կարևոր ուղղությունը մենք համարում ենք <<Ռուսաց լեզվից>> միջազգային համեմատական հետազոտությունը: Այդ հետազոտության անհրաժեշտությունը վաղուց արդեն առկա է և երկար ու մանրամասն հիմնավորելու կարիք չկա: 3.2-ում արդեն նշել ենք, որ CICODE կենտրոնի <<Փոքր դրամաշնորհների>> օգնությամբ մեզ հաջողվեց ռուսաց լեզվից հետազոտություն անցկացնել մի փոքր նպատակային խմբում: Վստահ եմ, որ ռուսաստանցի մեր գործընկերների օգնությամբ, EAOKO շրջանակներում, մեզ կհաջողվի ԱՊՀ երկրներում (կամ ավելի մեծ նպատակային խմբում) ռուսաց լեզվի դասավանդման և յուրացման վիճակին ուղղված մասշտաբային համեմատական հետազոտության նախագիծ մշակել և իրականացնել:

Զարգացման երկար ճանապարհ պետք է անցնել նաև ԿՈԳ-ի այլ ուղղություններով: 4.3-ում միասնական քննությունների վերաբերյալ մի քանի բանավիճային հարցեր արդեն շարադրել ենք: Մեծ մասշտաբի միջոցառումների ժամանակ (պետական ավարտական քննություններ, ավագ դպրոցում ընթացիկ առաջադիմության արտաքին մշտադիտարկում) պետք է աշխատել գնահատման գործիքների որակի բարելավման ուղղությամբ (այդ թվում վերլուծելով, լրամշակելով և բարելավելով առաջադրանքների շտեմարանները): Հաշվի առնելով անցած տարիների փորձը՝ պետք է լրամշակել գնահատման որոշ բնութագրիչներ ու իրականացման ընթացակարգեր, ինչը կօգնի բարձրացնել տեղեկատվական անվտանգության շեմը և հավաստի դարձնել գնահատման ուղղությամբ իրականացվող միջոցառումների արդյունքները:

Սկզբնաղբյուրներ

Նորմատիվ-իրավական փաստաթղթեր

1. ՀՀ Սահմանադրություն // 1995 թ. հունիսի 5
<http://www.edu.am/index.php?menu1=85&arch=0>.
2. ՀՀ օրենքը կրթության մասին // 1999 թ. ապրիլի 14, № ՀՕ-297-Ն
<http://www.edu.am/index.php?id=5&topMenu=-1&menu1=85&menu2=89&arch=0>.
3. ՀՀ օրենքը հանրակրթության մասին // 2009 թ. հունիսի 10, № ՀՕ-160-Ն <http://www.edu.am/index.php?id=3566&topMenu=-1&menu1=85&menu2=89&arch=0>.
4. ՀՀ օրենքը Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին // 2004 թ. դեկտեմբերի 14, № ՀՕ-62-Ն
<http://www.edu.am/index.php?id=5983&topMenu=-1&menu1=85&menu2=89&arch=0>.
5. ՀՀ օրենքը ՀՀ կրթության զարգացման 2001-2005 թվականների պետական ծրագիրը հաստատելու մասին // 2001 թ. հունիսի 26, № ՀՕ-199-Ն <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1422&lang=arm/>.
6. ՀՀ օրենքը ՀՀ կրթության զարգացման 2011-2015 թվականների պետական ծրագիրը հաստատելու մասին // 2011 թ. հունիսի 23, № ՀՕ-246-Ն <http://www.edu.am/index.php?id=5545&topMenu=-1&menu1=85&menu2=89&arch=0>.
7. ՀՀ կառավարության որոշումը օտարերկրյա պետությունների և միջազգային վարկատու կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող վարկային և դրամաշնորհային միջոցների հաշվին ծրագրերի իրականացման միջոցառումների մասին // 1999 թ. դեկտեմբերի 22, № 769-Ն (փփխվ. 2010 թ. հոկտեմբերի 7, № 1369-Ն)
<http://www.arlis.am/documentview.aspx?docID=70542>.
8. TIMSS 2003 միջազգային հետազոտությանը Հայաստանի մասնակցության մասին ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանը // 2002 թ. փետրվարի 6, № 33-Մ
9. ՀՀ կառավարության որոշումը ՀՀ ԿԳՆ վարկային և դրամաշնորհային ծրագրերի կառավարման խորհրդի կանոնադրությունն ու անհատական կազմը հաստատելու մասին // 2003 թ. սեպտեմբերի 26, № 456-Ն
<http://www.cfep.am/sites/default/files/documents/3.pdf>.

10. ՀՀ կառավարության որոշումը ՀՀ կառավարության 2005 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին // 2004 թ. դեկտեմբերի 30, № 1922-Ն <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=48240>.
11. ՀՀ կառավարության որոշումը հանրակրթության պետական չափորոշիչը հաստատելու մասին // 2004 թ. հունիսի 17, № 900-Ն <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=12604>.
12. Սովորողների գնահատման հայեցակարգի մասին ՀՀ կառավարության 2005 թ. ապրիլի 14-ի նիստի արձանագրության հավելված № 14
13. ՀՀ կառավարության որոշումը «Գնահատման և թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ ստեղծելու և «Գնահատման և թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրությունը հաստատելու մասին // 2004 թ. ապրիլի 14, № 586-Ն (փփխվ. 2009 թ. հոկտեմբերի 29, № 1290-Ն) http://www.atc.am/orensdrakan/or_01.pdf.
14. ՀՀ ԿԳ նախարարի հրամանը հանրակրթական ուսումնական հաստատություններում աշակերտների փոխադրման, ավարտման և քննությունների կազմակերպման կարգը հաստատելու մասին // 2007 թ. փետրվարի 21, № 88-Ն <http://www.edu.am/index.php?id=401&topMenu=1&menu1=85&menu2=117>.
15. ՀՀ ԿԳ նախարարի հրամանը հանրակրթական ուսումնական հաստատություններում «Հայոց լեզու, գրականություն» առարկային պետական ավարտական քննություն անցկացնելու մասին // 2007 թ. մայիսի 2, № 322-Ն)
16. 2009 թ. պետական միասնական քննությունների կազմակերպման և անցկացման ընթացակարգի մասին, ՀՀ ԿԳ նախարարի 2009 թ. հունվարի 12-ի № 03-Ն հրամանի հավելված http://www.edu.am/DownloadFile/3074arm-miasnakan_qnnutyunner_2009.pdf.
17. ՀՀ կառավարության որոշումը ՀՀ և միջազգային զարգացման ընկերակցության միջև ֆինանսավորման համաձայնագիրը (Կրթության որակի և համապատասխանության երկրորդ ծրագիր) վավերացնելու մասին // 2009 թ. հուլիսի 10, № Ն-153-4 <http://www.cfep.am/sites/default/files/documents/4.pdf>.
18. ՀՀ կառավարության որոշումը պետական և ոչ պետական ուսումնական հաստատություն ընդունելության կարգը հաստատելու մասին // 2012 թ. ապրիլի 26, № 597-Ն http://www.atc.am/files/orensdrakan/Karavarutyanyan_voroshum.pdf.

19. ՀՀ կառավարության որոշումը 20015-2016 բուհերի մասնագիտությունների և ընդունելության քննությունների ցանկը հաստատելու մասին // 2014 թ. նոյեմբերի 27, № 597-Ն
<http://www.edu.am/DownloadFile/6970arm-1343k.voroshum-1.pdf>.
20. Պետական ավարտական քննությունների անցկացման կարգը և ժամկետները. ՀՀ ԿԳ նախարարի հրամանը // 2015 թ. մայիսի 4, № 597379-Ա/Ք http://www.edu.am/DownloadFile/7101arm-ASHXATAKARG_2014-2015.pdf.
21. Հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների ուսուցման արդյունքների ընթացիկ ստուգման և գնահատման տասը միավորային սանդղակի անցման մասին. ԿԳՆ մեթոդական ցուցումներ
<http://www.edu.am/index.php?id=2857&topMenu=-1&menu1=9&menu2=129&arch=0>.
22. Ավագ դպրոցների համակարգի ստեղծման ռազմավարական ծրագիր. ՀՀ կառավարության որոշման հավելված // 2008 թ. հունիսի 17, № 900-Ն
<http://www.edu.am/index.php?id=1465&topMenu=-1&menu1=9&menu2=129>.
23. ՀՀ կառավարության որոշումը ավագ և հիմնական դպրոցների ցանկը հաստատելու մասին // 2011 թ. մայիսի 2, № 774-Ն
<http://www.arlis.am/documentview.aspx?docid=68886>.
24. ՀՀ կառավարության որոշումը ՀՀ 2014-2016 թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին // 2013 թ. հուլիսի 4 № 740-Ն <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=84469>.

Հոդվածներ և հրապարակումներ

25. Крокер Л., Алгина Дж., Введение в классическую и современную теорию тестов. //Логос, Москва, 2012, с. 667.
26. Mullis I., Martin M., Chrostowski S. TIMSS 2003 Technical Report. // TIMSS & PIRLS International Study Center, Lynch School of Education, Boston College, Library
27. Հարությունյան Վ.Վ., Բաղդասարյան Ա.Գ., Բնագիտական առարկաներից և մաթեմատիկայից TIMSS 2003 միջազգային հետազոտությունը Հայաստանում: // Աստղիկ, Երևան, 2004, էջ 52:
28. Багдасарян А.Г. Многомерные исследования в области оценки качества образования. // Качество образования в Евразии, 2013, №1, с. 37-50.

29. Mullis I., Martin M., Foy P. TIMSS 2007 International Mathematics Report. // TIMSS & PIRLS International Study Center, Lynch School of Education, Boston College, Library of Congress, Catalog Card Number: 2008902434, ISBN: 1-88-9938-48-3, 2008, p. 474.
30. Mullis I., Martin M., Foy P., Stanco. M. TIMSS 2011 International Results in Science. // TIMSS & PIRLS International Study Center, Lynch School of Education, Boston College, Library of Congress, Catalog Card Number: 2012947310, ISBN-10: 1-88-9938-64-5, 2012, p. 517.
31. Mullis I., Martin M., Kennedy A. PIRLS 2006 Technical Report. //TIMSS & PIRLS International Study Center, Lynch School of Education, Boston College, Library of Congress, Catalog Card Number: 2007925071, ISBN: 1-889938-46-7, 2007, p. 287.
32. Բաղդասարյան Ա.Գ., Հալաջյան Մ.Ս., Մելիքյան Ս.Հ., Մկրտչյան Ս.Ս., Մկրտչյան Վ.Ա., Թեստավորում հայազիտական առարկաներից //Մանկավարժություն, Երևան, 2012, №5, էջ 39-54:
33. Բաղդասարյան Ա.Գ., Ռուսաց լեզվին նվիրված ազգային մի հետազոտության մասին: // Հանրակրթություն. գնահատում և թեստավորում, Երևան, 2013, №11, էջ 33-37:
34. Բաղդասարյան Ա.Գ., Հալաջյան Մ.Ս., Մկրտչյան Վ.Ա. Հայազիտական առարկաներից <<Ի՞նչ գիտենք մեր մասին>> հետազոտության որոշ արդյունքներ: // Մանկավարժություն, Երևան, 2013, №5, էջ 5-17:
35. Բաղդասարյան Ա.Գ., Հալաջյան Մ.Ս., Հայաստանի հանրակրթական դպրոցներում ընթերցանության որակի հետազոտություն: // Հանրակրթություն. գնահատում և թեստավորում, Երևան, 2014, №12-13, էջ 89-100:
36. Багдасарян А.Г. Об одном методе формирования итоговой оценки. // Сайт Российского тренингового центра [Электронный ресурс], Режим доступа: <http://www.rtc-edu.ru/resources/publications>, 2014, с. 14.
37. Багдасарян А.Г. Оценивание на основании составляющих оценок //Оценивание и тестирование: Современные стратегии и перспективы, 2005, Минск, Беларусь, с. 75-79.
38. Բաղդասարյան Ա.Գ., Միքայելյան Օ.Ս., Նազարյան Ա.Ս., Սովորողների առաջադիմության գնահատման հայեցակարգը // Տիգրան Մեծ, Երևան, 2007, էջ12:
39. Edited by Tatto M.T. TEDS-M 2008 Technical Report. // IEA Secretariat Herengracht 487 1017 BT Amsterdam, ISBN/EAN: 978-90-79549-24-5, 2013, p. 314.

Հավելված

Ստորև ներկայացնում ենք որոշ տվյալներ HAAS (հայազիտական առարկաներից ազգային ստուգատես), BAAS (բնագիտական առարկաներից ազգային ստուգատես) և OLAS (օտար լեզուներից ազգային ստուգատես) ազգային հետազոտությունների հաշվետվություններից: Աղյուսակներում բերվում են միայն վիճակագրական տվյալներ (բացի Աղյուսակ 5-ից, որում արտածված են որոշ առաջադրանքների փսիխոմետրիկ բնութագրերը), որոնք այս փուլում կապ չունեն առաջադիմության ցուցանիշների հետ (հետազոտության փորձարկային բնույթի հետ կապված): Վիճակագրության առումով ազդեցության նշանակալի գործոնների հայտնաբերման ուղղությամբ համապատասխան վերլուծություն կատարվել է, ձևակերպվել են նախնական վարկածներ, որոնք հետաքրքիր կլինի ստուգել (համոզվել կամ հերքել) արդեն լիակատար հետազոտությունների արդյունքներով:

Աղյուսակ 6. HAAS հետազոտության (2010-2011) <<Սշակերտի հարցաթերթիկի>> № 3 և № 9 հարցերը

Թվարկվածներից ի՞նչ ունես տանը	Պատասխանի տոկոսը		
	այո	ոչ	Պատասխան չկա
ա) Քո համակարգիչը	49.6	40.6	9.8
բ) Քո աշխատանքային սեղանը	62.6	25.7	11.7
գ) Քո գրքերը (չհաշված դասագրքերը)	74.6	15.6	9.8
դ) Քո սենյակը	68.6	23.1	8.3
ե) Համացանց	40.5	45.7	13.8
զ) Քո բջջային հեռախոսը	72.0	25,8	2.2

Աղբյուրը՝ ԳԹԿ-ի տվյալները

3.3-ում նշել ենք, որ ժամանակի ընթացքում գործիքը կարող է հնանալ: 2010 թվականին կազմված բջջային հեռախոսի մասին հարցը հնացել է: Հիմա ավելի արդիական կլիներ հարցնել սմարթֆոնների կամ այլ սարքերի մասին:

Աղյուսակ 6-ում, մեր կարծիքով, մասնավորապես, ուշադրության արժանի են համակարգչի վերաբերյալ (ա հարց) տվյալները՝ կապված ICT գրագիտության վերաբերյալ ազգային հետազոտության արդյունքների

հետ (տե՛ս 3.2): Ելնելով այն բանից, որ հարցվածների ավելի քան 40 %-ը տանը համակարգիչ չունի և, առավել ևս, չունի համացանցից օգտվելու հնարավորություն, 3.2-ի Նկար 4-ի տվյալները ընդունելի են թվում (թեև ICT-ի և HAAS-ի վերաբերյալ միջոցառումների միջև երեք տարվա տարբերություն կա, և տարբերություն կա նպատակային խմբերի միջև. ICT-9-րդ դասարան, HAAS-8-րդ դասարան):

Այդ թվերը արժե նկատի ունենալ բուհերի ընդունելության քննությունների համար համակարգչային միասնական քննությունների ներդրման հարցը քննարկելիս:

3.2-ում արդեն նշել ենք, որ աշակերտի հարցաթերթիկը բաղկացած է 30 հարցից, որոնցից շատերը, իրենց հերթին, ունեն բազմաթիվ ենթահարցեր: Հարցաթերթիկի հարցերը ներառված են 6 խմբում՝ «Քո մասին», «Քո դպրոցի մասին», «Դասերից հետո», «Հայոց լեզուն ձեր դպրոցում», «Հայոց պատմությունը ձեր դպրոցում» և «Քո նախասիրությունները»:

Աղյուսակ 6-ում ներկայացվել են «Քո մասին» խմբից հարցի վերաբերյալ տվյալները: Հաջորդ երկու աղյուսակներում ներկայացվում են տվյալներ «Քո դպրոցի մասին» խմբից հարցի (երեք ենթահարցի) և «Դասերից հետո» խմբից հարցի (հինը ենթահարցի) վերաբերյալ տվյալները:

Աղյուսակ 7. HAAS հետազոտության (2010-2011) «Աշակերտի հարցաթերթիկի» № 10 հարցը

Որքանո՞վ ես համաձայն քո դպրոցի վերաբերյալ հետևյալ պնդումների հետ	Պատասխանի տոկոսը				
	Ամբողջովին համաձայն եմ	Հիմնականում համաձայն եմ	Գրեթե համաձայն չեմ	Ընդհանրապես համաձայն չեմ	Պատասխան չկա
ա) Ես սիրում եմ դպրոց հաճախել	66.1	20	5.6	2.1	6.1
բ) Ես դպրոցում ինձ անվտանգ եմ զգում	58.5	21.1	8.6	3.2	8.6
գ) Ես ինձ դպրոցի մաս եմ զգում	45.4	23.5	13.2	7.6	10.3

Աղբյուրը՝ ԳԹԿ-ի տվյալները


Աղյուսակ 8. HAAS հետազոտության (2010-2011) <<Աշակերտի հարցաթերթիկի>> № 13 հարցը

Միջինը որքա՞ն ժամանակ ես ծախսում եմ հետևյալի վրա	Պատասխանի տոկոսը					
	Ընդհանրապես չեմ ծախսում	30 րոպեից քիչ	30 րոպեից 1 ժամ	1-2 ժամ	2 ժամից ավելի	Պատասխան չկա
ա) Կատարում եմ տնային աշխատանքը	5.2	18.7	19.4	22.1	26.6	8
բ) Նստում եմ համակարգչի դիմաց	27.9	20.3	17.8	10	11.7	12.4
գ) Օգնում եմ ծնողներին	5.3	12	19.5	18.7	33.2	11.3
դ) Պարապում եմ կրկնուսույցի հետ	45.2	10.4	10.1	11.3	7	16
ե) Շփվում եմ ընկերներին հետ	5.1	14.9	19.7	18.5	30.4	11.3
զ) Գեղարվեստական զիրք եմ կարդում	12	26.8	27.1	14.1	8.8	11.2
է) Հեռուստացույց եմ դիտում	4.9	18.3	21.9	20.1	24.5	10.3
ը) Խոսում եմ բջջային հեռախոսով	27.8	47.7	6.6	2.8	3.4	11.8
թ) Զբաղվում եմ սպորտով	21.1	14.9	15.5	15.3	22	11

Աղբյուրը՝ ԳԹԿ-ի տվյալները

Հաջորդ երկու նկարների տվյալները վերաբերում են <<Քո նախասիրությունները>> խմբից հարցերին՝ ապագա մասնագիտության ընտրության մասին և սիրած առարկայի մասին:

Նկար 5. HAAS հետազոտության (2010-2011) <<Ի՞նչ ես պատրաստվում դառնալ>> հարցի պատասխանների բաշխումը



Աղբյուրը՝ ԳԹԿ-ի տվյալները


Նկար 6. OLAS հետազոտության (2013-2014) «Ո՞րն է քո սիրած առարկան» հարցի պատասխանների բաշխումը

Անգլերեն	14.42%
Ռուսաց լեզու	11.13%
Հայոց պատմություն	9.58%
Հայոց լեզու և գրականություն	16.30%
Աշխարհագրություն	3.96%
Կենսաբանություն	9.32%
Քիմիա	6.87%
Ֆիզիկա	5.06%
Մաթեմատիկա	17.74%
Պատասխան չկա	5.62%

Աղբյուրը՝ ԳԹԿ-ի տվյալները

Հաջորդ նկարում ներկայացված են տվյալներ օտար լեզուների վերաբերյալ: Ինչպես երևում է Նկար 7-ից աշակերտների ճնշող մեծամասնությունը համարում է, որ ավելի լավ տիրապետում է ռուսաց լեզվին, քան անգլերենին (ֆրանսերենին կամ գերմաներենին):

Նկար 7. HAAS հետազոտության (2010-2011) «Ո՞ր օտար լեզվին ես ավելի լավ տիրապետում» հարցի պատասխանների բաշխումը



- Անգլերեն (ֆրանսերեն կամ գերմաներեն)
- Ռուսաց լեզու
- Դրանցից ոչ մեկին
- Պատասխան չկա

Աղբյուրը՝ ԳԹԿ-ի տվյալները

Հաջորդ երկու աղյուսակները վերաբերում են հարցաթերթիկի առաջին երկու հարցերին: Ինչպես նախորդ աղյուսակներում, այստեղ ևս ներկայացված են վիճակագրական ցուցանիշներ (աղջիկների և տղաների գրեթե հավասար թիվը և ըստ բնակության վայրի նրանց բաշխվածության տոկոսները): Սակայն այս աղյուսակների հարցերում աշակերտի <<սեռը>> և <<բնակության վայրը>> դիտարկվում են որպես գործոններ, որոնք կարող են նշանակալի ազդեցություն ունենալ (կամ չունենալ) առաջադիմության ցուցանիշների վրա: Համապատասխան ցուցանիշները (միջին, ամենաբարձր և ամենացածր միավորներ) լրացվում են աղյուսակի մզեցված վանդակների մեջ՝ վարկածների հետագա ստուգման համար:

Աղյուսակ 9. HAAS հետազոտության (2010-2011) աշխատանքային աղյուսակ: <<Աշակերտի հարցաթերթիկի>> № 1 հարցը

Հարց	Պատասխանների տարբերակները	Հայոց լեզու				Հայոց պատմություն			
		mean	min	max	%	mean	min	max	%
Տղա՞ն էս, թե՞ աղջիկ	Տղա				49,75				49,75
	Աղջիկ				49,46				49,46
	Պատասխան չկա				0,79				0,79

Աղբյուրը՝ ԳԹԿ-ի տվյալները

Աղյուսակ 10. HAAS հետազոտության (2010-2011) աշխատանքային աղյուսակ: <<Աշակերտի հարցաթերթիկի>> № 2 հարցը

Հարց	Պատասխանների տարբերակները	Հայոց լեզու				Հայոց պատմություն			
		mean	min	max	%	mean	min	max	%
Որտե՞ղ էս ապրում	Մայրաքաղաք				25,88				25,88
	Քաղաք				44,28				44,28
	Գյուղ				27,53				27,53
	Պատասխան չկա				2,31				2,31

Աղբյուրը՝ ԳԹԿ-ի տվյալները

Աղյուսակ 11. Հատված BAAS (կենսաբանություն, աշխարհագրություն) 2012-2013 թ. հետազոտության թեստային առաջադրանքների բնութագրերի աշխատանքային աղյուսակից:

Առաջադրանքի համարը	Թեստի համարը									Թեստի համարը								
	1			2			3			4			5			6		
	Բարդություն	Տարբերակում	Կորելացիա	Բարդություն	Տարբերակում	Կորելացիա	Բարդություն	Տարբերակում	Կորելացիա	Բարդություն	Տարբերակում	Կորելացիա	Բարդություն	Տարբերակում	Կորելացիա	Բարդություն	Տարբերակում	Կորելացիա
27	0.37	0.51	0.42	0.31	0.43	0.39	0.58	0.68	0.51	0.24	0.13	0.12	0.41	0.63	0.48	0.16	0.18	0.24
28	0.34	0.44	0.38	0.26	0.60	0.58	0.05	0.16	0.35	0.45	0.74	0.57	0.72	0.48	0.43	0.35	0.57	0.49
29	0.50	0.33	0.29	0.25	0.26	0.24	0.26	0.28	0.26	0.69	0.29	0.25	0.54	0.60	0.48	0.80	0.35	0.33
30	0.29	0.57	0.54	0.26	0.60	0.52	0.13	0.30	0.41	0.31	0.63	0.55	0.34	0.53	0.48	0.32	0.56	0.46
31	0.47	0.66	0.46	0.44	0.22	0.22	0.27	0.34	0.37	0.31	0.33	0.28	0.52	0.67	0.54	0.90	0.21	0.28
32	0.01	0.03	0.18	0.36	0.63	0.52	0.27	0.62	0.61	0.32	0.62	0.58	0.03	0.08	0.24	0.20	0.54	0.54
33	0.11	0.35	0.57	0.57	0.29	0.24	0.07	0.18	0.36	0.33	0.59	0.50	0.57	0.77	0.61	0.39	0.63	0.52
34	0.32	0.42	0.37	0.46	0.46	0.33	0.46	0.48	0.40	0.33	0.37	0.35	0.30	0.55	0.46	0.39	0.40	0.35
35	0.56	0.65	0.47	0.77	0.39	0.39	0.45	0.37	0.35	0.56	0.60	0.47	0.32	0.39	0.33	0.22	0.25	0.26
36	0.23	0.39	0.41	0.16	0.20	0.21	0.36	0.39	0.40	0.40	0.45	0.36	0.37	0.56	0.47	0.32	0.36	0.31
37	0.25	0.49	0.52	0.43	0.43	0.35	0.19	0.33	0.40	0.38	0.20	0.18	0.30	0.44	0.38	0.24	0.16	0.17
38	0.41	0.69	0.54	0.49	0.48	0.39	0.30	0.38	0.39	0.73	0.53	0.48	0.56	0.55	0.47	0.44	0.34	0.30
39	0.25	0.38	0.53	0.38	0.31	0.48	0.35	0.59	0.58	0.41	0.43	0.49	0.09	0.20	0.38	0.33	0.41	0.55

Աղբյուրը՝ ԳԹԿ-ի տվյալները

Վերջին աղյուսակում ներկայացված են թեստերի 6 տարբերակների փորձարկված (ինչպես TIMSS-ի փորձնական ստուգարքի ժամանակ) առաջադրանքների թեստաբանական բնութագրիչների մասին աշխատանքային տվյալներ՝ թեստեր կազմողների համար: Մզեցված են անընդունելի բնութագրիչներ ունեցող անհաջող առաջադրանքները: Մասնավորապես, Աղյուսակ 11-ում երևում է, որ գրեթե ոչ ոք չի լուծել N° 32 առաջադրանքը: Առաջադրանքում ինչ-որ բան այն չէ (անհաջող ձևակերպում, վրիպակ, սխալ, կարող է լինել ծրագրից դուրս և այլն), այն պետք է վերանայել (իսկ ավելի լավ է փոխել):

Արմեն ՂԱԶԱՆՉՅԱՆ

ԳԹԿ համակարգչային և վերլուծական աշխատանքների բաժնի
գլխավոր մասնագետ

Շուշանիկ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ԳԹԿ համակարգչային և վերլուծական աշխատանքների բաժնի
առաջատար մասնագետ

Նարե ՍԱՐԳՍՅԱՆ

ԳԹԿ համակարգչային և վերլուծական աշխատանքների բաժնի
առաջին կարգի մասնագետ

2015 թ. պետական միասնական քննությունների արդյունքների վերլուծություն

Նախաբան

Սույն վերլուծությունը վերաբերում է 2015 թ. պետական միասնական և կենտրոնացված քննություններին: Վերլուծության մեջ ներառված չեն զուտ ներբուհական քննություններով ընդունելություն կազմակերպող բուհերին (օրինակ՝ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա, Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ և այլն) վերաբերող տեղեկությունները: Պետական միասնական և կենտրոնացված քննությունների, ինչպես նաև բուհերի ընդունելության մրցույթին մասնակցող դիմորդների հաշվառման բազաներում ընդունելության ներբուհական քննություններ պահանջող մասնագիտություններին վերաբերող տվյալներ կան այն դեպքում, եթե տվյալ դիմորդը բուհի ընդունելության դիմում-հայտի մասնագիտությունների մասում նշել է զուտ ներբուհական քննություն պահանջող որևէ մասնագիտություն և իր նշած այլ մասնագիտությունների համար առնվազն 1 առարկայից հանձնել է միասնական քննություն:

- Վերլուծությունը կատարվել է մի քանի ուղղություններով.
- Կատարվել է ընդհանուր արդյունքների վերլուծություն (ինչպես պետական միասնական, այնպես էլ կենտրոնացված քննությունների), համեմատություններ նախորդ տարիների պետական միասնական քննությունների արդյունքների հետ:
- Վերլուծության են ենթարկվել պետական միասնական քննությունների (այսուհետև՝ միասնական քննություններ) արդյունքներն ըստ խմբերի (ըստ մարզերի, ըստ բնակավայրերի տիպերի (քաղաք, գյուղ), ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տեսակների, ըստ սեռերի):
- Ըստ թեստերի և թեստային առաջադրանքների կառուցվածքի և որակական բնութագրիչների հետազոտվել են առարկայական թեստերը և թեստային առաջադրանքները: Թեստերը բարելավելու նպատակով վերլուծության այդ մասը տրամադրվել է առարկայական մասնագետներին:
- Ներկայացվել են 2015 թ. ամենաշատ պահանջված և ամենաքիչ պահանջված մասնագիտությունները:

1. Ընդհանուր տեղեկություններ

1.1 2015 թ. պետական միասնական քննությունների կազմակերպումը

Գնահատման և թեստավորման կենտրոնում (այսուհետև՝ ԳԹԿ) քննությունների դիմում-հայտերի ընդունումն սկսվում է տվյալ տարվա փետրվարի 1-ից և ավարտվում մարտի 15-ին (համաձայն «ՀՀ պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության կարգի»): Մուտքագրված տվյալների համապատասխանությունը հաստատելու, ճշգրտում, փոփոխություն կատարելու և քննության մասնակիցների ցուցակը վերահաստատելու նպատակով ԳԹԿ-ից դպրոցներ ուղարկված տվյալները և նոր դիմում-հայտերը մինչև ապրիլի 15-ը ուղարկվում են ԳԹԿ: Բուհերում դիմորդների հայտագրումը կատարվում է տվյալ տարվա մայիսի 5-ից մինչև հունիսի 1-ը: Դիմորդները կենտրոնացված և ներքուհական քննություններին, ինչպես նաև մասնագիտությունների մրցույթին մասնակցելու համար ընդունելության դիմում-հայտը և փաստաթղթերը հանձնում են այն բուհում, որի մասնագիտությունն ընդունելության դիմում-հայտում հայտագրել են առաջինը: ՀՀ երկքաղաքացիների և օտարերկրացիների, օտարերկրյա

պետությունների ուսումնական հաստատությունները տվյալ ուսումնական տարում ավարտած ՀՀ քաղաքացիների, նույն տարվա գարնանային գորակոչից գորացրված կամ մինչև հուլիսի 31-ը գորացրվող դիմորդների, նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների տվյալ տարվա շրջանավարտների փաստաթղթերն ընդունվում են հունիսի 25-ից մինչև հուլիսի 2-ը:

Միասնական քննությունները կազմակերպվում և անցկացվում են միասնական քննական կենտրոններում, որոնց ցանկը մինչև տվյալ տարվա մայիսի 1-ը հաստատում է ԳԹԿ-ի տնօրենը:

2015 թ. հունիսի 2-23-ը և հուլիսի 2-8-ը ՀՀ տարածքում տեղաբաշխված 34 և ԼՂՀ 4 քննական կենտրոններում միասնական քննություններ են անցկացվել «Հայոց լեզու և հայ գրականություն», «Մաթեմատիկա», «Ռուսաց լեզու», «Օտար լեզու» (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն, իսպաներեն, իտալերեն, պարսկերեն), «Հայոց պատմություն», «Համաշխարհային պատմություն», «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն» առարկաներից, որոնց մասնակցելու համար հայտագրվել են ՀՀ, ԼՂՀ և արտերկրի 12518 դիմորդներ: Քննություններն անցկացվել են երկու փուլով՝ հիմնական և լրացուցիչ: Հիմնական փուլին (հունիսի 2-23) հայտագրվել են ՀՀ և ԼՂՀ միջնակարգ դպրոցների 2015 թ. և նախորդ տարիների շրջանավարտները (ՀՀ-ում՝ 10999, ԼՂՀ-ում՝ 803 դիմորդ): Միասնական քննությունների լրացուցիչ փուլին (հուլիսի 2-8) հայտագրվել են նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների 2014-2015 ուսումնական տարվա շրջանավարտները, պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից 2014-2015 թթ. գորացրվածները, արտերկրի շրջանավարտները, միասնական քննությունների հիմնական փուլին հայտագրված և քննությանը հարգելի պատճառով չմասնակցած, ինչպես նաև հիվանդության պատճառով հիմնական փուլի միասնական քննությունն ընդհատած և լրացուցիչ փուլին մասնակցելու թույլտվություն ստացած դիմորդները:

Այս փուլի քննություններին ՀՀ-ում մասնակցության հայտ է ներկայացրել 983, ԼՂՀ-ում՝ 17 դիմորդ: Մրցույթի երկրորդ փուլին հայտագրվածներից 178-ը հայտագրված է եղել նաև միասնական քննությունների հիմնական փուլին (ՀՀ-ում՝ 168 և ԼՂՀ-ում՝ 10 դիմորդ): ՀՀ-ում 2015 թ. միասնական քննությունների հիմնական և լրացուցիչ փուլերին մասնակցելու համար հայտագրված դիմորդներից 11389-ը և ԼՂՀ դիմորդներից 796-ը եղել են հանրակրթական ուսումնական հաստատությունների 2014-2015 ուսումնական տարվա, իսկ մնացածները՝ նախորդ տարիների շրջանավարտներ:

Բուհերում հայտագրված 11416 դիմորդներից 11361-ը դիմել է պետական, 55-ը՝ ոչ պետական բուհեր: Վերլուծության մեջ ներառված չեն գուտ ներբուհական քննություններով ընդունելություն կազմակերպող բուհերին վերաբերող տեղեկությունները:

Քննությունների կազմակերպմանն ու անցկացմանը ներգրավվել են տարբեր բնագավառների աշխատակիցներ: Ընդհանուր առմամբ, քննությունների կազմակերպմանն ու վերահսկմանը մասնակցել է քննական կենտրոնի 39 ղեկավար, 388 ԳԹԿ ներկայացուցիչ, իսկ դիմորդների մուտքը քննասենյակներ, քննական նյութերի բաշխումը և հավաքումն իրականացրել է մուտքի 101 համակարգչային օպերատոր և քննասենյակների 286 կազմակերպիչ:

1.2 2015 թ. պետական միասնական քննությունների ժամանակացույցը

Աղյուսակ 1. 2015 թ. միասնական քննությունների ժամանակացույցը

Քննությունը	Քննության տևողությունը (ժամ)	Քննության օրը	
		հիմնական փուլ	լրացուցիչ փուլ
Համաշխարհային պատմություն Կենսաբանություն Աշխարհագրություն	3	02.06.2015 թ.	06.07.2015 թ.
Հայոց լեզու և հայ գրականություն	3	05.06.2015 թ.	03.07.2015 թ.
Ֆիզիկա	3	09.06.2015 թ.	04.07.2015 թ.
Օտար լեզու	2.5	12.06.2015 թ.	05.07.2015 թ.
Մաթեմատիկա	3	16.06.2015 թ.	07.07.2015 թ.
Հայոց պատմություն Քիմիա	3	19.06.2015 թ.	08.07.2015 թ.
Ռուսաց լեզու	2.5	23.06.2015 թ.	02.07.2015 թ.

Հիմնական փուլի բոլոր քննություններն անցկացվել են թեստերի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ տարբերակներով, լրացուցիչ փուլի քննությունները՝ 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ տարբերակներով, ընդ որում թեստ 3-ը կազմվել է թեստ 1-ի, թեստ 4-ը՝ թեստ 2-ի, թեստ 6-ը, 7-ը, 8-ը՝ թեստ 5-ի առաջադրանքների և/կամ ընտրովի պատասխանով առաջադրանքների դիստրակտորների տեղափոխությամբ:

Օտար լեզվի քննության մասնակիցներն ընտրել են անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, իսպաներեն, իտալերեն լեզուներից որևէ մեկը: Պարսկերեն լեզվի միասնական քննություն հանձնելու համար 2015 թ. հայտ չի ներկայացվել:

1.3 2015 թ. պետական միասնական քննությունների լուսաբանումը և իրազեկումը

2015 թ. միասնական քննությունների ողջ ընթացքը հանրությանն իրազեկելու նպատակով կազմվել և հաստատվել է ժամանակացույց՝ համաձայն ԳԹԿ գործունեության պլանի: ԳԹԿ-ն հունվարի 20-ից զանգվածային լրատվամիջոցներում պարբերաբար հրապարակել է հայտարարություններ, որոնցում պարտադիր նշվել են քննության դիմում-հայտերի ընդունումն սկսելու և ավարտելու ժամկետները, դիմում-հայտերն ընդունող հանրակրթական ուսումնական հաստատությունների անվանումները: ԳԹԿ պաշտոնական կայքում և ֆեյսբուքյան էջում տեղադրվել և պարբերաբար թարմացվել են միասնական քննությունների և բուհերի ընդունելության մրցույթին վերաբերող տեղեկությունները:

Զանգվածային լրատվամիջոցներով լուսաբանվել են 2015 թ. միասնական քննությունների հետ կապված մանրամասները, այդ թվում՝ քննությունների նախապատրաստական փուլում ուղեցույցների մշակման և տրամադրման, միասնական քննությունների և բուհերի ընդունելության հայտագրման, թեստերի տպագրման գործընթացները: Քննությունների անցկացման ողջ գործընթացը (քննության ընթացք, բողոքարկում, տվյալների տրամադրում, մեկնաբանում) եղել է լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում:

Կազմակերպվել են հարցազրույցներ և ասուլիսներ, որոնք լայնորեն լուսաբանվել են հանրապետության զանգվածային լրատվամիջոցներով: Մանրամասն ներկայացվել և գնահատվել է քննական ողջ գործընթացը, մատնանշվել են թերացումները քննությունների յուրաքանչյուր փուլի վերաբերյալ:

1.4 Դիմորդների մասնակցությունը 2015 թ. պետական միասնական քննություններին

Աղյուսակ 2-ում ըստ քննական առարկաների ներկայացված են 2015 թ. միասնական քննությունների հիմնական և լրացուցիչ փուլերին հայտագրված, քննությանը ներկայացած, բացակայած, հիվանդության պատճառով քննությունն ընդհատած և քննությունից հեռացված դիմորդների թվերը:

Աղյուսակ 2. Դիմորդների մասնակցությունը 2015 թ. միասնական քննությունների հիմնական և լրացուցիչ փուլերին

Քննական առարկաներ	Դիմում հայտ ներկայացրած դիմորդներ	Քննությանը ներկայացրած դիմորդներ	Բացակա դիմորդներ	Հիվանդության պատճառով քննությունը ընդհատած դիմորդներ	Քննությունից հեռացված դիմորդներ
Հայոց լեզու և հայ գրականություն	7285	6992	288	4	1
Մաթեմատիկա	5851	5567	268	15	1
Անգլերեն	5497	5246	232	17	2
Ֆիզիկա	2032	1957	71	2	2
Հայոց պատմություն	1814	1673	130	10	1
Կենսաբանություն	1585	1527	54	1	3
Քիմիա	1272	1194	65	13	-
Ռուսաց լեզու	849	781	67	1	-
Աշխարհագրություն	347	332	15	-	-
Գերմաներեն	234	230	4	-	-
Ֆրանսերեն	199	194	4	1	-
Համաշխարհային պատմություն	139	133	6	-	-
Իսպաներեն	13	13	-	-	-
Իտալերեն	1	1	-	-	-

Աղյուսակից երևում է, որ միասնական քննությունների հիմնական և լրացուցիչ փուլերի ընթացքում արձանագրված բացակայությունները հիմնականում չեն գերազանցել 5%-ը, բացառությամբ «Հայոց պատմություն», «Ռուսաց լեզու» և «Քիմիա» առարկաների քննությունների, որոնցից բացակայել են դիմում-հայտ ներկայացրած դիմորդների, համապատասխանաբար, 7.2, 7.9 և 5.1 տոկոսը: Ընդհանուր հաշվով՝ բացակայել է դիմում-հայտ ներկայացրած դիմորդների 4.7 %-ը, 10 դիմորդ հեռացվել է քննությունից:

1.5 2015 թ. և նախորդ տարիների պետական միասնական քննությունների մասնակիցների թվի համեմատությունը

Դիագրամ 1-ում ներկայացված են 2008-2015 թթ. միասնական քննություններին մասնակցության հայտ ներկայացրած դիմորդների թվերը: Դիագրամից երևում է, որ նվազման միտում է դիտվում՝ սկսած 2009 թվականից: Ինչպես հայտնի է, 2011 թ. հանրակրթական ուսումնական հաստատությունները շրջանավարտ չեն ունեցել, հետևաբար՝ այդ տարվա միասնական քննությունների դիմորդների ընդհանուր թիվը մոտ

7 անգամ պակաս է նախորդ և հաջորդ տարիների դիմորդների թվից: Գծապատկերի 2012 թ. պիկը պայմանավորված է հենց 2011 թ. հանրակրթական ուսումնական հաստատություններն ավարտող շրջանավարտների բացակայությամբ: Վերջին տարիներին նվազման միտումն աստիճանաբար մեղմացել է: 2014 թ. համեմատությամբ հայտագրվածների թիվը 2015-ին նվազել է 467-ով: Մինչդեռ 2012 և 2013 թվականների ցուցանիշների տարբերությունը կազմել է 3641, ինչը դարձյալ 2011 թ. շրջանավարտների բացակայության հետևանք է:

Միասնական քննություններին հայտագրվածների թիվը ըստ տարիների




Դիագրամ 1


Տարեցտարի դիմորդների թվի նվազմանը հիմնականում նպաստում են՝

- ՀՀ-ում գործող օտարերկրյա բուհերի և դրանցում սովորել ցանկացողների թվի ավելացումը,
- միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ ընդունվողների թվի աճը,
- 1990-ական թվականներին բնակչության ծնելիության մակարդակի նվազումը,
- արտագաղթը:


Դիագրամ 2-ում ներկայացված է տարբեր տարիների միասնական քննությունների մասնակիցների թվի համեմատությունը «Հայոց լեզու և հայ գրականություն», «Մաթեմատիկա», «Հայոց պատմություն» և «Համաշխարհային պատմություն» առարկաներից, դիագրամ 3-ում՝ բնագիտական առարկաներից, դիագրամ 4-ում՝ օտար լեզուներից:



Դիագրամ 2



Դիագրամ 3



Դիագրամ 4

Դիագրամները ցույց են տալիս, որ ընդհանուր նվազման ֆոնի վրա «Հայոց լեզու և հայ գրականություն», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն», «Ռուսաց լեզու», «Անգլերեն», «Ֆրանսերեն», «Իսպաներեն» և «Պարսկերեն» առարկաների միասնական քննություն-

ների մասնակիցների թիվը 2010 թ. համեմատությամբ 2012 թ. ավելացել է: Դրա պատճառը նշվել է վերևում: Ինչ վերաբերում է 2015 թ. մասնակիցների թվին, բոլոր քննությունների դեպքում այն զիջում է նախորդ տարվա ցուցանիշին (բացի քիմիայի և աշխարհագրության քննությունների մասնակիցների թվից):

2. Վիճակագրական տվյալներ 2015 թ. պետական միասնական և կենտրոնացված քննությունների ընդհանուր արդյունքների վերաբերյալ

Առյուսակ 3-ում ըստ քննական առարկաների ներկայացված են 2015 թ. միասնական քննությունների մասնակիցների թվերը, առավելագույն, նվազագույն և միջին միավորները, ինչպես նաև մասնակիցների թիվը և տոկոսը ըստ գնահատման 20 միավորանոց սանդղակի միջակայքերի:

Միջին միավորը բնութագրում է քննություն հանձնողների պատրաստվածության միջին մակարդակը:

Մասնակիցների թվից կախված է միջին միավորի հուսալիությունը: Մասնակիցների թվի մեծ լինելը նպաստում է ստանդարտ շեղման նվազմանը, ինչի արդյունքում միջին միավորը դառնում է հուսալի:

Ստանդարտ շեղումը միջին միավորի հուսալիության չափման միջոց է: Այն ցույց է տալիս, թե ստացված արդյունքները որքանով են շեղված միջին միավորից: Ոչ մեծ ստանդարտ շեղումը վկայում է միջին միավորի շուրջը արդյունքների կուտակվածության մասին:

2.1 Միասնական քննությունների ընդհանուր արդյունքները

Աղյուսակ 3. 2015 թ. միասնական քննությունների ընդհանուր արդյունքները

Քննական առարկաները	Քննության մասնակիցների թիվը	Առավելագույն միավորը	Նվազագույն միավորը	Միջին միավորը	0 - 7,25 միավոր հավաքած մասնակիցներ		7,5 - 13,25 միավոր հավաքած մասնակիցներ		13,5 - 16,75 միավոր հավաքած մասնակիցներ		17,0 - 18,75 միավոր հավաքած մասնակիցներ		19,0-20,0 միավոր հավաքած մասնակիցներ	
					թիվը	տոկոսը	թիվը	տոկոսը	թիվը	տոկոսը	թիվը	տոկոսը	թիվը	տոկոսը
Հայոց լեզու և հայ գրականություն	6991	20	1	13,7	615	8,8	2411	34,5	1909	27,3	1387	19,8	669	9,6
Մաթեմատիկա	5567	20	1,25	11,8	835	15	2779	49,9	1151	20,7	464	8,3	338	6,1
Անգլերեն	5243	20	0,75	14,2	507	9,7	1598	30,5	1157	22,1	946	18	1035	19,7
Ֆիզիկա	1957	20	1	10,9	555	28,4	750	38,3	334	17,1	182	9,3	136	6,9
Հայոց պատմություն	1673	20	2,25	13,0	232	13,9	637	38,1	344	20,6	257	15,4	203	12,1
Գեոմետրիա	1527	20	2,25	12,6	338	22,1	442	28,9	285	18,7	222	14,5	240	15,7
Քիմիա	1194	20	1,5	12,6	234	19,6	407	34,1	202	16,9	154	12,9	197	16,5
Ռուսաց լեզու	781	20	0	10,0	252	32,3	344	44	111	14,2	60	7,7	14	1,8
Աշխարհագրություն	332	20	4,25	13,8	33	9,9	106	31,9	90	27,1	68	20,5	35	10,5
Գերմաներեն	230	20	2,75	14,9	20	8,7	53	23	58	25,2	46	20	53	23
Ֆրանսերեն	194	20	2	15,3	14	7,2	42	21,6	44	22,7	44	22,7	50	25,8
Համաշխարհային պատմություն	133	20	4,75	13,3	18	13,5	46	34,6	35	26,3	18	13,5	16	12
Իտալերեն	13	18,75	6,25	12,4	3	23,1	4	30,8	3	23,1	3	23,1	-	-
Իտալերեն	1	18,75	18,75	18,8	-	-	-	-	-	-	1	100	-	-

2.2. Միասնական քննությունների անցկացման կարգի և արդյունքների բողոքարկումը

Համաձայն «ՀՀ պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության կարգի», միասնական քննության բողոքարկումը կարող է լինել քննության անցկացման կարգի խախտման և քննության արդյունքների հետ անհամաձայնության վերաբերյալ, որոնցից առաջինի դեպքում դիմորդը մինչև քննասենյակից դուրս գալը քննասենյակի պատասխանատու կազմակերպչին կամ ԳԹԿ ներկայացուցչին կարող է ներկայացնել գրավոր բողոքը, որը հանձնվում է քննական կենտրոնի ղեկավարին: Վերջինս դիմում-բողոքը և համապատասխան արձանագրությունը ներկայացնում է ԳԹԿ: Քննության արդյունքների հետ անհամաձայնության դեպքում, տվյալ քննության արդյունքների հրապարակման հաջորդ օրվա ժամը 9:00-18:00-ն դիմորդը


կարող է գրավոր բողոքը ներկայացնել այն քննական կենտրոնի համակարգչային օպերատորին, որտեղ հանձնել է տվյալ քննությունը: Բողոք-դիմումները բողոքարկման ժամկետի ավարտից հետո 24 ժամվա ընթացքում ներկայացվում են ԳԹԿ: Բողոք-դիմումները տեսակավորվում են և ներկայացվում բողոքարկման հանձնաժողովին: Դրանք հանգամանորեն ուսումնասիրելուց հետո բողոքարկման հանձնաժողովի կողմից կարող է որոշում ընդունվել քննության արդյունքի պահպանման կամ փոփոխության վերաբերյալ: Դրական լուծում ստացած բողոք-դիմումների և բողոքարկման հանձնաժողովի կողմից կազմած արձանագրության հիման վրա միասնական քննությունների էլեկտրոնային բազայում կատարվում է համապատասխան փոփոխություն: Հիմնական փուլի բողոքարկման արդյունքները հրապարակվում են վերջին քննության բողոքարկման ավարտից հետո՝ եռօրյա ժամկետում, լրացուցիչ փուլինը՝ վերջին քննության ավարտից հետո՝ եռօրյա ժամկետում:

Աղյուսակ 4. 2015 թ. միասնական քննությունների արդյունքների և վերաբերող բողոք-դիմումների թիվը


Քննական առարկաները	Բողոք-դիմումների ընդհանուր թիվը	Դրական լուծում ստացած բողոք-դիմումների թիվը
Հայոց լեզու և հայ գրականություն	48	8
Մաթեմատիկա	39	8
Կենսաբանություն	35	7
Անգլերեն	23	4
Քիմիա	17	2
Հայոց պատմություն	13	0
Տիզիկա	12	5
Աշխարհագրություն	4	0
Ռուսաց լեզու	3	3
Իսպաներեն	1	0
Համաշխարհային պատմություն	1	1
Տրանսերեն	1	0

Աղյուսակ 4-ը ցույց է տալիս, որ բողոքարկման հանձնաժողովը քննության արդյունքների հետ անհամաձայնությանը վերաբերող բողոք-դիմումների մի մասին դրական լուծում է տվել: Հայոց պատմության, աշխարհագրության, իսպաներենի և ֆրանսերենի բողոքարկումների հիման վրա քննության արդյունքի փոփոխություն չի կատարվել: Ընդհանուր առմամբ բողոքարկել է 197 դիմորդ: Դրական լուծում է ստացել բողոք-դիմումների 19.3%-ը:


2.3. 2015 թ. և նախորդ տարիների միասնական քննությունների միջին միավորների համեմատությունը



Դիագրամ 5



Դիագրամ 6



Դիագրամ 7

2.4. 2015 թ. կենտրոնացված քննությունների ընդհանուր արդյունքները

Կենտրոնացված քննություններն այն քննություններն են, որոնք, ելնելով տվյալ քննական առարկայի առանձնահատկություններից, հնարավոր չէ անցկացնել թեստերի միջոցով: Դրանք կազմակերպվում են տվյալ տարվա հունիսի 25-ից մինչև հուլիսի 8-ն ընկած ժամանակահատվածում: Կենտրոնացված քննությունները կազմակերպվում են քննական կենտրոններում, որոնց ցանկը հաստատում է ԳԹԿ-ի տնօրենը՝ մինչև հունիսի 15-ը: Դիմորդի պատասխանը գնահատվում է 20 միավորանոց համակարգով: Կենտրոնացված բանավոր քննության գնահատականը դիմորդին հայտնվում է քննության օրը՝ քննասենյակում:

Աղյուսակ 5. Կենտրոնացված քննությունների ընդհանուր արդյունքները

Քննությունը	Դիմում-հայտ ներկայացրած դիմորդներ	Քննություն ներկայացրած դիմորդները	Բացավանդոր	Միջին միավոր	20 միավոր ստացած դիմորդների		Դրական միավորի շեմը չհատարանարած դիմորդների	
					թիվը	տոկոսը	թիվը	տոկոսը
Անգլերեն (բանավոր)	1157	1125	32	12.0	4	0.4	75	6.7
Հայոց լեզու (բանավոր)	335	311	24	10.8	2	0.6	14	4.5
Բանավոր հաղորդակցման միջոցներ	143	127	16	14.5	4	3.2	1	0.8
Ստեղծագործական աշխատանք	143	129	14	13.9	-	-	2	1.6
Ռուսաց լեզու (բանավոր)	114	107	7	11.6	2	1.9	14	13.1
Ֆրանսերեն (բանավոր)	66	63	3	15.3	3	4.8	-	-
Գերմաներեն (բանավոր)	56	54	2	15.5	2	3.7	1	1.9
Իսպաներեն (բանավոր)	9	9	-	14.7	1	11.1	1	11.1
Իտալերեն (բանավոր)	1	1	-	20.0	1	100	-	-

2015 թ. կենտրոնացված քննություններին մասնակցելու համար դիմած 2970 դիմորդներից մասնակցել է 2865-ը, բացակայությունները կազմել են 3.5 %: Բանավոր քննություններից բացակայել են հիմնականում նրանք, ովքեր իրենց հայտագրած միասնական քննություններից չեն հաղթահարել դրական միավորի շեմը:

«Ռուսաց լեզու» և «Իսպաներեն» առարկաների բանավոր քննություն հանձնած դիմորդների ավելի քան 10 տոկոսը չի հաղթահարել դրական միավորի շեմը: «Ֆրանսերեն» առարկայի քննությունից «անբավարար» գնահատական ստացող չի եղել:

Ստեղծագործական աշխատանքի քննության մասնակիցներից ոչ


որ 20 միավոր չի հավաքել, իսկ իտալերենի քննության միակ մասնակիցը հավաքել է 20 միավոր: Մնացած առարկաներից ամենաշատ 20 միավորները բաժին են ընկնում իսպաներենի բանավոր քննություն հանձնած դիմորդներին (11.1%):

Աղյուսակ 6-ում և դրան հաջորդող դիագրամ 8-ում ներկայացված են 7 լեզուներից բանավոր քննություն հանձնած դիմորդների միջին միավորները, այդ դիմորդների՝ միևնույն առարկաների միասնական քննություններից հավաքած միջին միավորները և ընդհանուր միջին միավորները:

Աղյուսակ 6. Տվյալ քննական առարկայից միասնական և բանավոր քննություն հանձնած դիմորդների միջին միավորները

Քննական առարկաներ	Միասնական քննության ընդհանուր միջին միավորը	Բանավոր քննություն հանձնած դիմորդների միջին միավորները	
		միասնական քննությունից	բանավոր քննությունից
Հայոց լեզու և հայ գրականություն	13.7	14.6	10.8
Անգլերեն	14.2	15.9	12.0
Գերմաներեն	14.9	17.4	15.5
Ֆրանսերեն	15.3	17.4	15.3
Ռուսաց լեզու	10.0	12.7	11.6
Իսպաներեն	12.4	15.3	14.7
Իտալերեն	18.8	18.8	20.0

Տվյալ քննական առարկայից միասնական և բանավոր քննություն հանձնած դիմորդների միջին միավորները



Աղյուսակ 6-ը և դիագրամ 8-ը վկայում են, որ բացի իտալերենից, որի քննությանը մասնակցել է մեկ դիմորդ, մյուս բանավոր քննություններին մասնակցած դիմորդների՝ այդ առարկաների միասնական քննությունից հավաքած միջին միավորները բարձր են համապատասխան ընդհանուր միջին միավորներից, իսկ բանավոր քննությունների միջին միավորները ցածր են բանավոր քննություն հանձնած դիմորդների՝ տվյալ քննական առարկայի միասնական քննությունից ստացած միջին միավորներից:

3. 2015 թ. պետական միասնական քննությունների միջին միավորները ըստ խմբերի

Այս բաժնում ներկայացվում են 2015 թ. միասնական քննությունների միջին միավորները ըստ մարզերի, ըստ բնակավայրերի տիպերի, ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տեսակների և ըստ սեռերի:

3.1. Միջին միավորները ըստ մարզերի

Աղյուսակ 7-ում ՀՀ մայրաքաղաքի, մարզերի և քննություններին մասնակից երկրների կտրվածքով ներկայացված են 2015 թ. միասնական քննությունների միջին միավորները: Սև շրջանակի մեջ առնված թվերը ցույց են տալիս տվյալ առարկայի ամենաբարձր միջին միավորը: Այն դեպքում, երբ միջին միավորը ներկայացված է մեկ դիմորդով, աղյուսակում որպես ամենաբարձր միջին միավոր չի նշվել:

Աղյուսակ 7. Պետական միասնական քննությունների միջին միավորները ըստ ՀՀ մարզերի և երկրների

		ՀՀ										ԼՂՀ	Վրաստան	Բուլղարիա	Այլ երկրներ	
		Երևան	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց ձոր					Տավուշ
Հայոց լեզու և հայ գրականություն	մասնակիցների թիվ	2085	322	410	495	483	549	492	512	402	139	299	519	34	3	1
	միջին միավոր	14.3	13.3	14.8	13.8	13.7	14.1	15.1	14.1	14.2	13.3	13.2	11.5	8.0	9.3	11.3
Անգլերեն	մասնակիցների թիվ	2011	184	297	377	264	370	413	405	228	94	163	211	19	4	1
	միջին միավոր	14.6	12.9	15.2	13.9	13.0	14.6	15.2	14.5	15.3	12.8	12.8	14.0	6.7	13.4	18.0*
Մաթեմատիկա	մասնակիցների թիվ	1838	229	324	383	266	374	434	414	315	116	182	372	31	6	2
	միջին միավոր	12.9	11.1	12.1	12.0	11.2	11.3	12.8	12.2	12.2	10.6	11.0	9.5	7.7	12.2	11.6
Ֆիզիկա	մասնակիցների թիվ	710	56	113	112	80	129	168	148	104	33	51	120	11	3	-
	միջին միավոր	11.9	10.2	11.3	10.3	11.0	11.2	12.0	11.1	11.6	9.9	10.6	8.3	4.9	5.3	-
Հայոց պատմություն	մասնակիցների թիվ	514	81	91	101	103	135	99	144	83	34	65	164	4	2	-
	միջին միավոր	13.8	12.3	14.1	13.1	13.0	13.2	14.5	13.3	14.2	12.4	11.7	10.2	7.4	10.6	-
Կենսաբանություն	մասնակիցների թիվ	403	44	90	97	124	92	106	148	76	28	80	81	17	12	-
	միջին միավոր	12.8	11.5	14.0	13.6	13.3	12.4	13.6	13.8	13.9	15.1	10.9	9.4	6.8	11.4	-
Քիմիա	մասնակիցների թիվ	337	29	76	90	96	76	79	119	61	19	48	43	16	13	-
	միջին միավոր	12.5	13.1	14.5	11.6	13.2	13.1	14.2	12.8	14.7	14.4	12.3	10.9	6.3	9.8	-
Ռուսաց լեզու	մասնակիցների թիվ	114	31	28	38	55	55	27	49	47	22	48	212	11	-	-
	միջին միավոր	9.6	10.5	12.0	10.2	10.8	11.0	13.0	10.8	12.5	9.0	9.4	9.3	6.6	-	-
Տրանսլերեն	մասնակիցների թիվ	64	25	13	7	1	-	20	7	15	8	28	-	-	-	-
	միջին միավոր	16.9	15.0	14.1	16.9	18.8*	-	16.1	15.3	18.6	11.8	11.8	-	-	-	-
Աշխարհագրություն	մասնակիցների թիվ	49	25	36	24	31	21	14	21	15	5	56	23	3	-	1
	միջին միավոր	13.5	14.1	15.9	15.8	14.4	14.2	15.6	15.4	16.5	12.5	12.0	9.8	7.3	-	14.3
Գերմաներեն	մասնակիցների թիվ	21	7	24	16	43	29	6	35	18	10	13	-	2	1	1
	միջին միավոր	15.5	15.7	14.8	13.0	15.8	14.4	15.1	15.9	16.3	13.2	14.1	-	11.1	4.8	16.8*
Իսպաներեն	մասնակիցների թիվ	13	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
	միջին միավոր	12.4	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Համաշխարհային պատմություն	մասնակիցների թիվ	7	11	9	7	9	32	4	14	11	2	9	16	-	-	-
	միջին միավոր	11.3	14.4	11.7	12.0	11.4	14.9	12.2	14.6	14.7	11.8	14.2	11.8	-	-	-
Իտալերեն*	մասնակիցների թիվ	1	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
	միջին միավոր	18.8	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-


*- քննությանը մասնակցել է 1 դիմորդ, ըստ այդմ ցուցանիշը որպես ամենաբարձր միջին միավոր չի ներկայացվում:

Աղյուսակից երևում է, որ Շիրակի և Սյունիքի մարզերի դիմորդների բոլոր միջին միավորները բարձր են (կամ հավասար) համապատասխան քննությունների ընդհանուր միջին միավորներից: Կոտայքի մարզի դիմորդների միջին միավորներից ընդհանուր միջին միավորին զիջում է միայն համաշխարհային պատմության քննության միջինը: Տավուշի մարզի դիմորդների բոլոր միջին միավորները, բացի համաշխարհային պատմության միջինից, ցածր են համապատասխան ընդհանուր միջին միավորներից: Վայոց Ձորի մարզում այս տեսան-


կյունից բարձր են միայն կենսաբանության և քիմիայի միջինները:

9-11-րդ դիագրամներում մարզերի և երկրների կտրվածքով համեմատության մեջ են դրվել հայոց լեզվի և հայ գրականության, հայոց պատմության, համաշխարհային պատմության, մաթեմատիկայի, բնագիտական առարկաների և օտար լեզուների միջին միավորները:


2015 թ. պետական միասնական քննությունների միջին միավորները ըստ մարզերի



Դիագրամ 9



Դիագրամ 10



Դիագրամ 11

3.2. Միջին միավորները ըստ բնակավայրերի տիպերի

Աղյուսակ 8-ում ըստ ՀՀ բնակավայրերի տիպերի (քաղաքներ և գյուղեր) ներկայացված են 2015 թ. միասնական քննությունների միջին միավորները և այդ քննությունների ընդհանուր միջին միավորները:

Ըստ քաղաքային բնակավայրերի բնակչության թվի առանձնացվել են խոշոր, միջին և փոքր քաղաքները: Վերջին երկու ենթատիպերի դիմորդների թիվը և միջին միավորներն ուսումնասիրվել են միասին վերցրած: Խոշոր քաղաքների սյունակը պարունակում է և՛ 3 խոշոր քաղաքների՝ Երևանի, Գյումրու և Վանաձորի դիմորդների ընդհանուր թվերն ու միջին միավորները, և՛ միայն Երևանի դիմորդներինը:

Սյունակների մզեցված վանդակներում սպիտակ գույնով գրված են քննական առարկաների ընդհանուր միջին միավորին հավասար կամ գերազանցող միջին միավորները: Սև շրջանակի մեջ առնված թվերը ցույց են տալիս տվյալ առարկայի ամենաբարձր միջին միավորը ըստ բնակավայրի տիպի (ենթատիպի):

Աղյուսակ 8. Միջին միավորները ըստ ՀՀ բնակավայրերի տիպերի

Քննական առարկաները	Քաղաքներ						Գյուղեր		Ընդհանուր միջին միավորը
	Խոշոր քաղաքներ				Միջին և փոքր քաղաքներ				
	մասնակիցների թիվը	միջին միավորը	այդ թվում		մասնակիցների թիվը	միջին միավորը	մասնակիցների թիվը	միջին միավորը	
			մասնակիցների թիվը	երևանում					
Հայոց լեզու և հայ գրականություն	2836	13.9	2085	14.3	1597	14.7	1959	13.4	13.7
Մաթեմատիկա	2568	12.3	1838	12.9	1177	12.5	1380	11.0	11.8
Անգլերեն	2676	14.4	2011	14.6	1236	14.6	1052	13.5	14.2
Տիգրիկա	1002	11.3	710	11.9	387	13.1	428	10.6	10.9
Հայոց պատմություն	701	13.4	514	13.8	342	13.7	446	12.9	13.0
Կենսաբանություն	634	12.5	403	12.8	392	14.3	361	12.0	12.6
Քիմիա	508	12.3	337	12.5	338	14.0	247	12.2	12.6
Ռուսաց լեզու	221	9.5	114	9.6	159	11.6	177	10.3	10.0
Աշխարհագրություն	76	13.7	49	13.5	52	14.1	176	14.4	13.8
Տրանսլերեն	71	16.3	64	16.9	40	16.0	80	13.7	15.3
Համաշխարհային պատմություն	29	13.4	7	11.3	18	12.6	70	13.9	13.3
Գերմաներեն	28	14.6	21	15.5	34	16.5	164	14.7	14.9
Իսպաներեն	13	12.4	13	12.4	-	-	-	-	12.4
Իտալերեն*	1	18.8	1	18.8	-	-	-	-	18.8

* - քննությանը մասնակցել է 1 դիմորդ, ըստ այդմ ցուցանիշը որպես ամենաբարձր միջին միավոր չի ներկայացվում:

Աղյուսակից երևում է, որ միջին և փոքր քաղաքների դիմորդների բոլոր միջին միավորները, բացի համաշխարհային պատմության միջինից, գերազանցում են համապատասխան ընդհանուր միջին միավորներին: Խոշոր քաղաքները ներկայացնող դիմորդների կենսաբանության, քիմիայի, աշխարհագրության, ռուսաց լեզվի և գերմաներենի միջին միավորները փոքր-ինչ զիջում են համապատասխան ընդհանուր միջին միավորներին, իսկ գյուղաբնակ դիմորդների միջին միավորներից միայն ռուսաց լեզվի, աշխարհագրության և համաշխարհային պատմության միջիններն են այդ առարկաների քննությունների ընդհանուր միջին միավորներից բարձր:

Աշխարհագրությունից և համաշխարհային պատմությունից ամենաբարձր միջին միավորները պատկանում են գյուղաբնակ, իսկ մնացած բոլոր առարկաներից՝ միջին և փոքր քաղաքները ներկայացնող դիմորդներին: Երևանի դիմորդների տվյալները խոշոր քաղաքներից առանձին դիտարկելով՝ նկատում ենք, որ մաթեմատիկայից, անգլերենից, հայոց պատմությունից և ֆրանսերենից ամենաբարձր միջին միավորները պատկանում են մայրաքաղաքի դիմորդներին: Իսպաներենի քննության բոլոր մասնակիցները Երևանից են:

3.3. Միջին միավորները ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տեսակների

Աղյուսակ 9-ում ըստ ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների տեսակների (ավագ և միջնակարգ դպրոցներ, վարժարաններ, կրթահամալիրներ և այլն) ներկայացված են 2015 թ. միասնական քննությունների միջին միավորները և այդ քննությունների ընդհանուր միջին միավորները: Յուրաքանչյուր ուսումնական հաստատության տեսակին համապատասխանող սյունակում մզեցված վանդակներում սպիտակ գույնով գրված են միասնական քննությունների համապատասխան ընդհանուր միջին միավորին հավասար կամ գերազանցող միջին միավորները: Սև շրջանակի մեջ առնված թվերը ցույց են տալիս տվյալ առարկայի ամենաբարձր միջին միավորը ըստ ուսումնական հաստատության տեսակի: Այն դեպքում, երբ միջին միավորը ներկայացված է մեկ դիմորդով, աղյուսակում որպես ամենաբարձր միջին միավոր չի նշվել:

Աղյուսակ 9. 2015 թ. միասնական քննությունների միջին միավորներն ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տեսակների

Քննական առարկաները	Ավագ դպրոցներ		Միջնակարգ դպրոցներ		Վարժարաններ		Կրթա-համալիրներ		Այլ ուսումնական հաստատություններ		Ընդհանուր միջին միավոր
	մասնակիցների թիվը	միջին միավորը	մասնակիցների թիվը	միջին միավորը	մասնակիցների թիվը	միջին միավորը	մասնակիցների թիվը	միջին միավորը	մասնակիցների թիվը	միջին միավորը	
Հայոց լեզու և հայ գրականություն	3742	14.1	2615	13.1	223	13.5	39	15.2	372	13.8	13.7
Մաթեմատիկա	2721	12.1	1843	10.8	473	12.5	48	13.5	482	13.2	11.8
Անգլերեն	3246	14.4	1382	13.7	204	13.7	41	15.5	370	14.8	14.2
Կենսաբանություն	940	13.1	457	11.8	21	10.4	20	13.1	89	12.8	12.6
Ֆիզիկա	897	10.6	558	10.3	228	12.0	26	12.0	248	14.8	10.9
Հայոց պատմություն	883	13.5	641	12.3	43	13.6	10	15.4	96	12.9	13.0
Քիմիա	765	12.6	316	12.2	20	10.4	15	13.8	78	14.1	12.6
Աշխարհագրություն	118	13.7	188	13.8	6	14.4	2	14.4	18	14.0	13.8
Ռուսաց լեզու	282	11.1	382	9.9	31	8.2	-	-	86	7.5	10.0
Ֆրանսերեն	107	16.7	79	13.5	4	15.9	-	-	4	13.1	15.3
Գերմաներեն	60	15.2	160	14.9	-	-	5	15.2	5	11.4	14.9
Համաշխարհային պատմություն	30	12.0	92	13.8	9	15.0	-	-	2	8.0	13.3
Իտալերեն	10	13.3	1	6.8*	2	10.9	-	-	-	-	12.4
Իտալերեն*	1	18.8	-	-	-	-	-	-	-	-	18.8

*- քննությանը մասնակցել է 1 դիմորդ, ըստ այդմ ցուցանիշը որպես ամենաբարձր կամ ամենացածր միջին միավոր չի ներկայացվում:

Աղյուսակ 9-ը ցույց է տալիս, որ ավագ դպրոցների շրջանավարտներին պատկանում են օտար լեզուների ամենաբարձր միջին միավորները: Այս դպրոցները ներկայացնող դիմորդների գրեթե բոլոր միջին միավորները, բացի աշխարհագրության, համաշխարհային պատմության և ֆիզիկայի միջիններից, գերազանցում են կամ հավասար են (քիմիա) համապատասխան ընդհանուր միջին միավորներին: Ավագ դպրոցների ամենաբարձր միջին միավորը ֆրանսերենից է (16.7), ամենացածրը՝ ֆիզիկայից (10.6): Իտալերենի քննության միակ մասնակիցը ավագ դպրոցի շրջանավարտ է:

Միջնակարգ դպրոցներում ընդհանուր միջին միավորներից բարձր են միայն աշխարհագրության, գերմաներենի և համաշխարհային պատմության միջինները: Ամենաբարձր միջին միավորը գերմաներենից է (14.9), ամենացածրը՝ ռուսաց լեզվից (9.9):

Ընդհանուր միջին միավորներին գերազանցող միջին միավորները վարժարանների դեպքում բաժին են ընկնում աշխարհագրությանը, հայոց պատմությանը, համաշխարհային պատմությանը, մաթեմատիկային, ֆիզիկային, և ֆրանսերենին: Ամենաբարձր միջին միավորը ֆրանսերենից է (15.9), ամենացածրը՝ ռուսաց լեզվից (8.2): Վարժա-

քանների շրջանավարտները չեն մասնակցել գերմաներենի և իտալերենի քննություններին:

Կրթահամալիրները ներկայացնող դիմորդների բոլոր միջին միավորները բարձր են համապատասխան ընդհանուր միջին միավորներից: Իսպաներենի, իտալերենի, համաշխարհային պատմության, ռուսաց լեզվի և ֆրանսերենի քննություններին այս հաստատությունների շրջանավարտները չեն մասնակցել: Ամենաբարձր միջին միավորն անգլերենից է (15.5), ամենացածրը՝ ֆիզիկայից (12.0):

Հանրակրթական այլ ուսումնական հաստատություններից (հատուկ դպրոցներ, միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ և այլն) հայտագրված դիմորդների անգլերենի և բնագիտական առարկաների միասնական քննություններից հավաքած միջին միավորները բարձր են համապատասխան ընդհանուր միջին միավորներից: Ամենաբարձր միջին միավորն անգլերենից և ֆիզիկայից է (14.8), ամենացածրը՝ ռուսաց լեզվից (7.5): Իսպաներենի և իտալերենի քննություններին այս հաստատությունների շրջանավարտները չեն մասնակցել:

Հանրագումարի բերելով աղյուսակ 9-ի տվյալները՝ կարելի է եզրակացնել, որ բարձր են ավագ դպրոցներից, կրթահամալիրներից և հանրակրթական այլ հաստատություններից հայտագրված դիմորդների անգլերենի, կենսաբանության, հայոց լեզվի և հայ գրականության ու մաթեմատիկայի միջին միավորները: Աշխարհագրության միջին միավորն ընդհանուր միջինից բարձր է ուսումնական հաստատությունների բոլոր տիպերում, բացի ավագ դպրոցներից, գերմաներենինը՝ ավագ և միջնակարգ դպրոցներում ու կրթահամալիրներում, համաշխարհային պատմությանը՝ միջնակարգ դպրոցներում և վարժարաններում, հայոց պատմությանը՝ ավագ դպրոցներում, վարժարաններում և կրթահամալիրներում, քիմիայինը՝ ավագ դպրոցներում, վարժարաններում և այլ ուսումնական հաստատություններում, ֆիզիկայինը՝ վարժարաններում, կրթահամալիրներում և այլ ուսումնական հաստատություններում, ռուսաց լեզվինը՝ ավագ դպրոցներում, ֆրանսերենինը՝ ավագ դպրոցներում և վարժարաններում:

Անգլերենի, հայոց լեզվի և հայ գրականության, հայոց պատմության և մաթեմատիկայի ամենաբարձր միջին միավորները (համապատասխանաբար՝ 15.5, 15.2, 15.4 և 13.5) դիտվում են կրթահամալիրներից հայտագրված դիմորդների շրջանում, աշխարհագրությանը (14.4)՝ վարժարանների և կրթահամալիրների, գերմաներենինը (15.2) և կենսաբանությանը (13.1)՝ ավագ դպրոցների և կրթահամալիրների, ռուսաց լեզվինը (11.1), ֆրանսերենինը (16.7) և իսպաներենինը (13.3)՝ ավագ դպրոցների, համաշխարհային պատմությանը

(15.0)՝ վարժարանների, քիմիայինը (14.1) և ֆիզիկայինը (14.8)՝ այլ ուսումնական հաստատություններից հայտագրվածների շրջանում:


Հանրակրթական ուսումնական հաստատություններում ուսումնասիրվող առարկաների միասնական քննություններից դիմորդների հավաքած ամենաբարձր միջին միավորները բաժին են ընկնում՝ առավելապես օտար լեզուներին (ավագ դպրոցներ և վարժարաններ՝ ֆրանսերեն, միջնակարգ դպրոցներ՝ գերմաներեն, կրթահամալիրներ և այլ ուսումնական հաստատություններ՝ անգլերեն), ամենացածր միջինները՝ ռուսաց լեզվին (միջնակարգ դպրոցներ, վարժարաններ և այլ ուսումնական հաստատություններ) և ֆիզիկային (ավագ դպրոցներ և կրթահամալիրներ):

3.4. Միջին միավորները ըստ սեռերի

Աղյուսակ 10-ում ըստ սեռերի ներկայացված են 2015 թ. պետական միասնական քննությունների մասնակիցների թվերը և միջին միավորները: Յուրաքանչյուր սեռին համապատասխանող պլանակում մզեցված վանդակներում սպիտակ գույնով ներկայացված են միասնական քննությունների համապատասխան ընդհանուր միջին միավորին հավասար կամ գերազանցող միջին միավորները: Սև շրջանակի մեջ առնված թվերը ցույց են տալիս տվյալ առարկայի ամենաբարձր միջին միավորը ըստ սեռերի: Այն դեպքում, երբ միջին միավորը ներկայացված է մեկ դիմորդով, որպես ամենաբարձր միջին միավոր չի նշվել:

Քննական առարկաներ	Ընդհանուր		Աղջիկներ		Տղաներ	
	մասնակիցների թիվը	միջին միավոր	մասնակիցների թիվը	միջին միավոր	մասնակիցների թիվը	միջին միավոր
Հայոց լեզու և հայ գրականություն	6991	13.7	5223	14.1	1768	12.8
Մաթեմատիկա	5567	11.8	2153	12.1	3414	11.6
Անգլերեն	5243	14.2	3600	14.6	1643	13.3
Ֆիզիկա	1957	10.9	456	12.0	1501	10.6
Հայոց պատմություն	1673	13.0	1037	13.2	636	12.7
Կենսաբանություն	1527	12.6	989	12.7	538	12.6
Քիմիա	1194	12.6	736	12.6	458	12.5
Ռուսաց լեզու	781	10.0	473	10.9	308	8.6
Աշխարհագրություն	332	13.8	202	13.7	130	14.0
Գերմաներեն	230	14.9	175	15.4	55	13.1
Ֆրանսերեն	194	15.3	157	15.9	37	13.0
Համաշխարհային պատմություն	133	13.3	94	13.3	39	13.3
Իսպաներեն	13	12.4	10	14.1	3	7.1
Իտալերեն*	1	18.8	1	18.8	-	-

*- քննությանը մասնակցել է 1 դիմորդ, և ցուցանիշը որպես ամենաբարձր կամ ամենացածր միջին միավոր չի ներկայացվում:



Դիագրամ 12

Աղյուսակ 10-ից և դիագրամ 12-ից երևում է, որ բացի աշխարհագրությունից, մնացած բոլոր քննությունների միջին միավորները աղջիկների դեպքում հավասար կամ բարձր են համապատասխան ընդհանուր միջին միավորներից: Կենսաբանության և համաշխարհային պատմության քննություններից տղաների հավաքած միջին միավորները հավասար են համապատասխան ընդհանուր միջին միավորներին, աշխարհագրության միջինը բարձր է ընդհանուր միջինից, իսկ մյուս քննությունների միջինները ցածր են: Աղջիկների և տղաների համաշխարհային պատմության միջին միավորները հավասար են միմյանց: Իտալերենի քննությանը մասնակցել է մեկ աղջիկ: Տղաները միայն աշխարհագրության միջին միավորով են գերազանցում աղջիկներին:

Աղջիկների ամենաբարձր միջին միավորը ֆրանսերենից է (15.9), տղաներինը՝ աշխարհագրությունից (14.0): Աղջիկների ամենացածր միջին միավորը ռուսաց լեզվից է (10.9), տղաներինը՝ իսպաներենից (7.1): Հանրակրթական ուսումնական հաստատություններում ուսումնասիրվող առարկաներից տղաների ամենացածր միջին միավորը ռուսաց լեզվից է (8.6):

4. Թեստեր և թեստային առաջադրանքներ

4.1. Թեստերի կառուցվածքը և գնահատումը

Միասնական քննությունների թեստերը կարող են կազմված լինել ընտրովի, կարճ պատասխանով առաջադրանքներից և պնդումների փնջերից: Ընտրովի պատասխանով առաջադրանքի պատասխանի 4 հնարավոր տարբերակներից (դիստրակտորներից) ճիշտ է միայն մեկը: Կարճ պատասխանով առաջադրանքները 2 տիպի են: Դրանցից մեկի դեպքում պատասխանը մեկ թիվ է կամ մի քանի թվեր, որոնց

հաջորդականությունը պահպանելը կարևոր է: Մյուս տիպի դեպքում թվային հաջորդականության պահպանումը կարևոր չէ: Պնդումների փունջը կազմված է 6 պնդումներից, որոնցից յուրաքանչյուրի հնարավոր պատասխաններն են՝ «Ճիշտ է», «Միսալ է», «Չգիտեմ», և դրանցից պետք է ընտրել միայն մեկը:

Բոլոր թեստերի առավելագույն միավորը 80 է (50 միավոր՝ Ա, 30 միավոր՝ Բ մակարդակներից): Գնահատման 80 միավորանոց սանդղակից 20 միավորանոց սանդղակին անցումը կատարվել է

$$U=0.25 * U80$$

բանաձևով, որտեղ U -ն միավորն է 20 միավորանոց սանդղակում, $U80$ -ը՝ 80 միավորանոց սանդղակում:

Դրական են համարվել 7.5 և ավելի միավորները:

Բոլոր թեստերում ընտրովի և կարճ պատասխանով յուրաքանչյուր առաջադրանքի ճիշտ պատասխանի համար ըստ գնահատման 20 միավորանոց համակարգի տրվել է 0.25 միավոր (ըստ 80 միավորանոց համակարգի՝ 1 միավոր): Պնդումների փնջերը կազմված են եղել 6 պնդումներից, որոնցից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանի համար ըստ գնահատման 20 միավորանոց համակարգի տրվել է 0.25 միավոր, յուրաքանչյուր սխալ պատասխանի դեպքում պնդումների տվյալ փնջին տրվելիք միավորներից հանվել է 0.25 միավոր: «Չգիտեմ» պատասխանի դեպքում միավոր չի տրվել և չի հանվել: Ամբողջ փնջին միավոր չի տրվել նաև պնդումների փնջի միավորների գումարի արդյունքում ստացված բացասական թվի կամ 0-ի դեպքում: Այլ առաջադրանքներից հավաքած միավորների վրա տվյալ փնջի միավորների փոփոխությունը չի ազդել:

Միասնական քննությունների թեստերի կառուցվածքի և առաջադրանքների թվի վերաբերյալ տեղեկություններ է տալիս աղյուսակ 11-ը:

Աղյուսակ 11. 2015 թ. պետական միասնական քննությունների թեստերի առաջադրանքների կառուցվածքային տիպերը

Քննական առարկաները	Ա մակարդակ			Բ մակարդակ			Ընդամենը	
	Առաջադրանքների և ենթաառաջադրանքների կառուցվածքային տիպերը						Առաջադրանքների թիվը	Կերտառաջադրանքների թիվը
	ընտրովի պատասխանով կարճ	կարճ պատասխանով	պնդումների փունջ	ընտրովի պատասխանով կարճ	կարճ պատասխանով	պնդումների փունջ		
Անգլերեն	42	8	-	18	12	-	14	80
Աշխարհագրություն	40	4	1	15	9	1	68	70
Գերմաներեն	42	8	-	18	12	-	17	80
Կենսաբանություն	40	4	1	-	24	1	65	70
Համաշխարհային պատմություն	50	-	-	30	-	-	80	-
Հայոց լեզու և հայ գրականություն	32	12	1	18	6	1	70	-
Հայոց պատմություն	38	6	1	14	10	1	70	-
Մաթեմատիկա	36	8	1	-	18	2	19	65
Ռուսաց լեզու	42	8	-	18	12	-	80	-
Քիմիա	40	4	1	-	24	1	57	70
Ֆիզիկա	40	4	1	-	24	1	55	70
Ֆրանսերեն*	42	8	-	18	12	-	17	80

* 2015 թ. միասնական քննությունների «Բ» սպասարկումը և «Բ» տարիներին թեստերի կառուցվածքը եղել է «Ֆրանսերեն» առարկայի ուղեցույցի պահանջներին համապատասխան:

Աղյուսակ 11-ից երևում է, որ համաշխարհային պատմության թեստերը կազմված են միայն ընտրովի պատասխանով առաջադրանքներից, օտար լեզուներինը՝ ընտրովի և կարճ պատասխանով առաջադրանքներից, իսկ մնացած բոլոր առարկաներինը՝ ընտրովի և կարճ պատասխանով առաջադրանքներից և պնդումների փնջերից:

4.2. Պետական միասնական քննությունների թեստերի բարդությունը և հուսալիությունը

Թեստերը հետազոտվել են ըստ բարդության և հուսալիության գործակիցների (աղյուսակ 12): Մասնակիցների փոքրաթիվ լինելու պատճառով իսպաներենի և իտալերենի թեստերը, ինչպես նաև մի քանի այլ առարկաների լրացուցիչ փուլի թեստերը վերլուծության չեն ենթարկվել, քանի

որ 200-ից պակաս թվով մասնակիցների դեպքում ըստ որակական բնութագրիչների վերլուծության արդյունքները հավաստի չեն համարվում:

Աղյուսակ 12. 2015 թ. պետական միասնական քննությունների թեստերի բարդությունը¹ և հուսալիությունը²

Քննական ասարկանքը	Քննարկ համարը	Մասնակիցների թիվը	Քննության բնույթը	Միջին միավորը	Բարդության գործակիցը	Հուսալիության գործակիցը	Քննական ասարկանքը	Քննարկ համարը	Մասնակիցների թիվը	Քննության բնույթը	Միջին միավորը	Բարդության գործակիցը	Հուսալիության գործակիցը		
Հարց լեզու և հայ գրականություն	1	1693	միասն.	14.0	0.70	0.954	Կենտրոնական	1	337	միասն.	12.4	0.62	0.977		
		ավարտ.	14.0	0.70	0.925	ավարտ.				13.6	0.68	0.955			
	2	1645	միասն.	14.0	0.70	0.948		2	346	միասն.	13.2	0.66	0.973		
			ավարտ.	14.6	0.73	0.919				ավարտ.	15.0	0.75	0.944		
	3	1666	միասն.	14.0	0.70	0.953		3	338	միասն.	12.8	0.64	0.972		
			ավարտ.	14.0	0.70	0.922				ավարտ.	14.0	0.70	0.945		
	4	1656	միասն.	14.0	0.70	0.947		4	335	միասն.	13.2	0.66	0.971		
			ավարտ.	14.6	0.73	0.918				ավարտ.	15.0	0.75	0.944		
	5-8	283	միասն.	9.2	0.46	0.956		5-8	160	միասն.	10.4	0.52	0.969		
			ավարտ.	10.0	0.50	0.938				ավարտ.	12.2	0.61	0.946		
Հարց պատմություն	1	404	միասն.	13.2	0.66	0.958	Աշխարհագրություն	1	81	միասն.	14.2	0.71	0.956		
			ավարտ.	14.2	0.71	0.930				ավարտ.	15.0	0.75	0.928		
	2	398	միասն.	13.2	0.66	0.963		2	80	միասն.	14.4	0.72	0.952		
			ավարտ.	14.2	0.71	0.941				ավարտ.	15.0	0.75	0.922		
	3	395	միասն.	13.4	0.67	0.960		3	82	միասն.	13.8	0.69	0.967		
			ավարտ.	14.4	0.72	0.934				ավարտ.	14.4	0.72	0.943		
	4	391	միասն.	12.8	0.64	0.962		4	76	միասն.	13.0	0.65	0.955		
			ավարտ.	14.8	0.69	0.935				ավարտ.	14.2	0.71	0.921		
	5-8	83	միասն.	10.2	0.51	0.969		1	176	միասն.	10.6	0.53	0.944		
			ավարտ.	10.8	0.54	0.953				ավարտ.	11.2	0.56	0.908		
Համաշխարհային պատմություն	1	31	միասն.	13.8	0.69	0.958	Ռուսաց լեզու	2	185	միասն.	10.0	0.50	0.953		
			ավարտ.	13.6	0.68	0.938				ավարտ.	10.6	0.53	0.921		
	2	31	միասն.	13.4	0.67	0.950		3	178	միասն.	10.6	0.53	0.947		
			ավարտ.	13.2	0.66	0.922				ավարտ.	11.2	0.56	0.917		
	3	35	միասն.	13.0	0.65	0.962		4	181	միասն.	10.0	0.50	0.957		
			ավարտ.	12.4	0.62	0.946				ավարտ.	10.6	0.53	0.929		
	4	32	միասն.	13.8	0.69	0.967		5-8	76	միասն.	13.4	0.67	0.922		
			ավարտ.	13.4	0.67	0.955				ավարտ.	15.0	0.75	0.891		
	Մաթեմատիկա	1	1318	միասն.	12.0	0.60		0.952	Անգլերեն	1	1234	միասն.	14.8	0.74	0.966
				ավարտ.	14.2	0.71		0.920				ավարտ.	15.2	0.76	0.943
2		1292	միասն.	12.0	0.60	0.952	2	1249		միասն.	14.0	0.70	0.968		
			ավարտ.	14.4	0.72	0.922				ավարտ.	14.4	0.72	0.949		
3		1299	միասն.	12.0	0.60	0.948	3	1253		միասն.	14.4	0.72	0.965		
			ավարտ.	14.2	0.71	0.911				ավարտ.	14.8	0.74	0.942		
4		1289	միասն.	12.2	0.61	0.951	4	1238		միասն.	14.4	0.72	0.966		
			ավարտ.	14.6	0.73	0.918				ավարտ.	14.8	0.74	0.945		
5-8		354	միասն.	9.2	0.46	0.963	5-8	271		միասն.	10.6	0.53	0.968		
			ավարտ.	11.6	0.58	0.952				ավարտ.	11.2	0.56	0.947		
Ֆիզիկա	1	451	միասն.	11.4	0.57	0.961	Ֆրանսերեն	1	51	միասն.	16.4	0.82	0.964		
			ավարտ.	13.0	0.65	0.916				ավարտ.	17.2	0.86	0.938		
	2	451	միասն.	11.4	0.57	0.966		2	45	միասն.	16.0	0.80	0.966		
			ավարտ.	13.4	0.67	0.937				ավարտ.	16.6	0.83	0.943		
	3	439	միասն.	11.0	0.55	0.961		3	48	միասն.	14.4	0.72	0.969		
			ավարտ.	12.6	0.63	0.918				ավարտ.	16.0	0.80	0.951		
	4	454	միասն.	11.4	0.57	0.965		4	43	միասն.	14.8	0.74	0.977		
			ավարտ.	13.6	0.68	0.931				ավարտ.	15.8	0.79	0.965		

Քիմիա	5-8	151	միասն.	7.4	0.37	0.969	Վերականգնում	1	55	միասն.	15.8	0.79	0.966	
			ավարտ.	9.0	0.45	0.941				ավարտ.	16.2	0.81	0.942	
	1	263	միասն.	13.0	0.65	0.972		2	59	միասն.	14.4	0.72	0.961	
			ավարտ.	14.8	0.74	0.943				ավարտ.	15.2	0.76	0.933	
	2	259	միասն.	12.4	0.62	0.971		3	52	միասն.	15.2	0.76	0.962	
			ավարտ.	14.6	0.73	0.936				ավարտ.	15.6	0.78	0.928	
	3	265	միասն.	13.2	0.66	0.972		4	55	միասն.	15.0	0.75	0.965	
			ավարտ.	15.0	0.75	0.942				ավարտ.	15.6	0.78	0.939	
	4	261	միասն.	13.2	0.66	0.971								
			ավարտ.	15.6	0.78	0.940								
	5-8	143	միասն.	9.8	0.49	0.970								
			ավարտ.	12.2	0.61	0.946								

Աղյուսակ 12-ից երևում է, որ միասնական քննությունների թեստերի մեծ մասն ունի միջին բարդություն և մեծ հուսալիություն: Մզեցված վանդակներում ներկայացված են հեշտ թեստերի բարդության գործակիցները, ինչպես նաև ընդունելի հուսալիություն ունեցող թեստերի հուսալիության գործակիցները:

Ըստ բարդության գործակցի հեշտ են (տես՝ աղյուսակ 12-ի ներքևում տրված ծանոթագրությունը) քիմիայի միասնական քննության 3-րդ և 4-րդ, կենսաբանության 2-րդ և 4-րդ, աշխարհագրության 1-ին և 2-րդ, ռուսաց լեզվի 5-8-րդ, անգլերենի 1-ին և 2-րդ թեստերի Ա մակարդակները (ավարտական քննության մասը), ֆրանսերենի 1-ին և 2-րդ թեստերի և՛ ավարտական, և՛ միասնական քննությունների թեստերը, ինչպես նաև 3-րդ և 4-րդ թեստերի Ա մակարդակները: Գերմաներենի թեստերը հեշտ են, բացի միասնական քննության 2-րդ թեստից:

Միասնական քննությունների թեստերից ամենափոքր բարդության գործակից (միասնական՝ 0.37, ավարտական՝ 0.45) ունեցել են ֆիզիկայի լրացուցիչ փուլի թեստերը: Ամենամեծ բարդության գործակից (միասնական՝ 0.82, ավարտական՝ 0.86) ունեցել է ֆրանսերենի 1-ին թեստը:

Միասնական քննությունների բոլոր թեստերի հուսալիությունը մեծ է: Միայն ռուսաց լեզվի լրացուցիչ փուլի թեստերն ունեն ընդունելի հուսալիություն (0.891):

1 Բարդություն: Թեստը համարվում է շատ հեշտ, երբ բարդության գործակիցը (P) գտնվում է 0.9-1.0 սահմաններում: $0.75 \leq P \leq 0.89$ սահմաններում թեստը հեշտ է, $0.30 \leq P \leq 0.74$ սահմաններում՝ միջին բարդության, $0.20 \leq P \leq 0.29$ սահմաններում՝ բարդ, $P \leq 0.19$ դեպքում՝ շատ բարդ:

2 Հուսալիություն: Հուսալիության գործակցի՝ 0.7-ից մինչև 0.8 ընդունած արժեքների դեպքում թեստի հուսալիությունը համարվում է միջին, 0.8-ից մինչև 0.9 արժեքների դեպքում՝ ընդունելի, 0.9-ից մեծ արժեքների դեպքում՝ մեծ:

5. Բուհերի ընդունելության մրցույթի կազմակերպումը

2015 թ. բուհերի ընդունելության մրցույթն անցկացվել է ԳԹԿ-ում՝ համակարգչային ծրագրերի միջոցով: Մրցույթին չեն մասնակցել զուտ ներբուհական քննություններով ընդունելություն կազմակերպող բուհերի դիմորդները:

Մրցույթը կազմակերպվել է երկու փուլով: Բուհերում հայտագրված 11416 դիմորդներից 11361-ը դիմել են ՀՀ պետական բուհեր, 55-ը՝ ոչ պետական բուհեր: Հայտագրվածներից 1826 դիմորդ որևէ քննությունից չի հաղթահարել դրական միավորի շեմը: 204 դիմորդներ մասնակցել են մրցույթին, սակայն բուհի դիմում-հայտում իրենց նշած մասնագիտությունների համար անցողիկ միավորներից պակաս միավոր ունենալու պատճառով դուրս են մնացել: 297 դիմորդ առեստատ չներկայացնելու պատճառով չի մասնակցել մրցույթին:

Մրցույթի առաջին փուլին, որն անցկացվել է հուլիսի 15-ին, համաձայն իրենց դիմում-հայտերում նշած մասնագիտությունների, մասնակցել են դրական միավորներ հավաքած բոլոր դիմորդները: Մրցույթի երկրորդ փուլն անցկացվել է հուլիսի 25-ին, որին հայտագրվել է 312 դիմորդ:


Այսպիսով, 2015 թ. բուհերում հայտագրված 11416 դիմորդների 86.7%-ը (9902 դիմորդ) ընդունվել է, 1.8%-ը (204 դիմորդ) մրցույթից դուրս է մնացել: Բուհեր ընդունված 9902 դիմորդներից 1380-ը (13.9%) ընդունվել են անվճար, 8432-ը (85,2%)՝ վճարովի հիմունքներով և 90-ը (0.9%)՝ արտոնություններով: Անվճար հիմունքներով բոլոր ընդունվածներն ընդունվել են մրցույթի առաջին փուլում: Վճարովի հիմունքներով ընդունվածներից 8122-ը (96.3%) ընդունվել են առաջին, 310-ը (3.7%)՝ երկրորդ փուլում: Արտոնություններով ընդունվածներից 88-ն ընդունվել է 1-ին փուլում, 2-ը՝ երկրորդում:

Մրցույթին մասնակցելով միայն հանրակրթական ուսումնական հաստատության ավարտական կամ տարեկան գնահատականներով՝ վճարովի հիմունքներով ընդունվել է 644 դիմորդ:

Աղյուսակ 13-ում և դիագրամ 13-ում ներկայացված է բուհ ընդունվածների տոկոսը՝ ըստ ՀՀ մարզերի և երկրների: Ընդունվածների 99.6%-ը ներկայացնում է Հայաստանը: Մայրաքաղաք Երևանի դիմորդները կազմում են 35.55%-ը:

Աղյուսակ 13. Բուհ ընդունվածների թիվը և տոկոսը ըստ ՀՀ մարզերի և երկրների

Բուհ ընդունվածների		ՀՀ										Արևածովյան			Այլ երկրներ	
		Երևան	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց ձոր	Տավուշ	Լ.ՂՀ	Վրաստան	Ռուսաստան	Այլ երկրներ
թիվը		3520	482	698	748	677	800	873	832	591	200	441	12	15	12	1
տոկոսը		35.55	4.87	7.05	7.55	6.84	8.08	8.82	8.40	5.97	2.02	4.45	0.12	0.15	0.12	0.01



Դիագրամ 13

Աղյուսակ 14. 2015 թ. բուհերի ընդունելության մրցույթի 2-րդ փուլով ընդունվածների թիվը

Բուհը		Ընդունվածների թիվը	Բուհը	Ընդունվածների թիվը
Երևանի պետական համալսարան		32	Երևանի պետական լեզվաբանական համալսարան	4
Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան	Երևանի կրթահամալիր	8	Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտ	2
	Գյումրու մասնաճյուղ	2	Վանաձորի պետական համալսարան	24
	Վանաձորի մասնաճյուղ	1	Գավառի պետական համալսարան	1
Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան		4	Հայաստանի ազգային ագրարային համալսարան	188
Հայկական պետական մանկավարժական համալսարան		45	Հայկական բժշկական ինստիտուտ	1
Ընդամենը				312

Աղյուսակ 14-ից հետևում է, որ 2015 թ. բուհերի ընդունելության մրցույթի երկրորդ փուլով ընդունված դիմորդների թվի կեսից ավելին ընդունվել է Հայաստանի ազգային ագրարային համալսարան: Պատճառն այն է, որ նշված բուհ հնարավոր է ընդունվել ավարտական կամ տարեկան գնահատականներով:

5.1 Ամենաշատ և ամենաքիչ պահանջարկ ունեցող մասնագիտությունները

Աղյուսակ 15-ում ներկայացված է ՀՀ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ամենաշատ և ամենաքիչ պահանջարկ ունեցող մասնագիտությունների ցանկը: Երևանում գործող բուհերի տվյալներում ընդգրկված չեն մարզերում գործող մասնաճյուղերի տվյալները: Մեկ տեղի համար դիմած դիմորդների թիվը հաշվարկվել է տվյալ մասնագիտության համար դիմած դիմորդների թվի և բուհի տեղերի թվի հարաբերությամբ:

Աղյուսակ 15. 2015 թ. ամենաշատ պահանջված մասնագիտությունները ըստ բուհերի

Բուհը	Մասնագիտության ծածկագիրը	Մասնագիտությունը	Միասնական քննություն		
			Վճարովի դիմումներ	Տեղերի թիվը	Մեկ տեղի համար դիմած դիմորդների թիվը
Անվճար ուսուցում					
ԵՊՀ	19	Սերվիս	139	2	70
	25	Հանրային կառավարում	197	3	66
	38	Լեզվաբանություն և միջմշակութային հաղորդակցություն, անգլերեն	157	3	52
ՀՊՄՀ	148	Հայոց լեզու և գրականություն	97	2	49
ԵՊՀ	31	Մոցիալական աշխատանք	144	3	48
ՀՊՄՀ	167	Մոցիալական մանկավարժություն	82	2	41
	154	Ռուսաց լեզու և գրականություն	36	1	36
ՀՊՏՀ (Եղեգնաձոր)	136	Ֆինանսներ (այդ թվում՝ մաքսային գործ, արժեթղթերի շուկայի վերլուծություն և կառավարում, քանկային գործ)	35	1	35
ԵՊՀ	44	Թարգմանչական գործ անգլերեն և հայերեն լեզուներ	104	3	35
ՀՊՄՀ	145	Իրավագիտություն	67	2	34
Վճարովի ուսուցում ԱՏ					
Բուհը	Մասնագիտության ծածկագիրը	Մասնագիտությունը	Վճարովի դիմումներ	Տեղերի թիվը	Մեկ տեղի համար դիմած դիմորդների թիվը
ՀՊՏՀ	120	Աշխատանքի տնտեսագիտություն	582	23	25
	111	Տնտեսագիտության տեսություն	556	23	24
	129	Շուկայաբանություն (մարքեթինգ)	992	46	22
	123	Հոլագույքային հարաբերություններ	539	25	22
ՀՊՄՀ	174	Հատուկ կրթության մանկավարժություն և հոգեբանություն (նախադասարանական)	326	16	20
	167	Մոցիալական մանկավարժություն	681	35	19
ՀՊՏՀ	125	Ապահովագրական գործ	858	46	19
	128	Ապրանքագիտություն և ապրանքների որակի փորձաքննություն (այդ թվում՝ պարենային ապրանքների ապրանքագիտություն և ապրանքների որակի փորձաքննություն, ոչ պարենային ապրանքների ապրանքագիտություն և ապրանքների որակի փորձաքննություն)	669	36	19
	115	Կոմերցիա (այդ թվում՝ բիզնեսի կազմակերպում)	848	46	18
	118	Միջազգային տնտեսական հարաբերություններ	835	46	18

Աղյուսակ 15-ից հետևում է, որ մասնագիտությունների շարքում անվճար ուսուցման հիմունքներով ամենամեծ պահանջարկ ունի Երևանի պետական համալսարանի «Մերվիս» մասնագիտությունը (1 տեղի համար դիմել է 70 դիմորդ), իսկ վճարովի հիմունքներով՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Աշխատանքի տնտեսագիտություն» մասնագիտությունը (1 տեղի համար դիմել է 25 դիմորդ):

Աղյուսակ 16-ում ներկայացված են ամենաքիչ պահանջարկ ունեցող 10 մասնագիտությունները: Ըստ մեկ տեղի համար դիմած դիմորդների թվի, տարբեր բուհերում ցածր պահանջարկ ունեցող 83 մասնագիտություններից (1 տեղի համար դիմածների ամենամեծ թիվը՝ 25) առանձնացվել է ամենաքիչ պահանջարկ ունեցող 10 մասնագիտություն:

Աղյուսակ 16. 2015 թ. ամենաքիչ պահանջված մասնագիտությունները

Մասնագիտության նվազագույնը	Մասնագիտությունը	Որև: հայտու դիմած դիմորդների թիվը	Մի: Տեղերի թիվը	Մեկ տեղի համար դիմած դիմորդների թիվը
020800	Բնապահպանություն և բնօգտագործում	3	25	0
021000	Դեղագործական քիմիա	108	99	1
032400	Ռուսաց լեզու և գրականություն	304	197	2
260200	Տեքստիլ և թեթև արդյունաբերության արտադրանքի նախագծում	25	15	2
030600	Լրագրություն	278	146	2
150400	Մեքենաշինություն և նյութերի մշակում	66	35	2
020900	Էկոլոգիական քիմիա	84	39	2
031000	Հայոց լեզու և գրականություն	895	346	3
020400	Աշխարհագրություն	402	147	3
100100	Մերվիս (տուրիզմ)	1117	373	3

Աղյուսակից հետևում է, որ ամենաքիչ պահանջվածը «Բնապահպանություն և բնօգտագործում» մասնագիտությունն է (բոլոր բուհերում միասին հաշված՝ 25 տեղի համար դիմածների թիվը կազմում է 3 դիմորդ):

Աղյուսակ 17-ում ներկայացված է Երևանում գործող պետական բուհեր և ՀՀ այլ բուհեր դիմած և ընդունված դիմորդների թիվը ըստ ՀՀ մարզերի և այլ երկրների: Դիմորդների թիվը ներկայացված է ըստ դիմում-հայտում նշված առաջին հայտի, ընդունվածներինը՝ նաև ըստ մյուս հայտերի:


Աղյուսակ 17. Երևանում գործող պետական բուհեր և ՀՀ այլ բուհեր դիմած և ընդունված դիմորդների թիվը ըստ ՀՀ մարզերի և այլ երկրների

Բուհեր	ՀՀ											ԼՂՀ	Վրաստան	Ռուսաստան	Անդամուկ	
	Երևան	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վարդգ Շիր	Տավուշ					
ԵՊՀ	դիմորդների թիվը	1491	209	262	257	265	190	305	200	171	69	123	6	15	2	3565
	ընդունվածների թիվը	1252	167	231	225	223	164	275	177	159	53	100	5	3	1	3035
ՀՊՏՀ	դիմորդների թիվը	587	55	115	128	77	60	139	49	81	17	20	-	8	1	1337
	ընդունվածների թիվը	404	43	89	93	54	48	109	39	73	13	13	-	3	-	981
ԵՊԲՀ	դիմորդների թիվը	416	29	73	79	74	56	80	104	50	16	39	5	8	19	1048
	ընդունվածների թիվը	310	20	64	61	65	50	65	83	41	14	28	1	2	9	813
ՀՊՄՀ	դիմորդների թիվը	177	105	104	149	135	24	123	18	71	40	46	2	3	-	997
	ընդունվածների թիվը	157	93	92	129	110	22	110	23	65	27	41	2	1	-	872
ՀԱՊՀ	դիմորդների թիվը	465	47	86	86	42	31	113	19	37	26	20	2	2	1	977
	ընդունվածների թիվը	404	35	77	69	37	26	104	19	33	25	17	1	-	2	849
ՀԱԱՀ	դիմորդների թիվը	450	61	82	79	49	17	97	34	10	14	73	-	4	-	970
	ընդունվածների թիվը	422	61	75	79	48	17	98	34	11	20	69	-	4	-	938
ԵՊԼՀ	դիմորդների թիվը	263	35	45	64	32	36	61	33	30	9	13	4	2	-	627
	ընդունվածների թիվը	233	31	42	57	27	37	59	31	29	7	14	2	-	-	569
ՃՇՀԱՀ*	դիմորդների թիվը	329	30	32	30	32	20	49	14	21	23	8	-	5	-	594
	ընդունվածների թիվը	302	28	26	30	31	18	48	14	22	23	8	1	2	-	554
Այլ բուհեր	դիմորդների թիվը	53	8	4	5	102	512	9	491	190	39	197	-	2	2	1614
	ընդունվածների թիվը	36	4	2	5	82	418	5	412	158	18	151	-	-	-	1291

*- ՃՇՀԱՀ ընդունված դիմորդների թվում կա այլ երկրից 1 դիմորդ:

Դիագրամ 14-ի յուրաքանչյուր սյունը ցույց է տալիս, թե տվյալ մարզը կամ երկիրը ներկայացրած դիմորդների քանի տոկոսը առաջին հայտով ո՛ր բուհ է դիմել: Հայտագրված դիմորդների թիվը ներկայացված է ըստ դիմում-հայտում նշված առաջին հայտի, ընդունվածներինը (դիագրամ 15)՝ նաև ըստ մյուս հայտերի:

Հայտագրված դիմորդների տոկոսը



Դիագրամ 14

ԵՊՀ - Երևանի պետական համալսարան


ՀՊՏՀ - Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան

ԵՊԲՀ - Երևանի Մ. Հերացու անվան պետական թժկական համալսարան

ՀՊՄՀ - Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

ՀԱՊՀ - Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան (Երևանի կրթահամալիր)

Հնդուկվածների տոկոսը



Դիագրամ 15

ՀԱԱՀ - Հայաստանի ազգային ագրարային համալսարան

ԵՊԼՀ - Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարան

ՃՇՀԱՀ - Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան

Այլ բուհեր – պետական և ոչ պետական մնացած բոլոր բուհերը, ինչպես նաև պետական բուհերի մասնաճյուղերը

Դիագրամներից երևում է, որ ՀՀ բուհեր ընդունվածների տոկոսը (ըստ մարզերի և երկրների) որոշ բուհերի դեպքում ավելի բարձր է, քան նույն բուհ դիմած դիմորդների տոկոսը: Դրա պատճառը, ինչպես նշվեց վերևում, այն է, որ բուհ դիմածների տոկոսը հաշվարկված է ըստ առաջին հայտի, իսկ ընդունվածներն ընդունվել են նաև ըստ մյուս հայտերի: Լոռու, Շիրակի, Սյունիքի, Տավուշի, Վայոց Ձորի և Գեղարքունիքի մարզերում գործող որոշ բուհերի և խոշոր բուհերի մասնաճյուղերի առկայությամբ պայմանավորված՝ «այլ բուհեր» դիմած և ընդունված դիմորդների տոկոսը բավական բարձր է: Դրանով մասամբ բեռնաթափվում են մայրաքաղաքում գործող բուհերը, և լուծվում են սովորողների որոշ սոցիալական խնդիրներ: Ստորև ներկայացվում է այդ բուհերի ցանկը՝ դիմած դիմորդների և ընդունվածների թվերով:

Աղյուսակ 18. ՀՀ մարզերում գործող և 2015 թ. ընդունելության մրցույթում ընդգրկված բուհեր և խոշոր բուհերի մասնաճյուղեր ընդունվածների թիվը

Մարզը	Բուհի անվանումը	Դիմում-հայտ	Ընդունվածների
		ներկայացրածների թիվը	թիվը
Գեղարքունիք	Գավառի պետական համալսարան	98	82
	ՀԱՊՀ Վանաձորի մասնաճյուղ	88	66
Լոռի	Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան	434	359
	ՀԱՊՀ Գյումրու մասնաճյուղ	88	75
Շիրակ	ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղ	115	92
	Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ	298	251
Սյունիք	ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղ	53	46
	Գորիսի պետական համալսարան	135	109
Վայոց Ձոր	ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղ	40	18
Տավուշ	ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ	187	143
Ընդամենը		1536	1241

Աղյուսակ 18-ից երևում է, որ նշված բուհեր և բուհերի մասնաճյուղեր ընդունվել է 1241 դիմորդ: Դա կազմում է 2015 թ. ՀՀ բուհեր ընդունվածների ընդհանուր թվի 12.5%-ը:

Աղյուսակ 19-ում ներկայացված են ՀՀ մի քանի ոչ պետական բուհեր դիմած դիմորդների և ընդունվածների թվերը:

Աղյուսակ 19. ՀՀ ոչ պետական բուհեր ընդունվածների թիվը

Բուհի անվանումը	Դիմում-հայտ ներկայացրածների թիվը	Ընդունվածների թիվը
Երևանի "Հայբուսակ" համալսարան	13	5
Եվրասիա միջազգային համալսարան	9	2
Հայկական բժշկական ինստիտուտ	18	6
Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիա հիմնադրամ	12	7

Ամփոփում

2015 թ. միասնական քննությունների արդյունքների վերլուծությունից հետևում է, որ քննությունների մասնակիցների թիվը նախորդ տարիների համեմատությամբ նվազել է: Այն նվազել է նաև ըստ քննական առարկաների:

Քիմիայի, ֆիզիկայի, կենսաբանության, մաթեմատիկայի, համաշխարհային պատմության, հայոց պատմության, ռուսաց լեզվի և իսպաներենի միասնական քննությունների մասնակիցների 10%-ից ավելին չի հաղթահարել դրական միավորի շեմը: Ընդ որում, համեմատելով «2014 թ. պետական միասնական քննությունների արդյունքների վիճակագրական վերլուծության» տվյալների հետ, կարելի է նկատել, որ նախորդ տարվա համեմատությամբ 2015 թ. նվազել է կենսաբանության (10%-ով) և հայոց պատմության (1.3%-ով) միասնական քննություններից «անբավարար» գնահատական ստացած դիմորդների թիվը: Քիմիայի, ֆիզիկայի, մաթեմատիկայի, համաշխարհային պատմության և ռուսաց լեզվի դեպքում այդ ցուցանիշն ավելացել է 0.3-7.3%-ով, իսպաներենի դեպքում՝ 23.1%-ով:

2014 և 2015 թթ. միասնական քննությունների արդյունքների վերլուծությունների «Թեստերի բարդությունը և հուսալիությունը» աղյուսակների համեմատությունից երևում է, որ նախորդ տարվա համեմատությամբ 2015 թ. ավելի հեշտ հաղթահարելի են եղել հայոց

լեզվի և հայ գրականության, հայոց պատմության, համաշխարհային պատմության, կենսաբանության, ֆիզիկայի և գերմաներենի թեստերը: Ավելի դժվար հաղթահարելի են եղել ռուսաց լեզվի քննության հիմնական փուլի և անգլերենի քննության լրացուցիչ փուլի թեստերը:

Միասնական քննությունների ընդհանուր միջին միավորների համեմատությունից (ըստ տարիների) երևում է, որ վերջին երեք տարիներին նվազման միտում ունեն ֆիզիկայի, ռուսաց լեզվի, ֆրանսերենի և իսպաներենի միջին միավորները:

ՀՀ մարզերը ներկայացրած դիմորդների միջին միավորների առումով, պետք է նկատել, որ, պատրաստվածության ուղղությամբ աշխատանք կատարելու կարիք կա հատկապես Տավուշի և Վայոց Ձորի մարզերում:

Ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի կատարված վերլուծությունից հետևում է, որ 2015 թ. պետական միասնական քննություններից բարձր միջին միավորներ ունեն առավելապես ավագ դպրոցների և կրթահամալիրների շրջանավարտները: Կրթության որակի բարձրացման ուղղությամբ աշխատանք կատարելու անհրաժեշտություն կա հատկապես միջնակարգ դպրոցներում: Նկատենք, որ ավագ դպրոցները և կրթահամալիրները հիմնականում տեղաբաշխված են քաղաքներում, միջնակարգ դպրոցները՝ գյուղերում:

Աղյուսակ 13-ից երևում է, որ Երևանի պետական բուհերում անվճար մեկ տեղի համար դիմած դիմորդների թվով առաջատար է ԵՊՀ-ն՝ «Մերվիս», «Հանրային կառավարում» և «Լեզվաբանություն և միջմշակութային հաղորդակցություն, անգլերեն» մասնագիտություններով: Վճարովի մասնագիտություններով առաջատար բուհը ՀՊՏՀ-ն է՝ «Աշխատանքի տնտեսագիտություն», «Տնտեսագիտության տեսություն», «Շուկայաբանություն» և «Հոդագույքային հարաբերություններ» մասնագիտություններով:

Օգտագործված աղբյուրներ

1. 2015 թ. պետական միասնական և կենտրոնացված քննությունների, ինչպես նաև բուհերի ընդունելության մրցույթի դիմորդների հաշվառման էլեկտրոնային տվյալների բազաներ
2. 2014 թ. պետական միասնական քննությունների արդյունքների վիճակագրական վերլուծություն
3. ՀՀ պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության կարգ

Ալինա ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԳԹԿ համակարգչային և վերլուծական աշխատանքների բաժնի
գլխավոր մասնագետ

Գոհար ՉԱԼՈՒՄՅԱՆ

ԳԹԿ համակարգչային և վերլուծական աշխատանքների բաժնի
առաջատար մասնագետ

2015 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին
ՀՀ հանրակրթական ուսումնական
հաստատությունների 11-րդ
դասարաններում «Հայոց լեզու» և
«Հանրահաշիվ» առարկաներից անցկացված
արտաքին ընթացիկ գնահատման
արդյունքների վերլուծություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արտաքին ընթացիկ գնահատման խնդիրներից մեկը սովորողների առաջադիմության գնահատումն ու դրա դինամիկայի նկարագրումն է: Այդ նպատակով 2015 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին արտաքին ընթացիկ գնահատումն անցկացվել է այն նույն ուսումնական հաստատությունների 11-րդ դասարանի աշակերտների շրջանում, որոնք 10-րդ դասարանում մասնակցել են 2014 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսների արտաքին ընթացիկ գնահատմանը: Երկու դեպքում էլ արտաքին ընթացիկ գնահատումը եղել է «Հայոց լեզու» և «Հանրահաշիվ» առարկաներից: Նպատակը եղել է հանրակրթական ավագ դպրոցի ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 11-րդ դասարանում նշված առարկաների արդյունքների ուսումնասիրությունը և առաջադիմության շարժի գնահատումը՝ նույն աշակերտների՝ 10-րդ դասարանում ունեցած արդյունքների համեմատությամբ:

Արտաքին ընթացիկ գնահատում անցկացնելու համար կազմվել են թեստեր 11-րդ դասարանի ընդհանուր հոսքի առարկայական ծրագրերին համապատասխան՝ 10-րդ դասարանում աշակերտների ուսումնասիրած թեմաների շրջանակներում: Ստեղծվել է տվյալների բազա՝ նույն առարկաների ներքին գնահատման արդյունքների ներառմամբ:

Արտաքին և ներքին գնահատման, ինչպես նաև բնույթով և սանդղակավորմամբ տարբեր բոլոր գնահատման համակարգերի արդյունքների համեմատությունն իրականացվել է այդ նպատակի համար նախատեսված ծրագրային մեթոդներով (Z-scale, IRT): Վերլուծությունն ամբողջությամբ կատարվել է IATA, Excel, ACCESS, SPSS ծրագրերի միջոցով:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. Արտաքին ընթացիկ գնահատման կազմակերպումը

2015 թ. հոկտեմբերի 20-ից դեկտեմբերի 10-ը ՀՀ 66 հանրակրթական ուսումնական հաստատությունների 11-րդ դասարաններում անցկացվել է արտաքին ընթացիկ գնահատում «Հայոց լեզու» և «Հանրահաշիվ» առարկաներից: Արտաքին ընթացիկ գնահատման ընտրանքը եղել են ՀՀ բոլոր մարզերում և Երևանում գտնվող ուսումնական հաստատությունների 11-րդ դասարանի աշակերտները, ընդհանուր հաշվով՝ 43 ավագ դպրոցների, 16 վարժարանների և 7 ոչ պետական դպրոցների 4172 աշակերտներ:

Գրավոր աշխատանքների տևողությունը եղել է 45 րոպե: Յուրաքանչյուր առարկայի գնահատման համար կիրառվել է թեստերի 8-ական տարբերակ:

Արտաքին ընթացիկ գնահատումը կազմակերպվել է Գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցիչների կողմից, որոնք վերահսկել և ուղղորդել են գնահատման ողջ գործընթացը, ապահովել աշակերտների ինքնուրույն աշխատանքը:

Աշակերտների գրավոր աշխատանքները, պատասխանների ձևաթղթերի հետ միասին, տեղափոխվել են ԳԹԿ, որտեղ ձևաթղթերը ենթարկվել են համակարգչային ստուգման:

Գնահատման արդյունքները տրվել են համապատասխան դպրոցներին՝ դասամատյաններում գրանցելու համար:

1.2. Թեստերի կառուցվածքը և սանդղակավորումը



Արտաքին ընթացիկ գնահատման «Հանրահաշիվ» առարկայի թեստերը բաղկացած են եղել 15-ական առաջադրանքներից, «Հայոց լեզու» առարկայի թեստերը՝ 14-ական: Ընտրովի և կարճ պատասխանով առաջադրանքները գնահատվել են 0 կամ 1 միավորով, իսկ ընդարձակ պատասխանով առաջադրանքները՝ 0, 1 և 2 միավորներով, բացառությամբ հանրահաշիվի 10-րդ առաջադրանքից, որը գնահատվել է մինչև 4 միավոր: Արդյունքում հայոց լեզվի թեստերի առավելագույն միավորը եղել է 25 միավոր, հանրահաշիվինը՝ 20: Գնահատման 10 միավորանոց համակարգին անցումը կատարվել է համաձայն ստորև բերված սանդղակների:

Հայոց լեզու		Հանրահաշիվ	
Միավորը	Գնահատականը	Միավորը	Գնահատականը
0-1	1	0-1	1
2-4	2	2-3	2
5-6	3	4-5	3
7-9	4	6-7	4
10-11	5	8-9	5
12-14	6	10-12	6
15-17	7	13-14	7
18-19	8	15-16	8
20-22	9	17-18	9
23-25	10	19-20	10

2. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ ԱՐՏԱՔԻՆ ԸՆԹԱՅԻՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2.1. Արտաքին ընթացիկ գնահատման ընդհանուր արդյունքներն ըստ առարկաների

Ստորև տրված են «Հայոց լեզու» և «Հանրահաշիվ» առարկաների միավորների բաշխման հիստոգրամները:



Բաշխման բնութագրիչներն են.

Առարկան	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Գնահատման ստանդարտ սխալը ¹	Ստանդարտ շեղումը (ցրվածությունը) ²	Հուսալիությունը ³
Հայոց լեզու	4168	6.58	0.030	1.92	0.82
Հանրահաշիվ	4114	4.1	0.029	1.86	0.81

«Հանրահաշիվ» առարկայի միավորների բաշխումը նկարագրող կորը մի փոքր շեղված է դեպի ցածր միավորները, միջին միավորը համեմատաբար փոքր է նորմալ բաշխման միջին միավորից, ինչը նշանակում է, որ թեստերը տվյալ ընտրանքի համար համեմատաբար բարդ են եղել: Իսկ «Հայոց լեզու» առարկայի միավորների բաշխումը նկարա-

¹Միավորների գնահատման ստանդարտ սխալը համարվում է նորմային մոտ, եթե գործակիցը չի գերազանցում սանդղակի միավոր քայլը:


²10 միավորանոց սանդղակում միավորների բաշխումը համարվում է լավ, եթե ստանդարտ շեղումը մեծ է 1,5-ից:

³ Հուսալիության գործակիցի 0.7-ից մինչև 0.8 ընդունված արժեքների դեպքում թեստի հուսալիությունը համարվում է միջին, 0.8-ից մինչև 0.9 արժեքների դեպքում՝ ընդունելի, 0.9-ից մեծ արժեքների դեպքում՝ մեծ:

գրող կորը մի փոքր շեղված է դեպի բարձր միավորները, միջին միավորը ավելի մեծ է, ինչը նշանակում է, որ թեստերը համեմատաբար հեշտ են եղել:

Երկու առարկաների դեպքում էլ գնահատման ստանդարտ սխալները և ստանդարտ շեղումները նորմալի սահմաններում են, հուսալիությունը՝ ընդունելի:



2.2. Միավորների բաշխման տոկոսներն ըստ առարկաների



2.3. Արտաքին և ներքին գնահատման համեմատությունը

Արտաքին և ներքին գնահատման միավորները միմյանց հետ համեմատելիս կարևոր է նկատի ունենալ այն հանգամանքը, որ ներքին գնահատման 10 միավորանոց համակարգը արհեստականորեն կրճատվել է, և ամենացածր գնահատականը դարձել է 4-ը (սանդղակի միջին միավորը՝ 7,0), մինչդեռ արտաքին գնահատման դեպքում կիրառվել են 1-ից 10 գնահատականները (սանդղակի միջին միավորը՝ 5,5): Թեև ներքին գնահատման ժամանակ կիրառվում են բազմաբնույթ գործիքներ՝ ի տարբերություն արտաքին գնահատման, սակայն ներքին գնահատման մեջ մեծ է սուբյեկտիվ գործոնը:

Ստորև բերված հիստոգրամներում տրված են «Հայոց լեզու» և «Հանրահաշիվ» առարկաների 2015 թ. ներքին և արտաքին գնահատումների միավորների բաշխման համադրությունները:



Հանրահաշիվից արտաքին ընթացիկ գնահատման ցածր միավորները համեմատաբար մեծ տոկոս են կազմում: Այս վերլուծության հետագա զլուխներում կներկայացվի, թե սովորողների ո՞ր խմբերի համար է հանրահաշիվը դժվար հաղթահարելի:

Առարկան	Գնահատումը	Միջին միավորը	Գնահատման ստանդարտ սխալը	Ստանդարտ շեղումը (ցրվածությունը)
Հայոց լեզու	Արտաքին	6.6	0.030	1.92
Հայոց լեզու	Ներքին	6.9	0.025	1.55
Հանրահաշիվ	Արտաքին	4.1	0.029	1.86
Հանրահաշիվ	Ներքին	6.5	0.026	1.66

3. ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՏԻՊԵՐԻ

3.1. Ընդհանուր արդյունքներն ըստ դպրոցների տիպերի


Աղյուսակում ներկայացված են վիճակագրական տվյալներ ըստ դպրոցների տիպերի:

Դպրոցների տիպը	Առարկան	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Գնահատման ստանդարտ սխալը	Ստանդարտ շեղումը	Լավագույն միավորը	Առավելագույն միավորը
Ավագ դպրոց	Հայոց լեզու	3060	6.42	0.035	1.93	1	10
	Հանրահաշիվ	3043	3.87	0.032	1.78	1	10
Վարժարան	Հայոց լեզու	1024	7.05	0.056	1.80	1	10
	Հանրահաշիվ	983	4.85	0.062	1.93	1	10
Ոչ պետական դպրոց	Հայոց լեզու	84	6.94	0.201	1.84	1	10
	Հանրահաշիվ	88	4.01	0.171	1.6	1	8

Ըստ դպրոցների տիպերի վերլուծությունից պարզվել է, որ ավագ դպրոցների միջին միավորները նշանակալի տարբեր են մյուս տիպի դպրոցներից, իսկ վարժարանների և ոչ պետական դպրոցների միջին միավորների տարբերությունը նշանակալի չի եղել:

3.2. Արտաքին ընթացիկ գնահատման միավորների խմբերի տոկոսները


Տարբեր տիպի դպրոցները միմյանցից տարբերվել են ոչ միայն միջին միավորներով, այլև միավորների բաշխմամբ: Ստորև ներկայացվում են միավորների խմբերի տոկոսներն ըստ առարկաների:




Մյուսաշարից երևում է, որ «Հայոց լեզու» առարկայից միավորների խմբերն, ըստ դպրոցների տիպերի, շատ չեն տարբերվում: Երկու առարկաներից էլ վարժարաններն ունեն համեմատաբար բարձր արդյունքներ:

3.3 Դպրոցների միջին միավորներն ըստ դպրոցների տիպերի

Հետևյալ դիագրամներում ներկայացված են 2015 թ. «Հայոց լեզու» և «Հանրահաշիվ» առարկաներից արտաքին ընթացիկ գնահատման մասնակից դպրոցների միջին միավորների դիրքերը ընդհանուր միջին միավորի նկատմամբ դասավորված աճման կարգով:



«Հայոց լեզու» առարկայի դեպքում, բացառությամբ մեկ վարժարանի միջին միավորից, մյուս վարժարանների և ոչ պետական դպրոցների միջին միավորները նշանակալի բարձր են ավագ դպրոցների միջին միավորներից: Ավագ դպրոցների 65 տոկոսի միջին միավորներն ընկած են ընդհանուր միջին միավորից ներքև:



«Հանրահաշիվ» առարկայից ավագ դպրոցների 70 տոկոսի միջին միավորներն ընկած են ընդհանուր միջին միավորից ներքև: Վարժարանների և ոչ պետական դպրոցների միջին միավորների միջև կան նշանակալի տարբերություններ: Չնայած ընդհանուր ցածր միջին միավորին (4.1), Երևանի Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հաստուկ դպրոցը և Վանաձորի մաթեմատիկական և բնագիտական առարկաների խորացված ուսուցմամբ հաստուկ դպրոցն ունեն բարձր միջին միավորներ (7.3), իսկ ոչ պետական դպրոցներից՝ «Ուսում» հանրակրթական դպրոցը և Կուպայանի մասնավոր վարժարանը (6-6.1): Ինչպես տեսնում ենք ստորև ներկայացված աղյուսակներից, բարձր առաջադիմություն ունեցող դպրոցների ցանկը նախորդ տարվա համեմատ գրեթե չի փոխվել:

Հայոց լեզվից բարձր առաջադիմություն ունեցող դպրոցների ցանկը⁴

Դպրոցը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Գնահատման ստանդարտ սխալը	Ստանդարտ շեղումը
«Հայ կրթություն» կրթական հիմնադրամ	16	8.69	0.30	1.20
Երևանի Ա. Շահինյանի անվ. ֆիզմաթ հատուկ դպրոց	107	7.89	0.12	1.29
«Ֆոտոն» վարժարան	98	7.84	0.14	1.35
«Քվանտ» վարժարան	86	7.80	0.14	1.34
Գյումրու «Ակադեմիական» վարժ.	72	7.79	0.18	1.54
Վանաձորի մաթեմ. և բնագ. առարկ. խոր. ուսուց. հատուկ դպր.	27	7.78	0.22	1.15
«Ուսում» հանրակրթական դպրոց	8	7.75	0.37	1.04
Իջևանի ավագ դպրոց	104	7.46	0.18	1.83

Հանրահաշվից բարձր առաջադիմություն ունեցող դպրոցների ցանկը

Դպրոցը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Գնահատման ստանդարտ սխալը	Ստանդարտ շեղումը
Վանաձորի մաթեմ. և բնագ. առարկ. խոր. ուսուց. հատուկ դպր.	27	7.30	0.21	1.10
Երևանի Ա. Շահինյանի անվ. ֆիզմաթ հատուկ դպրոց	74	7.28	0.14	1.18
«Ուսում» հանրակրթական դպրոց	8	6.13	0.35	0.99
«Քվանտ» վարժարան	80	5.15	0.15	1.35
Թիվ 148 ավագ դպրոց	98	5.15	0.21	2.09
«Ֆոտոն» վարժարան	97	5.14	0.21	2.10
Գյումրու «Ակադեմիական» վարժ.	74	5.04	0.24	2.04


3.4. 2014 թ. և 2015 թ. արտաքին ընթացիկ գնահատման արդյունքների համեմատությունը

Տարբեր տարիներին անցկացված գնահատման արդյունքները կամ տարբեր առարկաներից սովորողների արդյունքները արժանահավաստ ձևով համեմատելու համար անհրաժեշտություն է առաջացել թեստային

⁴Այն դպրոցները, որոնց միջին միավորը 10 և ավելի տոկոսով գերազանցում է ընդհանուր միջին միավորը:

(«հում») միավորներից անցում կատարել թեստերի մշակման ժամանակակից տեսության IRT միավորների, ինչը հնարավորություն է տալիս գնահատելու աշակերտների պատրաստվածությունը՝ անկախ թեստի բարդությունից:

Ստորև ներկայացվում են 2014 թ. և 2015 թ. անցկացված արտաքին ընթացիկ գնահատման արդյունքները (միջին միավորները, միջին միավորից ստանդարտ շեղումները դրական և բացասական ուղղություններով, առավելագույն և նվազագույն միավորները)՝ արտահայտված IRT միավորներով:




Միավորների տարբերության նշանակալիության վերլուծությունից պարզվել է, որ բոլոր տիպի դպրոցներում նշված երկու առարկաների 2014 թ. և 2015 թ. միջին միավորների տարբերությունները նշանակալի չեն, սակայն վարժարանների միջին միավորները՝ հատկապես հանրահաշվից, նշանակալի բարձր են մյուս տիպի դպրոցների միջին միավորներից:

Չնայած 2014 թ. համեմատությամբ 2015 թվականին նվազել են ավագ դպրոցների և վարժարանների աշակերտների առավելագույն միավորները՝ միջին միավորները մի քիչ բարձրացել են, որը ավելի ակնառու երևում է հաջորդ դիգրամում, որտեղ IRT միավորները ձևափոխվել են T միավորների: T միավորները IRT միավորներն են, որոնք գծային արտապատկերմամբ համապատասխանեցվել են 1-10 միավորների սանդղակին:

3.5. 2014 թ. և 2015 թ. աշակերտի պատրաստվածության և ներքին գնահատման համեմատությունը ըստ դպրոցների տիպերի

Աշակերտների պատրաստվածությունը նկարագրող միավորները հաշվարկելու համար նույնպես թեստային միավորներից անցում է կատարվել թեստերի մշակման ժամանակակից տեսության IRT միավորներին: IRT միավորները 0-ին մոտ թվեր են, հաճախ նաև բացասական թվեր, ուստի ընթերցողին ավելի հասկանալի լինելու համար IRT միավորները գծային արտապատկերմամբ ձևափոխվել են T միավորների, որոնք գտնվում են գնահատման 1-10 միավորների սանդղակում: Ստորև բերված դիագրամում ներկայացված է «Հայոց լեզու» և «Հանրահաշիվ» առարկաներից աշակերտների պատրաստվածությունը նկարագրող միջին միավորների համեմատությունը ներքին գնահատման միջին միավորների հետ 2014 թ. և 2015 թ.:




Ուշադրություն դարձնենք այն հանգամանքին, որ 2014 թ. ներքին գնահատման գնահատականները 9-րդ դասարանի ավարտական գնահատականներն են, որոնց միջին միավորները, ինչպես երևում է դիագրամից, բավական բարձր են: Մեկ տարի հետո ոչ պետական դպրոցներում և վարժարաններում միջին միավորներն իջել են 0,3-0,4 միավորներով, ավագ դպրոցներում՝ 0,6 միավորով: Իսկ աշակերտների պատրաստվածության մակարդակը բարձրացել է 0,9-1,2 միավորներով:

4. ԱՐՏԱՔԻՆ ԸՆԹԱՑԻԿ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԸՍՏ ՀՈՍՔԵՐԻ

4.1. Սովորողների բաշխումն ըստ հոսքերի


Դիագրամում ներկայացված է արտաքին ընթացիկ գնահատման մասնակիցների տոկոսներն ըստ հոսքերի:



Դիագրամից պարզ է դառնում, որ ամենամեծ տոկոսը կազմել են հումանիտար հոսքի, իսկ ամենափոքր տոկոսը՝ ֆիզմաթ հոսքի աշակերտները:

4.2. Արտաքին ընթացիկ գնահատման միավորների խմբերի տոկոսները

Ստորև ներկայացվում են տարբեր ուսումնական հոսքերի միավորների խմբերի տոկոսներն ըստ առարկաների:



Հայոց լեզվից ամենալավ արդյունքներն ունեն տնտեսագիտական հոսքի սովորողները. բարձր միավորների մեծ և ցածր միավորների փոքր տոկոս:

Հանրահաշվից ամենալավ արդյունքները գրանցվել են ֆիզմաթ և տնտեսագիտական հոսքերի սովորողների շրջանում: Հումանիտար հոսքի սովորողների մեծ տոկոսի համար դժվար հաղթահարելի է եղել դրական միավորների շեմը՝ չնայած այն բանին, որ թեստերը կազմվել են ընդհանուր հոսքի առարկայական ծրագրերին համապատասխան:


Դիագրամում ավելի հստակ է երևում, որ հանրահաշվի ընդհանուր արդյունքում 1-3 գնահատականների մեծ տոկոսը բացատրվում է հումանիտար հոսքի աշակերտների ցածր գնահատականների մեծ տոկոսով և այն հանգամանքով, որ նշված հոսքում սովորողները կազմում են արտաքին ընթացիկ գնահատման մասնակիցների 42.2 տոկոսը

4.3. Աշակերտների պատրաստվածությունն ըստ դպրոցների տիպերի և հոսքերի

Ստորև ներկայացվում է աշակերտների պատրաստվածությունը «Հայոց լեզու» և «Հանրահաշիվ» առարկաներից՝ ըստ 2014 թ. և 2015 թ. անցկացված արտաքին ընթացիկ գնահատման արդյունքների՝ ըստ դպրոցների տիպերի և հոսքերի:

Աշակերտների պատրաստվածությունը նկարագրող միավորները համեմատելու համար նույնպես թեստային միավորներից անցում է կատարվել թեստերի մշակման ժամանակակից տեսության IRT միավորներին:

Աշակերտների պատրաստվածությունը 2014 թ. և 2015 թ.



Գծապատկերից երևում է, որ երկու առարկաներից էլ նկատվում է երեխաների պատրաստվածության համեմատական աճ: «Հայոց լեզու» առարկայի դեպքում աշակերտների պատրաստվածության միջին միավորը բարձրացել է 0.6-1.2 միավորով, իսկ «Հանրահաշիվ» առարկայի դեպքում՝ 1.1-1.6 միավորով:

Բնագիտական և հումանիտար հոսքերում պահպանվել է «Հայոց լեզու» առարկայի աշակերտների պատրաստվածության առաջանցիկ հակվածությունը: Նույն հակվածությունը դրսևորվել է նաև ոչ պետական դպրոցների բոլոր հոսքերում: Ոչ պետական դպրոցներում «Հայոց լեզու» առարկայից միջին միավորի աճը եղել է 2.2 (մասնակցել է 84 աշակերտ):

Ինչպես 2014 թվականին, այնպես էլ 2015 թվականին գրանցվել է վարժարանների ընդհանուր հոսքում «Հանրահաշիվ» առարկայից աշակերտների ավելի բարձր պատրաստվածություն, քան «Հայոց լեզու» առարկայից: Տրամաբանական է նաև, որ տնտեսագիտական և ֆիզմաթ հոսքերում «Հանրահաշիվ» առարկայից աշակերտի պատրաստվածությունը բարձրացել է:

4.4 Վիճակագրական տվյալներ ըստ հոսքերի և սեռերի

Հետևյալ աղյուսակում ներկայացված են ըստ սեռերի և հոսքերի մասնակիցների թվերը, միջին միավորները և միջին միավորների ստանդարտ շեղումներն ամեն առարկայից


Հոսքը	Սեռը	Հայոց լեզու			Հանրահաշիվ		
		Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Ստանդարտ շեղումը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Ստանդարտ շեղումը
Բնագիտական	Աղջիկ	413	6.90	1.60	411	4.63	1.61
	Տղա	430	6.03	1.81	428	4.32	1.75
Հումանիտար	Աղջիկ	1180	7.01	1.75	1174	3.34	1.36
	Տղա	565	5.66	2.06	565	2.85	1.32
Ընդհանուր	Աղջիկ	182	6.68	1.86	167	4.24	2.07
	Տղա	202	6.03	2.16	177	4.63	2.35
Տնտեսագիտական	Աղջիկ	414	7.62	1.50	413	5.59	1.74
	Տղա	495	6.41	1.80	490	4.72	1.69
Ֆիզմաթ.	Աղջիկ	87	7.26	1.57	85	6.11	1.99
	Տղա	170	6.08	1.88	172	5.08	1.85

Երկու առարկաներից գրեթե բոլոր հոսքերում աղջիկների միջին միավորները բարձր են տղաների միջին միավորներից, միայն «Հանրահաշիվ» առարկայի ընդհանուր հոսքում է տղաների միջին միավորը 0.4 միավորով բարձր աղջիկների միջին միավորից:

5. ԱՐՏԱՔԻՆ ԸՆԹԱՑԻԿ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԸՍՏ ՄԱՐԶԵՐԻ

5.1. Աշակերտների պատրաստվածությունը ըստ մարզերի


Ստորև բերված գծապատկերում ներկայացված է աշակերտների պատրաստվածությունը հայոց լեզվից և հանրահաշվից՝ ըստ մարզերի:



Ըստ մարզերի վերլուծությունից պարզ է դարձել, որ Շիրակի մարզի և Երևանի արտաքին ընթացիկ գնահատման մասնակիցների հայոց լեզվի և հանրահաշվի միջին միավորները նշանակալի բարձր են Արարատի և Վայոց Ձորի մարզերի միջին միավորներից, ինչպես նաև այն, որ Գեղարքունիքի մարզի հանրահաշվի միջին միավորն է նշանակալի ցածր: Մյուս մարզերի միջին միավորները միմյանցից նշանակալիորեն չեն տարբերվում:

6. ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՏԻՊԵՐԻ

Արտաքին ընթացիկ գնահատմանը մասնակցած 66 դպրոցներից 31-ը եղել են խոշոր քաղաքների (մասնակիցների 48 %-ը), 16-ը՝ միջին քաղաքների (մասնակիցների 29 %-ը), 16-ը՝ փոքր քաղաքների (մասնակիցների 19 %-ը), 2-ը՝ (մասնակիցների 2 %-ը) գյուղերի (Ոսկետափի թիվ 2 ավագ դպրոց և Գառնիի թիվ 2 ավագ դպրոց) և 1-ը (մասնակիցների 2 %-ը) բարձրլեռնային գյուղի (Վարդենիկի ավագ դպրոց) դպրոցներ:



Ըստ բնակավայրերի տիպերի վերլուծությունից պարզվել է, որ հայոց լեզվից խոշոր և միջին քաղաքների աշակերտների պատրաստվածության մակարդակների միջև նշանակալի տարբերություն չկա, սակայն նրանց միջին միավորները նշանակալի բարձր են մյուս տիպի բնակավայրերի աշակերտների պատրաստվածությունից: Հանրահաշիվից խոշոր քաղաքների աշակերտների պատրաստվածության մակարդակը նշանակալի բարձր է, սակայն այդ տարբերությունը նշանակալի չէ գյուղերի աշակերտների պատրաստվածությունից:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության են ենթարկվել 2015 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին ՀՀ 66 հանրակրթական ուսումնական հաստատությունների 11-րդ դասարաններում անցկացված արտաքին ընթացիկ գնահատման արդյունքները «Հայոց լեզու» և «Հանրահաշիվ» առարկաներից: Պարզվել է ոչ միայն սովորողների ընդհանուր, այլ նաև տարբեր խմբերի (հոսքերի, դպրոցների տիպերի, մարզերի) առաջադիմությունը, գնահատվել է աշակերտների պատրաստվածության շարժը՝ 2014 թ. արտաքին ընթացիկ գնահատման արդյունքների համեմատությամբ, ներքին գնահատումների (կիսամյակային գնահատականների) համեմատությամբ, ինչպես նաև բացահայտվել են գործոններ, որոնք որոշակի ազդեցություն են ունեցել սովորողների հավաքած միավորների վրա: Այլ կերպ ասած՝ արտաքին ընթացիկ գնահատումը ծառայել է իր նպատակին, իսկ արդյունքների հավաստիության մասին վկայում են թեստերի միջին բարդությունը, հուսալիությունը և մյուս բնութագրիչները, որոնց հիման վրա կարելի է ասել՝ միավորների բաշխումը մոտ է թեստաբանությամբ սահմանված նորմալ բաշխմանը:

➤ Արտաքին ընթացիկ գնահատման ընդհանուր արդյունքները

«Հանրահաշիվ» առարկայի թեստերը տվյալ ընտրանքի համար համեմատաբար բարդ են եղել, «Հայոց լեզու» առարկայինը՝ հեշտ: Թեստերը կազմվել են 10-րդ դասարանի ծրագրային նյութերի հիման վրա՝ հայոց լեզվից՝ «Ուղղագրություն» և «Բառագիտություն» թեմաներից, հանրահաշիվից՝ «Եռանկյունաչափության տարրեր» թեմայից: «Հայոց լեզու» առարկայի թեստերի համեմատաբար դյուրամատչելի լինելը կարելի է պայմանավորել առաջադրանքներում ընդգրկված թեմատիկ նյութերով: Իսկ «Հանրահաշիվ» առարկայի թեստերը տվյալ ընտրանքի համար համեմատաբար բարդ են եղել, քանի որ այս բաժնում հիմնականում ընդգրկված են շատ բանաձևեր, որոնք դժվար է հիշել, սակայն հնարավոր է տրամաբանորեն դուրս բերել:

➤ Արտաքին և ներքին գնահատման արդյունքներն ըստ դպրոցների տիպերի

Նկատի ունենալով ներքին և արտաքին գնահատումների միջև եղած սանդղակային և մյուս տարբերությունները՝ 2015 թ. ներքին և արտաքին գնահատման միջին միավորների տարբերությունները կարելի է համարել նորմայի սահմաններում: 2015 թ. և 2014 թ. աշակերտների պատրաստվածության և ներքին գնահատման համեմատությունը ըստ դպրոցների ցույց տվեց, որ 2015 թվականին ներքին գնահատման միջին միավորները բոլոր տիպի դպրոցներում իջել են, իսկ աշակերտների

պատրաստվածության մակարդակը բարձրացել է, որի արդյունքում արտաքին և ներքին գնահատականների միջին միավորների տարբերությունները փոքրացել են:

➤ **Արդյունքներն ըստ դպրոցների տիպերի**

Երկու առարկաներից էլ վարժարաններն ունեն համեմատաբար բարձր արդյունքներ, որոնք նշանակալի տարբերվում են ավագ դպրոցների արդյունքներից: Բոլոր տիպի դպրոցներում նշված երկու առարկաներից աշակերտների պատրաստվածության մակարդակը բարձրացել է 0,9-1,2 միավորով, սակայն միջին միավորների տարբերությունները նշանակալի չեն:

➤ **Արդյունքներն ըստ հոսքերի**

«Հայոց լեզու» առարկայից հոսքերի միջին միավորներն էապես չեն տարբերվում, համեմատաբար բարձր է տնտեսագիտական հոսքի առաջադիմությունը, այն գերազանցում է անգամ հումանիտար հոսքի առաջադիմությանը: Հանրահաշվից ամենալավ արդյունքները գրանցվել են ֆիզմաթ և տնտեսագիտական հոսքերի սովորողների շրջանում: Արտաքին ընթացիկ գնահատման մասնակիցների 42.2%-ը սովորում է հումանիտար հոսքում, նրանց համար դժվար հաղթահարելի են եղել հանրահաշվի ընդհանուր հոսքի ծրագրով կազմված թեստերը, ինչը իր ազդեցությունն է թողել ընդհանուր արդյունքների վրա:

➤ **Վերլուծություն ըստ մարզերի**

Ըստ մարզերի վերլուծությունից պարզ է դարձել, որ Շիրակի մարզի և Երևանի արտաքին ընթացիկ գնահատման մասնակիցների հայոց լեզվի և հանրահաշվի միջին միավորները նշանակալի բարձր են Արարատի և Վայոց Ձորի մարզերի մասնակիցների միջին միավորներից, ինչպես նաև այն, որ Գեղարքունիքի մարզի հանրահաշվի միջին միավորն է նշանակալի ցածր: Մյուս մարզերի միջին միավորները միմյանցից նշանակալիորեն չեն տարբերվում:

➤ **Արդյունքներն ըստ բնակավայրերի տիպերի**

Ըստ բնակավայրերի տիպերի վերլուծությունից պարզվել է, որ հայոց լեզվից խոշոր և միջին քաղաքների աշակերտների պատրաստվածության մակարդակների միջև նշանակալի տարբերություն չկա, սակայն նրանց պատրաստվածությունը նշանակալի բարձր է մյուս տիպի բնակավայրերի աշակերտների պատրաստվածությունից: Հանրահաշվից խոշոր քաղաքների աշակերտների պատրաստվածության մակարդակը նշանակալիորեն բարձր է, սակայն էապես չի տարբերվում գյուղերի աշակերտների պատրաստվածությունից:

Կարինե ՀՈՎՍԵՓՅԱՆ

ԳԹԿ կազմակերպական բաժնի առաջին կարգի մասնագետ

Գնահատման ձևերն ու տեսակները: Գնահատումը հանրակրթական դպրոցի տարրական դասարաններում

Հայաստանի Հանրապետությունում հանրակրթության բովանդակության և ուսումնական գործընթացի կազմակերպման բարեփոխումը պայմանավորված էր մի շարք հիմնախնդիրների առկայությամբ: Դրանցից մեկն այն էր, որ գործող չափորոշիչները, առարկայական ծրագրերն ու դասագրքերը և, հատկապես, գնահատման համակարգը ժամանակակից կրթական պահանջներին մասամբ էին համապատասխանում: Այս հիմնախնդիրը լուծելու համար մի շարք փոփոխություններ կատարվեցին կրթական չափորոշիչները, առարկայական ծրագրերն ու դասագրքերը, գնահատման համակարգը ժամանակակից կրթական պահանջներին համապատասխանեցնելու նպատակով: Անդրադառնալով գնահատման վերաբերյալ մի քանի ընդհանուր հարցերի՝ ներկայացնում ենք գնահատման համակարգում կատարված փոփոխություններից մի քանիսը, ինչպես նաև մեկ նմուշ տարրական դասարաններում մեր կողմից կիրառված թեստերից:

Ինչ է գնահատումը

Գնահատումը ուսուցման գործընթացի որակի և ուսուցման արդյունքների բացահայտման միջոց է, ինչն էլ ապահովում է առարկայական չափորոշիչների (սովորողին ներկայացվող ցանկալի և պարտադիր նվազագույն պահանջների երեք մակարդակները՝ նվազագույն, միջին, առավելագույն) և ծրագրերի կատարումը, նպաստում է սովորողների ինքնահաստատմանն ու ինքնազարգացմանը: Գնահատման միջոցով պարզվում է գիտելիքների, կարողությունների և հմտությունների մակարդակը: Դրա հիման վրա իրականացվում է ուսումնական գործընթացի կատարելագործումը և ուսման որակի վերահսկումը: Հանրակրթության ոլորտում գոյություն ունի ներքին և արտաքին գնահատում:

Ներքին գնահատումը կիրառվում է դասի ընթացքում՝ հարցման, ուսուցողական, ստուգողական և այլ առաջադրանքների ստուգման միջոցով, դասընկերների և ուսուցիչների հետ առօրյա շփումների, ուսումնական գործունեության ամփոփման ընթացքում: Այս ձևով գնահատվում են ոչ միայն յուրաքանչյուր սովորողի (դասարանի) ձեռք բերած գիտելիքներն ու կարողությունները, այլև նրա (դասարանի) զարգացման ընթացքը:

Ներքին գնահատումը կատարվում է դասի ընթացքում՝

- հարցման,
- ուսուցողական աշխատանքների ստուգման,
- ստուգողական աշխատանքների ստուգման,
- ամփոփման ընթացքում:

Արտաքին գնահատումը իրականացվում է դպրոցից դուրս գործող համապատասխան կազմակերպությունների կողմից: Արտաքին ամփոփիչ գնահատման դրական արդյունքները կարող են հիմք դառնալ շրջանավարտին կրթական ավարտական փաստաթուղթ տալու, որակավորում շնորհելու կամ մասնագիտական ուսումնական հաստատության ընդունելության մրցույթին մասնակցելու համար:

Արտաքին գնահատմամբ բացահայտվում են ուսումնական գործընթացի ամբողջական արդյունքները, ինչպես նաև՝ որոշակի առարկայի յուրացման մակարդակը առանձին դպրոցում, մարզում կամ հանրապետության ողջ տարածքում (ազգային գնահատում): Արտաքին գնահատման առանձին տեսակ է միջազգային գնահատումը, որն իրականացվում է միջազգային ստուգատեսներին Հայաստանի Հանրապետության մասնակցության դեպքերում:

Արտաքին գնահատումը կատարվում է՝

1. նախարարության կամ տեսչության կողմից իրականացվող ստուգման,
2. ավարտական ամփոփիչ քննության,
3. ավարտական և բուհի ընդունելության միասնական քննության,
4. միջազգային կազմակերպությունների կողմից կատարվող ստուգման (միջազգային չափանիշներին համապատասխան ստուգում (TIMS) ընթացքում:

Ընթացիկ գնահատում

Ներքին գնահատման միջոցներից մեկը սովորողների ընթացիկ գնահատումն է: Գնահատման նախկին համակարգում առկա էին մի շարք հիմնախնդիրներ, որոնց լուծումից էր նաև որոշակիորեն կախված իրականացվող փոփոխությունների հաջողությունը: Այդ համակարգը առավելապես բացահայտում էր սովորողների մտապահման աստիճանը և չէր նպաստում նրանց ճանաչողական-կիրառական կարողությունների ու հմտությունների զարգացմանը: Այն մասամբ էր արտահայտում ուսուցման իրական ընթացքն ու պատկերը, գնահատման հինգ միավորային սանդղակը չէր ապահովում լիարժեք տարբերակված գնահատում, ինչպես նաև հնարավորություն չէր տալիս բացահայտելու և հաշվառելու սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ամբողջ բազմազանությունը: Հետևաբար, սովորողի ուսումնառության իրական պատկերը ստանալու նպատակով անհրաժեշտ էր, կիրառել և համադրել ստուգման տարբեր ձևեր ու տեսակներ:

Ընթացիկ գնահատման ձևերի ու տեսակների կիրառումը, տասը միավորային սանդղակի ներդրումը նպաստում են ուսուցման գործընթացի բարելավմանը, սովորող-ուսուցիչ-ծնող-դպրոց փոխհամագործակցության ապահովմանը: Գնահատումը տեղեկատվություն ստանալու, հավաքելու, կուտակելու, վերլուծելու և դրա հիման վրա հանրակրթության իրականացման բովանդակային և կազմակերպչական աշխատանքների արդյունքներն ի մի բերելու և վերահսկելու գործընթաց է: Գնահատման հիմնական նպատակը սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների յուրացման ու տիրապետման աստիճանի, նրանց անձնային որակների ստուգումն է և ուսման որակի վերահսկումը: Ընթացիկ գնահատումը անընդհատ, շարունակական գործընթաց է՝ ուղղված սովորողի կողմից ուսումնական (ծրագրային) նյութի առանձին միավորի կամ դրա մի որոշակի մասի յուրացման աստիճանի բացահայտմանը: Ընթացիկ գնահատումը շարունակական տեղեկատվություն է ապահովում ուսուցման ընթացքն ուղղորդելու, դասավանդման և ուսումնառության որակը բարձրացնելու համար: Այն կիրառվում է ուսումնական ողջ գործընթացում՝ բացառությամբ քննաշրջանի, երբ իրականացվում է միայն վերջնական ամփոփիչ գնահատում:

1. Ընթացիկ գնահատման ձևերն ու ստուգման տեսակները

Սովորողների առաջադիմության ընթացիկ գնահատման համակարգը բաղկացած է երկու իրար փոխլրացնող ձևերից՝

ա) ուսուցանող (ձևավորող) գնահատում, որն իրականացվում է առանց գնահատականը գրանցելու և սովորաբար ուղեկցվում է ուսումնական առաջադրանքի կատարման կամ նյութի յուրացման վերաբերյալ ուսուցչի կողմից սովորողին արված առաջարկություններով, դիտորդություններով և մեկնաբանություններով:

բ) ամփոփիչ միավորային գնահատում, երբ ստուգվում է սովորողի կողմից ամբողջական թեմայի յուրացման աստիճանը, և որն իրականացվում է սովորողի գնահատականը գրանցելու-հաշվառելու միջոցով:

Ուսուցանող գնահատումը կատարվում է ուսումնական նյութի յուրացման ընթացքում, այն հետապնդում է սովորողի առաջադիմության բարձրացման և կրթության որակի բարելավման նպատակ: Ամփոփիչ միավորային գնահատումն իրականացվում է տվյալ ուսումնական նյութը ավարտելուց հետո և ունի վերահսկող դեր:

Գնահատման այս երկու ձևերի նպատակային և գործառության ինքնազննությունը ապահովելու համար գործածության են երաշխավորվում ստուգման ու հայտորոշման հետևյալ տեսակները. բանավոր հարցում, թեմատիկ գրավոր աշխատանք, խմբային և համագործակցային աշխատանքներ, քննարկումներ, բանավեճեր և կիսամյակային ամփոփիչ աշխատանք: Այդ աշխատանքներում կիրառվում են ինքնագնահատումն ու փոխադարձ գնահատումը:

Ստուգման յուրաքանչյուր տեսակ իր հերթին ներկայացվում է տարբեր բնույթի և տիպի առաջադրանքներով, որոնք բխում են կրթակարգից: Դրանց մի մասը առավել կիրառելի է ուսուցանող գնահատման համար, իսկ որոշ տեսակներ՝ սովորողների ընթացիկ առաջադիմության արդյունքները պարզելու համար:

Առաջադրանքների կիրառումը իրականացվում է երեք եղանակով՝ բանավոր, գրավոր և գործնական: Ստուգման միջոցները պետք է լինեն հավաստի և հուսալի: Ընթացիկ գնահատման ձևերի ու տեսակների ամբողջական կիրառման համար որպես ժամանակային-հաշվարկային միավոր է նախատեսվում ուսումնական տարվա մեկ կիսամյակը: Հանրակրթական դպրոցի առաջին դասարանում ընթացիկ և ամփոփիչ գնահատականներ չեն նշանակվում: Ընթացիկ գնահատումը կատարվում է յուրաքանչյուր սովորողի բնութագրման միջոցով: Տարեկան վերջնական ամփոփիչ գնահատման նպատակով, պետական

չափորոշչով սահմանված կարգով, ըստ հաստատված ձևի, յուրաքանչյուր սովորողի համար կազմվում է աճի բնութագիր:


2. Ուսուցանող (ձևավորող) գնահատում

Կրթական բերափոխումների ներկա փուլում առավել արդիական է դառնում գնահատման օգտագործումը ոչ միայն որպես ուսուցման արդյունքների ստուգման և վերահսկման միջոց, այլ նաև այն ուսումնական գործընթացի ձևավորման անբաժանելի մաս դարձնելը:

Ուսուցանող (ձևավորող) գնահատումն ամենօրյա դասարանական գնահատում չէ, քանի որ ձևավորող գնահատումը միտում ունի ուսումնառության վրա յուրահատուկ դրական ազդեցություն ունենալու, մինչդեռ ամենօրյա դասարանական գնահատումը կարող է ն՝ ազդել սովորողի վարքի փոփոխության վրա, ն՝ նպաստել ուսուցանվող նյութի ավելի լավ ընկալմանը: Մակայն այս տարբերակումը շատ դժվար է գործնականում կիրառելը, ուստի կարող ենք նկատել, որ ամենօրյա դասարանական գնահատումը երբեմն ձևավորող գնահատման դեր է խաղում՝ հանդես գալով որպես ուսուցման նոր տեսակների, հին նյութի նկատմամբ նոր մոտեցումների ձևավորման գործիք, որն ամեն անգամ հիմնվում է սովորողների հետ հետադարձ կապի վրա:

Ուսուցանող (ձևավորող) գնահատումը սովորողի ուսումնական առաջընթացն ապահովելու նպատակով, հետադարձ կապի կիրառմամբ, ուսուցման ընթացքում տեղեկությունների հավաքման և արժևորման միջոցով կատարվող աշխատանքներն են, որոնցով բարելավվում են կրթության որակն ու կրթական չափորոշիչները:

Ուսուցանող գնահատման մեկ շրջափուլը կարելի է ներկայացնել այսպես.



Ուսուցանող գնահատման նպատակն է ճշգրտել դասավանդվող նյութի բովանդակությունը, ծավալը, խորությունը, դասավանդման նպատակահարմար մեթոդները, շարունակաբար բացահայտել ուսումնական նյութի յուրացման տարապատկերը և սովորողին հասկանալի դարձնել տվյալ նյութը սովորելու անհրաժեշտությունը:

Ուսուցանող գնահատումը ուսուցչին հնարավորություն է տալիս պարզելու ուսումնական գործընթացում յուրաքանչյուր սովորողի, խմբի, դասարանի ձեռքբերումները, դժվարությունները, խոչընդոտները, բացթողումները և իրավիճակի վերլուծությունից հետո մշակելու գործողությունների հետագա քայլերը՝ յուրաքանչյուր սովորողի, խմբի կամ դասարանի ընթացիկ առաջադիմությունը բարելավելու համար: Գնահատման այս ձևում կարևորվում է հետադարձ կապի առկայությունը:

Հետադարձ կապը մեկնաբանությունների, վերլուծությունների միջոցով պետք է հանգեցնի դասավանդման ընթացքում առաջացած թերությունների շտկման գործողությունների թե՛ սովորողի և թե՛ ուսուցչի համար: Այդ դեպքում սովորողը համեմատվում է հիմնականում, կարելի է ասել, ինքն իր հետ՝ պարզելով իր առաջընթացը:

Ուսուցանող գնահատման արդյունքների հիման վրա հետադարձ կապով ուսուցիչը գնահատում է պետական չափորոշիչների, կրթակարգից բխող բովանդակային բաղադրիչների, ուսումնական ծրագրերի, դասագրքերի և ուսուցման մեթոդների արդյունավետությունը, կատարում իրավիճակից բխող փոփոխություններ:

Սովորողներն ուսուցչի օգնությամբ, ինքնագնահատմամբ ու փոխադարձ գնահատումների միջոցով պարզում են տվյալ ուսումնական նյութի յուրացման ընթացքի արդյունքները և իրենցից յուրաքանչյուրի առաջադիմության իրական պատկերը:

Սովորողի ուսումնական գործունեության ընթացքն ու արդյունքները գնահատելու (արժևորելու) համար իրականացվող ուսուցանող գնահատման ժամանակ օգտագործվում են վերջինիս առաջընթացը բնութագրող որակումներ, վերլուծություններ և մեկնաբանություններ: Ուսուցանող գնահատման ժամանակ միավորային, տառային և որևէ այլ պայմանանշաններով գնահատում չի կատարվում, այլ սովորողի տվյալ պահին ունեցած ձեռքբերումները համեմատվում են պետական չափորոշիչների և կրթակարգի պահանջների հետ: Ուսուցանող գնահատման նպատակով գործածության են երաշխավորվում հայտորոշման (ախտորոշիչ, դիագնոստիկ գնահատում) աշխատանքների հետևյալ տեսակները.

- բանավոր հարցում,
- գրավոր աշխատանք տանը և դպրոցում,
- տնային,
- ինքնուրույն կատարման ուսումնական առաջադրանք,

- բաց հարցերով քննարկում,
- ինքնագնահատում և փոխադարձ գնահատում,
- խմբային,
- համագործակցային,
- գործնական:

Ուսուցանող գնահատման տարբեր տեսակներ կիրառելիս օգտագործվում են նաև կարճ ժամանակի համար նախատեսվող առաջադրանքներ: Դրանց նպատակն է պարզել ուսումնական ծրագրի ենթաթեմաների, նոր գաղափարների և հասկացությունների յուրացման աստիճանը: Կարճ ժամանակի համար նախատեսվող առաջադրանքները կարող են լինել տարբեր տիպերի և բնույթի, որը բխում է տվյալ ուսումնական առարկայի առանձնահատկություններից, թեմայից և ուսուցման նպատակից: Նման առաջադրանքներից են՝ թելադրությունը, շարադրությունը, փոխադրությունը, կարճ ժամանակի համար նախատեսվող հարցարանի կամ թեստի միջոցով ուսումնասիրությունը, գործնական աշխատանքը, խմբային և համագործակցային աշխատանքները: Գնահատվում են սովորողի սոցիալական հմտությունները:

3. Պարտադիր գրանցման ենթակա միավորային (թվանշանային) գնահատում

Սովորողների ուսումնառության ընթացիկ արդյունքները միավորային գնահատմամբ ամրագրելու համար երաշխավորվում են ստուգման հետևյալ տեսակները՝

1. բանավոր հարցում,
2. գործնական աշխատանք,
3. թեմատիկ գրավոր աշխատանք,
4. կիսամյակային ամփոփիչ աշխատանք:

Ստուգման յուրաքանչյուր տեսակ իր կիրառման ընդհանուր ծավալով պետք է ընդգրկի տվյալ առարկայի գնահատման ենթակա կիսամյակային ամբողջ ուսումնական ծրագրային նյութը: Ստուգման յուրաքանչյուր տեսակի կիրառման հաճախությունը մեկ կիսամյակում որոշելու նպատակով ծրագրային նյութը բաժանվում է մասերի, որոնք կոչվում են թեմաներ: Թեմաների քանակը պետք է հավասար լինի տվյալ ուսումնական առարկայի շաբաթական ժամաքանակին:

Ամփոփիչ գնահատման նպատակով կարելի է օգտագործել կարճ ժամանակի համար նախատեսվող աշխատանքները՝ որպես բանավոր հարցումներ:

Կիսամյակային ամփոփիչ աշխատանքից բացակայած սովորողի համար նշանակվում է այն հանձնելու նոր ժամկետ:

4. Ամփոփիչ գնահատման տեսակներն ու դրանց նշանակությունը

Ընթացիկ առաջադիմության արդյունքները բացահայտելու նպատակով գործածության երաշխավորվող չորս տեսակներից յուրաքանչյուրը հնարավորություն է տալիս ստուգելու սովորողի, խմբի, դասարանի և դպրոցի կողմից հանրակրթական պետական չափորոշիչների, ուսումնական ծրագրերի պահանջների կատարման ընթացքը, յուրաքանչյուր սովորողի ձեռք բերած գիտելիքների, կարողությունների և հմտությունների փաստացի վիճակը, նրա արժեքային որակները:

Բանավոր հարցում: Ուսումնական գործընթացում կիրառվում է բանավոր հարցման երկու ձև՝ համառոտ և ծավալուն:

Բանավոր հարցման միջոցով պարզվում են սովորողի ձեռքբերումները հետևյալ ուղղություններով.

- բանավոր խոսք,
- վերարտադրություն,
- հաղորդակցություն,
- համագործակցություն,
- լեզվամտածողություն,
- գիտելիքի յուրացում,
- տրամաբանություն,
- ստեղծագործական մտածողություն:

Ստուգման այս տեսակի հիմնական առանձնահատկություններն են՝

- տևողությունը՝ համառոտ հարցում՝ մինչև 2 րոպե, ծավալուն հարցում՝ 2 րոպեից ավելի,
- հաճախությունը մեկ կիսամյակում՝ տվյալ առարկայի շաբաթական ժամաքանակի կրկնակիից ոչ պակաս:

Գործնական աշխատանք: Ուսումնական ծրագրով նախատեսված են տարբեր տիպի և բնույթի գործնական աշխատանքներ, որոնք պետք է գնահատվեն: Այդ աշխատանքները յուրաքանչյուր ուսումնական առարկայի համար տարբեր են:

Թեմատիկ գրավոր աշխատանք: Յուրաքանչյուր թեմայից սովորողների ձեռքբերումները բացահայտելու համար նախատեսվում է ծավալուն գրավոր աշխատանք: Այն պետք է կազմված լինի տվյալ թեմայից սովորողներին ներկայացվող առարկայական չափորոշչային պահանջների յուրացման աստիճանը ստուգող առաջադրանքներից:

Ստուգման այս տեսակի հիմնական առանձնահատկություններն են՝

- տևողությունը՝ մինչև 45 րոպե,
- հաճախությունը՝ թեմաների թվից ոչ պակաս քանակով,
- առաջադրանքների տիպերը՝ շարադրություն, թելադրություն, փոխադրություն, խնդիրներ, վարժություններ, ընտրովի կամ կարճ պատասխան պահանջող առաջադրանքներ, ծավալուն պատասխանով առաջադրանքներ,
- առաջադրանքների բնույթը՝ փաստերի իմացություն, գիտելիքի կիրառում, տրամաբանական եզրահանգում, վերլուծություն, համեմատություն, համադրում, ճանաչողական, ինքնուրույն և ստեղծագործական աշխատանք:

Կիսամյակային ամփոփիչ աշխատանք: Կիրառվում է ուսումնական կիսամյակի վերջում, ամբողջ ծրագրային նյութը ուսումնասիրելուց հետո: Կարող է կիրառվել բանավոր կամ գրավոր եղանակը:

Ստուգման այս տեսակի հիմնական առանձնահատկություններն են՝

- տևողությունը՝ 45 կամ 90 րոպե՝ կախված դպրոցի աստիճանից և առարկայի ժամաքանակից,
- հաճախությունը՝ 1,
- առաջադրանքների տիպերը՝ շարադրություն, թելադրություն, փոխադրություն, խնդիրներ, վարժություններ, բաց և փակ պատասխանով առաջադրանքներ՝ պատասխանի ընտրությամբ, կարճ պատասխանով, ընդարձակ պատասխանով, հարցարաններ, ինքնուրույն-հետազոտական և գործնական աշխատանք,
- առաջադրանքների բնույթը՝ փաստերի իմացություն, գիտելիքի կիրառում, տրամաբանական եզրահանգում, վերլուծություն, համեմատություն, համադրում, ճանաչողական, ինքնուրույն և ստեղծագործական աշխատանք,
- տրվում են գնահատման չափանիշները:

Այս աշխատանքի արդյունքի հավաստիության համար կիրառվում է սյունակաշար (ռուբրիկ): Ամփոփիչ գնահատման յուրաքանչյուր տեսակի

կիսամյակային գնահատականը որոշում է ուսուցիչը, և այն չպետք է ցածր լինի մեկ կիսամյակում ստացած տվյալ տեսակի թվանշանների միջին թվաբանականից: Ամփոփիչ գնահատականները գրանցվում են տասը միավորային սանդղակով: Թույլատրվում է կիրառել նաև գնահատման միավորային այլ սանդղակներ, որոնք պետք է համապատասխանեցվեն 10 միավորային սանդղակին: Անցողիկ են համարվում 4 և ավելի միավորները:

Միավոր	Անվանում
10	«բացառիկ»
9	«գերազանց»
8	«շատ լավ»
7	«լավ»
6	«միջինից բարձր»
5	«միջին»
4	«բավարար»
3	«անբավարար»
2	«վատ»
1	«շատ վատ»

Առաջին դասարանում ընթացիկ և ամփոփիչ գնահատականներ չեն նշանակվում: Ընթացիկ գնահատումը կատարվում է բնութագրման միջոցով, իսկ տարեկան ամփոփիչ գնահատման նպատակով կազմվում է յուրաքանչյուր սովորողի աճի բնութագիր, որի ձևը, լրացման և սովորողների ծնողներին տեղեկացման կարգը սահմանվում է Կրթության և գիտության նախարարության կողմից: Միավորներով և ստուգարքային գնահատումը կիրառվում է սկսած երկրորդ դասարանից:

Տարրական դպրոցն ավարտողը ուսումնական տարվա վերջին լրացնում է հատուկ մշակված հարցարան, որը հնարավորություն է ընձեռում պարզելու ուսումնական գործընթացի արդյունքում նրա ձեռք բերած գիտելիքները, կարողություններն ու հմտությունները, ինչպես նաև մտագործունեության մակարդակը: Այս ստուգումների արդյունքներն ունեն միայն տեղեկատվական բնույթ:

Ներկայացնենք մեր կողմից տարրական դասարաններում փորձարկված մի թեստ:

ԹԵՍՏ

1

Տրված է շարադրանք, որում տառեր են բաց թողած:

Ալեհեր նկարիչը, ճերմակ կտավի առաջ նստած, նայում էր երժնեքանգ ծաղիկներին: Հետո սկսեց նկարել: Վրժինը նրա ձեռքին շարունակ բարձրանում ու իջնում էր, և կտավի վրա ասես կախարդական մի ուժով իրար հետևից բացվում էին ծաղիկները: Այդպես սպիտակ կտավը կենդանացավ, և եռօրը օրը նկարիչը հոգնած ձեռքով դրեց իր ստորագրությունը՝ «Մարտիրոս Մարյան»:

Դո՛ւրս գրիր ընդգծված բառերը՝ լրացնելով բաց թողած տառերը:

Պատասխան՝ _____

2

Ո՞ր շարքի բոլոր բառերն են հոմանիշներ.

- 1) ագահ, ժլատ, անկուշտ
- 2) զգայուն, երկյուղ, վախ
- 3) հափշտակել, կորցնել, փախցնել
- 4) սիրուն, չքնաղ, շիկահեր

3

Ո՞ր շարքի բոլոր բառերն են պարզ.

- 1) քաղաք, եղբայր, գրավոր
- 2) սեր, զգայուն, արջուկ
- 3) վարդ, մրգաշատ, սպասել
- 4) տետր, գարուն, աղջիկ

4

Գտի՛ր և դո՛ւրս գրիր նախադասության ենթական:

Ընկերոջս հայրական տունը գտնվում էր ձորի եզրին:

Պատասխան՝-----

5

Ո՞րն է պարզ համառոտ նախադասություն:

- 1) Երեխան ուրախ ժպտաց:
- 2) Հովիվը փաղաքշում էր գառնուկին:
- 3) Արքայադուստրը պիտի պարի:
- 4) Ձկնիկը ցանցն ընկավ:

6

Տրված են տառերով նշանակված նախադասություններ:

- ա.** Նրանց ստեղծագործություններում անմահանում է Տրդատի անունը, ինչպես անմահ են իր կառուցած երևելի տաճարները, եկեղեցիները:
- բ.** Նա այնքան համեստ էր, որ իր կառուցած տասնյակ տաճարներից գոնե մեկի վրա չի գրել կենսագրական մի պատառիկ:
- գ.** Մեծատղանդ ճարտարապետ Տրդատը Անիի Մայր տաճարի և շատ այլ կառույցների հեղինակ է:
- դ.** Փոխարենը նրա մասին գրել են թե՛ հայ, թե՛ օտար շատ անվանի մարդիկ:

Տառերի ո՞ր դասավորությունն է համապատասխանում այդ նախադասությունների տրամաբանական ճիշտ հաջորդականությանը:

- 1) բ, գ, ա, դ
- 2) գ, բ, դ, ա
- 3) ա, բ, դ, գ
- 4) դ, ա, գ, բ

7

Արտագրի՛ր և կետադրի՛ր նախադասությունը:

Երբ անձրևը դադարեց կանաչագարդ մարգագետնում գլխիկները բարձրացրեցին կարմիր դեղին ծաղիկները:

8

Որոշի՛ր, թե ինչ խոսքի մասեր են տրված նախադասության ընդգծված բառերը՝ դուրս գրելով դրանք համապատասխան սյունակներում:

Հին ժամանակներում, երբ ջրերում ոսկե ձկնիկներն էին ապրում, և ծառերի տերևները հասկանում էին թռչունների լեզուն, աքևը երբեք մայր չէր մտնում:

գոյական	ածական	բայ

9

Տրված է «Արջի խրատը» պատմվածքի համառոտ բովանդակությունը:

Մայր արջը բարձրացել էր ծառը և ընկույզ էր թափ տալիս, իսկ քոթոթները հավաքում էին թափված ընկույզները: Միայն սև քոթոթն էր, որ թափված ընկույզները ջարդում, մաքրում և ուտում էր: Տեսնելով այդ՝ մայր արջը իջավ ծառից, բռնեց սևուկին, պառկեցրեց և ահագին մի քար դրեց մեջքին ու նորից բարձրացավ ծառը:

Բավական ընկույզ թափելուց հետո մայր արջը իջավ ծառից և գնաց քարի տակից սևուկին հանելու: Քարը վերցրեց, բայց...

Շարունակի՛ր և ավարտի՛ր պատմվածքը:

Սևագրություն

Մաքրագրություն

Ճիշտ պատասխաններ

Առաջադրանքի համարը	Ճիշտ ընտրությունը	Ճիշտ պատասխանը	
1		առաջ, երվներանգ, վրձին, երրորդ	
2	1		
3	4		
4		տունը	
5	3		
6	2		
7		Երբ անձրևը դադարեց, կանաչագարդ մարգագետնում գլխիկները բարձրացրեցին կարմիր, դեղին ծաղիկները:	
8		գոյական	թռչուն
			տերև
			արև
		ածական	հին
			ոսկե
		բայ	հասկանում

Առաջադրանքների գնահատման չափանիշները

Առավելագույն միավորը 20 է:

Ընտրովի պատասխանով առաջադրանքներից (2, 3, 5, 6) յուրաքանչյուրի ճիշտ պատասխանի համար տրվում է 1 միավոր:

Կարճ պատասխանով առաջադրանքներից (1, 4, 7, 8) յուրաքանչյուրի ճիշտ պատասխանի համար տրվում է 1 միավոր:

1-ին առաջադրանքի յուրաքանչյուր ենթաառաջադրանքի համար տրվում է 1 միավոր (առավելագույնը՝ 4 միավոր):

7-րդ առաջադրանքը պահանջում է կետադրական երկու կանոնի իմացություն. յուրաքանչյուր կանոնի ճիշտ կիրառման համար տրվում է 1 միավոր (առավելագույնը՝ 2 միավոր): Յուրաքանչյուր սխալ դրված կետադրական նշանի համար հանվում է մեկական միավոր, եթե սխալների թիվը չի գերազանցում առավելագույն միավորը:

8-րդ առաջադրանքի յուրաքանչյուր ընդգծված բառի խոսքի մասը ճիշտ որոշելու համար տրվում է 1 միավոր (առավելագույնը՝ 6 միավոր):

Շնորհակալ պատասխանով առաջադրանքին (9) տրվող առավելագույն միավորը 3 է, որից՝

Ուղղագրություն, կետադրություն	չկա ուղղագրական կամ մեկից ավելի կետադրական սխալ	1 միավոր
Բառագործածություն	չկա սխալ կամ ոճական չպատճառաբանված բառագործածություն	1 միավոր
Շարադրանքի կառուցվածք	նախադասությունների միջև առկա է տրամաբանական կապ, շարադրանքը ունի ավարտուն տեսք	1 միավոր

Ամփոփիչ վերջնական միավորը ստացվում է թեստի առաջադրանքների պատասխաններից աշակերտի վաստակած բոլոր միավորների գումարից (առավելագույնը՝ 20 միավոր), որը բերվում է 10 միավորանոց համակարգի համաձայն հետևյալ սանդղակի.

Ամփոփիչ միավորները	Գնահատականը	Ամփոփիչ միավորները	Գնահատականը
1-2	1	11-12	6
3-4	2	13-15	7
5-6	3	16-17	8
7-8	4	18-19	9
9-10	5	20	10

Դրական են համարվում 4 (չորս) և ավելի միավորները:

Գրավոր աշխատանքի տևողությունը 45 րոպե է:

Տարրական դպրոցի 2-4-րդ դասարաններում «Մաթեմատիկա» առարկայից ուսումնառության արդյունքները միավորային (ամփոփիչ) գնահատմամբ պարզելու համար առաջարկվում է կիրառել ստուգման հետևյալ տեսակները՝

1. բանավոր հարցում,
2. թեմատիկ գրավոր աշխատանք,
3. գործնական աշխատանք,
4. կիսամյակային ամփոփիչ աշխատանք:

Ստորև բերված աղյուսակում ամփոփ տրված են 2-4-րդ դասարաններում «Մաթեմատիկա» առարկայից սովորողների ուսումնառության ընթացիկ արդյունքների միավորային գնահատման տեսակները՝ իրենց տևողությամբ, կիսամյակի ընթացքում գնահատման նվազագույն քանակով և կշռային գործակիցներով:

	Տեսակները	Տևողությունը	Քանակը կիսամյակի ընթացքում	Կշռային գործակիցը
1	Բանավոր հարցում Կարճ Ծավալուն	2 - 3 րոպե 3 - 5 րոպե	4 - 5 2 - 3	0,3
2	Թեմատիկ գրավոր աշխատանք Կարճ Ծավալուն	10 - 15 րոպե 15 - 20 րոպե 40 45 րոպե	4- 5 4 - 5 4- 5	0,3
3	Գործնական աշխատանք (տանը և դպրոցում)	2- 5 րոպե 2 - 5 րոպե	2- 3 3 - 4	0,1
4	Կիսամյակային ամփոփիչ աշխատանք	40 45 րոպե 80 - 90 րոպե	1	0,3

Բանավոր հարցումը իրականացվում է՝

առանձին աշակերտների բանավոր հարցումներով, աշակերտներին ուղղված հարցերով (բանավոր հաշվի ժամանակ),

տնային աշխատանքի բանավոր ստուգումով,

խմբային և համագործակցային աշխատանքների միջոցով,

խաղային տեխնոլոգիաների կիրառմամբ:

Թեմատիկ գրավոր աշխատանք

Ծավալուն թեմատիկ գրավոր աշխատանքը կազմակերպվում է յուրաքանչյուր թեման կամ որոշ թեմաներ անցնելուց հետո: Այն կազմված պետք է լինի տվյալ թեմայից կամ թեմաներից աշակերտներին ներկայացվող չափորոշչային պահանջների յուրացման աստիճանը ստուգող առաջադրանքներից:

Թեմատիկ ծավալուն գրավոր աշխատանքներում անհրաժեշտ է ընդգրկել 1-ին, 2-րդ, 3-րդ կարգի բարդության առաջադրանքներ, ինչպես նաև դժվարավուն առաջադրանքներ, որոնք պահանջում են ուսումնական նյութի խոր, հիմնավոր իմացություն:

Տարրական դպրոցի 2-ից 4-րդ դասարաններում կիրառվում են նաև համառոտ՝ կարճ ժամանակի համար նախատեսված թեմատիկ գրավոր աշխատանքներ, որոնց նպատակն է ստուգել ուսումնասիրած ենթաթեմաներից սովորողների ստացած գիտելիքներն ու կարողությունները:

Գործնական աշխատանքներ

Ըստ չափորոշչային պահանջների՝ նախատեսվում են տարբեր բնույթի գործնական աշխատանքներ: Դրանք երկրաչափական պատկերների կառուցումներն են, մեծությունների չափումը՝ երկարություն, զանգված, տարողություն, պատկերների բաժանումը մասերի և տրված պատկերներից նոր պատկերների ստացումը, հարցումների և դիտարկումների միջոցով հավաքած տվյալների գրանցումը, սենյակի կամ բնակարանի մոտավոր հատակագծի պատկերումը և այլն:

Գործնական աշխատանքը կարելի է հանձնարարել ինչպես տանը, այնպես էլ դպրոցում:

Կիսամյակային ամփոփիչ աշխատանք

Այս բաղադրիչի նպատակն է բացահայտել կիսամյակի ընթացքում ուսումնասիրած թեմաների յուրացումը, սովորողների փաստացի գիտելիքներն ու կարողությունները, հմտությունները: Այն պետք է ընդգրկի անցած թեմաների կարևոր հանգուցային հարցերը:

«Մաթեմատիկա» առարկայից սովորողի ընթացիկ առաջադիմության կիսամյակային գնահատականը ձևավորվում է ստուգման վերը նշված չորս տեսակներից նրա ստացած գնահատականների հիման վրա:

Աշակերտի ընթացիկ առաջադիմության կիսամյակային վերջնական գնահատականը հաշվարկելու համար առաջարկվում է դա անել հետևյալ կերպ. հաշվարկվում է յուրաքանչյուր բաղադրիչից աշակերտի ստացած գնահատականների միջին թվաբանականը, այն բազմապատկվում տվյալ բաղադրիչի կշռային գործակցով, ապա գումարվում այդ չորս բաղադրիչների վերջնական միավորները: Ամբողջ թիվ չլինելու դեպքում այն կլորացվում է: Եթե նկատվում է սովորողի առաջընթաց, ապա այն կլորացվում է հոգուտ աշակերտի: Ստացված միավորը կլինի աշակերտի կիսամյակային վերջնական գնահատականը:

5. Կիսամյակային ու տարեկան գնահատականների ձևավորումը

Սովորողի ընթացիկ առաջադիմության կիսամյակային գնահատականը ձևավորվում է ստուգման չորս տեսակներից նրա վաստակած գնահատականների հիման վրա: Ուսուցիչը ստուգման յուրաքանչյուր տեսակից սովորողի կիսամյակային գնահատականը որոշելիս հաշվի է առնում կիսամյակի ընթացքում նրա առաջընթացը: Գործածության է երաշխավորվում կիսամյակային գնահատականի ձևավորման կշռային գործակիցներով հաշվարկման մեթոդը:

Տվյալ առարկայից սովորողի կիսամյակային վերջնական գնահատականը ստանալու համար սահմանվել է ստուգման յուրաքանչյուր տեսակի կիրառման նվազագույն քանակը, այդ տեսակից սովորողի ստացած կիսամյակային գնահատականը:

Յուրաքանչյուր ուսումնական առարկայից որոշված է ստուգման յուրաքանչյուր տեսակից սովորողի վաստակած կիսամյակային միավորի ազդեցության չափը (կշռային գործակիցը) նրա կիսամյակային վերջնական գնահատականի ձևավորման վրա: Սովորողի ընթացիկ առաջադիմության կիսամյակային վերջնական գնահատականը որևէ առարկայից 10 միավորային սանդղակով հաշվարկելու համար առաջարկվում է գործածել հետևյալ բանաձևը՝ ԿԳ=կ1.Բ+ կ2.Գ+ կ3.Թ+ կ4.Կ:

Բանաձևում Բ, Գ, Թ և Կ մեծատառերով նշանակված են ստուգման տեսակներից սովորողների վաստակած կիսամյակային միավորները, կ1, կ2, կ3, և կ4-ով՝ դրանց համապատասխան կշռային գործակիցները, իսկ ԿԳ-ով՝ կիսամյակային գնահատականը:

Բ- բանավոր հարցում (կ1-գործակցով),

Գ- գործնական աշխատանք (կ2-գործակցով),

Թ-թեմատիկ գրավոր աշխատանք (կ3-գործակցով),

Կ-կիսամյակային ամփոփիչ աշխատանք (կ4-գործակցով):

Կշռային գործակիցները ոչ բացասական թվեր են, որոնց գումարը հավասար է 1-ի: Դրանք ստորակետից հետո մեկ թվանշան պարունակող տասնորդական կոտորակներ են: Եթե ստուգման որևէ տեսակ տվյալ առարկայից տվյալ դասարանում չի կիրառվում ամփոփիչ գնահատման ժամանակ, ապա ստուգման այդ տեսակի գործակիցը հավասար է 0-ի: Եթե ստուգման բոլոր տեսակներից կշռային գործակիցներով հաշվարկված կիսամյակային գնահատականը ձևավորող միավորների գումարը՝ ԿԳ-ն, ամբողջ թիվ չի կազմում, ապա կիրառվում է թվերի մոտարկման կանոնը: Կիսամյակային գնահատականների հիման վրա ձևավորվում է սովորողի տարեկան գնահատականը:

6. Ընթացիկ առաջադիմության գրանցումն ու գնահատականների հաշվառումը

Ընթացիկ առաջադիմության գրանցումների նպատակն է ունենալ հնարավորինս շատ տեղեկություններ սովորողի մասին, որը նախատեսվում է ուսուցչի, ծնողի, տնօրենի և այլոց համար: Ամփոփիչ և ուսուցանող գնահատումներից յուրաքանչյուրի արդյունքների գրանցման համար նախատեսվում է առանձին մատյան:

Ուսուցանող գնահատման արդյունքների գրանցումը

Ուսուցանող գնահատումների արդյունքների գրանցման համար նախատեսվում է հաստատված կից ձևի գրանցումների մատյան: Գրանցումների հիմք են հանդիսանում ուսուցողական աշխատանքների հետևյալ տեսակները՝

- բանավոր հարցում, քննարկումներ,
- գործնական,
- գրավոր,
- տնային:

Մատյանում գրառվում են կատարված ուսուցանող աշխատանքների արդյունքների եռամսկարդակ վերլուծությունները: Հետադարձ կապով նշվում են վերլուծություններից ստացված կարևոր եզրահանգումները և թերությունների շտկման աշխատանքները: Դրանք բխելու են հայտորոշիչ ստուգումներից, չափորոշիչային գիտելիքի մակարդակի հետազոտությունից և կրթության բովանդակային բաղադրիչների կատարմանը միտված ուսումնասիրություններից:

Մատյանում նշում են սովորողների, դասարանի ընդհանուր ձեռքբերումներն ու թերությունները, դասերին սովորողների մասնակցությունն ու ակտիվության աստիճանը: Ամփոփիչ եզրակացությունները գրվում են յուրաքանչյուր կիսամյակում մեկ անգամ: Ուսուցանող գրավոր աշխատանքների որակական բնութագրումները գրվում են սովորողի տետրում: Նախքան թեմատիկ աշխատանք անցկացնելը, առնվազն մեկ անգամ պետք է անցկացնել ուսուցանող աշխատանքների նշված բոլոր տեսակները: Որպես ուսուցանող գնահատումների գրանցումների այլընտրանքային ձև կարելի է օգտագործել սովորողի թղթապանակը:

<<Հանրակրթություն. գնահատում և
թեստավորում>>
տեղեկատվական - վերլուծական
հանդեսում հոդվածներ
տպագրելու կարգը

<<Հանրակրթություն. գնահատում և թեստավորում>> հանդեսը հրատարակում է գնահատման և թեստավորման հիմնախնդիրներին վերաբերող տեսական և կիրառական բնույթի հոդվածներ:

Հոդվածները պետք է ներկայացնել հայերեն (ընդունվում են նաև ռուսերեն և անգլերեն), մեկ օրինակով, համակարգչային շարվածքով (Microsoft Word ծրագրով, Sylfaen տառատեսակով և 12 տառաչափով):

Հոդվածի ծավալը չպետք է գերազանցի 15 էջը:

Օգտագործված գրականության հղումները հոդվածի տեքստում տրվում են քառակուսի փակագծերում, եթե մեջբերում է կատարվում, ապա նշվում է համապատասխան էջը, օրինակ՝ [12, էջ 23]:

Գրականության ցանկը բերվում է հոդվածի վերջում:

Խմբագրությունն ներկայացված նյութերը գրախոսվում են:

Խմբագրությունը հրատարակվող հոդվածների բնագրերը հեղինակներին չի վերադարձնում:

Յուրաքանչյուր հեղինակ խմբագրությունից անվճար կարող է ստանալ ամսագրի 2 օրինակ:

<<Հանրակրթություն. գնահատում և թեստավորում>> հանդեսի նյութերն օգտագործելիս հոդվածագիրը պարտավոր է տալ համապատասխան հղումներ:

Դպրոցներին անվճար առաքվում է մեկ օրինակ, որը պետք է պարտադիր գրանցվի դպրոցական գրադարանում:

Բովանդակություն

ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Հանրակրթության որակի գնահատման ազգային համակարգի
ձևավորման Հայաստանի փորձը 3

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ա. ՂԱԶԱՆՉՅԱՆ, Շ. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ, Ն. ՍԱՐԳՍՅԱՆ

2015 թ. պետական միասնական քննությունների արդյունքների
վերլուծություն..... 56

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ, Գ. ՉԱԼՈՒՄՅԱՆ

2015 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին ՀՀ հանրակրթական
ուսումնական հաստատությունների 11-րդ դասարաններում
<<Հայոց լեզու>> և <<Հանրահաշիվ>> առարկաներից անցկացված
արտաքին ընթացիկ գնահատման արդյունքների վերլուծություն
.....94

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՍՈՒՑՉԻՆ

Կ. ՀՈՎՍԵՓՅԱՆ

Գնահատման ձևերն ու տեսակները: Գնահատումը
հանրակրթական դպրոցի տարրական դասարաններում113

ՀԱՆԴԵՍՈՒՄ ՀՈԴՎԱԾՆԵՐ ՏՊԱԳԲԵԼՈՒ ԿԱՐԳԸ133

Տպագրված է Գ-նահատման և թեստավորման կենտրոնում:
Տպաքանակը՝ 1460 օրինակ, 134 էջ:
Ք. Երևան, Այգեստան 9/4, հեռ. 57.63.37
www.atc.am